ԷՋՄԻԱԾՆ

1982

Ժ

ԼՐԹ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Խոկտեմբեր

1982



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(10 հոկտեմբերի 1982 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Լուսովդ քով, Քրիստոս, ամենեքեան լուսատրեցար»:

«Քո լոյսով, Քրիստոս Աստված, բոլորիս լուսավորեցիր»:

Մեր համարյա ամենօրյա աղոթքներից մեկն է այս: Մենք հավատում ենք, որ մեր կյանքի բոլոր բարիքները և շնորհները, որ վայելում ենք այս անցավոր կյանքի ճանապարհին, արգասիքներն են այդ լույսի շնորհների:

Նախ Մենք ուզում ենք Մեր գոհունակությունը հայտնել, որ այսքան մեծ թվով հավաքվել եք այսօր մեր այս սուրբ տաճարի կամարների ներքո, Մեր գահակալության 27-րդ տարեդարձի առթիվ: Դուք տեսնում եք, որ այսօր սովորականից ավելի՞ հյուրեր ունենք նաև արտասահմանից, հայ Սփյուռքի տարածքից: Նրանք էլ մեր ժողովրդի և մեր Սուրբ Եկեղեցու հարապատ զավակներն են, որոնք եկել են այս անգամ երջանիկ մի առիթով՝ ներկա գտնվելու այն նորակառույց շենքի բացմանը, որը բարձրանում է Վեհարանի կողքին և որը կոչվելու է «Գանձատուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի», որ պիտի կրի անունը նվիրատուների՝ Ալեք և Մարի Մանուկյանների, Միացյալ Նահանգներից, որոնք այժմ այստեղ են գտնվում հարապատների և բարեկամների հետ միասին: Ահավասիկ բացառիկ մի առիթ, երբ հայաստանցիների և արտասահմանից եկած հոգևոր Մեր զավակների աղոթքները միատեղ պիտի բարձրանան դեպի երկինք:

«Լուսովդ քով, Քրիստոս, ամենեքեան լուսատրեցար»:

БИБЛИОТЕКА Академии Наук СССР

Սիրելի հավատացյալներ, ընթացիկ խոսակցության մեջ «լույս» ասելով հասկանում ենք նյութական լույսը, արևի լույսը, որ ամեն առավոտ լուսավորում է աշխարհը և կյանք տալիս աշխարհին, ծառ ու ծաղկին: Ճիշտ է, ծառն ու ծաղիկը և այն ամենը, ինչ որ կենդանի է մեր երկրագնդի վրա, իրենց սննդի տարրերը առնում են հողից, ջրից և օդից, սակայն այդ նյութական տարրերը սննդի վերածողը արևի լույսն է: Ահա թե ինչու արևի լույսը փառաբանվել է հնագույն ժամանակներից ի վեր, և մինչև այսօր բանաստեղծները երգում են արևն ու արևի լույսը: Մենք՝ հայաստանցիներս հատկապես, հպարտանում ենք մեր արևի լույսով, որովհետև տարվա բոլոր եղանակներին վայելում ենք արևի ճառագայթներն ու նրանց ջերմությունը: Ինչպես գիտեք, Հիսուս՝ Փրկիչը մեր, ասում է, թե մարդ չի ապրում միայն հացով, այլ նաև Աստուծո խոսքով: Հենց այդ Աստուծո խոսքը մենք նկատում ենք իմանալի լույս, մի լույս, որ նույն դերն է կատարում, այս անգամ, սակայն ոչ թե նյութական տարրերի վրա, այլ մարդկային հոգիների մեջ, որովհետև ինչպես ծառն ու ծաղիկը կարիք ունեն նյութական արևի լույսի, այնպես էլ մեր հոգիները կարիքը, ծարավն ունեն իմանալի լույսի, որով մեր մարդկային կյանքը հոգե-բարոյապես աճում, ծաղկում և պտղաբերում է: Մեր խոսքը վերաբերում է իմանալի լույսի ներգործությանը մարդկային հոգու վրա, նրա մտքի ու զգացումների վրա, որով նա պայծառակերպվում է վեհ ներշնչանքներով, որով մարդու հոգին արգասավորվում է, և մարդն իր կյանքի ճանապարհին դառնում է առաքինի ու ստեղծագործ, ջահակիրը բարոյական գաղափարների ու ստեղծում բպում արժեքներ, գիր-գրականությամբ, գիտությամբ, արվեստի գործերով բարձրանում է դեպի գաղափարական կատարները ոգեկանության: Մենք՝ քրիստոնյաներս, հավատում ենք, որ այդ հոգևոր սննդի աղբյուրը, հոգևոր լույսի աղբյուրը ինքը Հիսուս Քրիստոս է, որովհետև Քրիստոս՝ աշխարհի քաղաքակրթության հորիզոնի վրա առաջինը եղավ, որ ամբողջապես վեր հանեց արժեքը, հոգե-բարոյական արժեքը իմանալի լույսի, այն գաղափարական-հոգեկան ճառագայթումի, որ բեղմնավորում է մարդկանց մտածումներն ու զգացումները, ծաղկեցնում և պտղառատ է դարձնում մարդկային կյանքը ոգեկանության մակարդակի վրա:

Սիրելի հավատացյալներ, այս խորհրդածությունները մղված ենք կատարելու մանավանդ այսօր, երբ հենց երեկ տոնախմբեցինք հիշատակը մեր սուրբ թարգմանիչների, որոնց գլուխը գտնվում են երանելի Սուրբ Սահակ կաթողիկոսն ու Սուրբ Մեսրոպ Մաշտոցը, որոնք Քրիստոսի լույսի ներգործության ներքո սկսեցին իրենց մեծ գործը:

Այդ լույսը ճառագայթել սկսեց Դ դարի սկզբում Հայաստան աշխարհում, երբ հիմնվեց Հայաստանյայց Եկեղեցին, հայ ժողովուրդը դարձավ քրիստոնյա և իր սիրտը բացեց Ավետարանի լույսին:

Խիստ հատկանշական, գուցե եզակի երևույթ է ժողովուրդների պատմության մեջ այն, որ հայ ժողովուրդը իր հոգին բացեց Ավետարանի լույսին ճիշտ այն պահին, երբ ինքը նոր էր կազմավորվել և հասունության մոտեցել: Հայոց պատմությունը, անշուշտ, քրիստոնեությամբ չի սկսվում: Մենք երևի մոտ հազար տարվա նախապատմություն ունենք հեթանոսական շրջանում, սակայն պետք է ընդունենք առարկայորեն, որ մինչև քրիստոնեություն, հայ ժողովուրդը թեև ցեղախմբերի մի միաձույլ համախմբում էր, բավական կազմակերպված ընկերայնորեն, պետական կերպով, սակայն չուներ ոչ իր գիրն ու գրականությունը և ոչ էլ մշակույթի ազգային ձևերն ու ոճը: Հայ ժողովրդի հասունացումը արդեն սկսվել էր, սակայն տակավին փափուկ էին կաղապարները նրա հոգևկան կազմավորման: Եվ ահա ճիշտ այդ պահին այդ փափուկ կաղապար-

ների վրա ընկավ Քրիստոսի լույսը և վերջնական ձև, հոգի, ոճ տվեց նրանց: Շուրջ հարյուր տարիների ընթացքում կատարվեց այդ ներգործությունը, այդ խմորումը, որ իր գագաթնակետին հասավ Ե դարի սկզբին: Քրիստոսի լույսով հայ ժողովուրդը ստեղծեց իր գիրն ու գրականությունը, թարգմանեց Սուրբ Գիրքը, և սկիզբ առավ հայ ազգային մշակույթը իր արտահայտության բոլոր ձևերով՝ ճարտարապետությամբ, քանդակագործությամբ, նկարչությամբ, երաժշտությամբ: Իր վերջնական ձևը գտավ նաև մեր ժողովրդի գաղափարական-բարոյական դիմագիծը: Ավետարանի լույսը այդ ներգործումը կատարած է նաև պայծառացնելով մեր ազգին գիտակցությունը՝ մարդասիրության, արդարության և ազատության գաղափարներով:

Բոլոր այն գիտնականները, Հայաստանում թե արտասահմանում, որոնք պեղում, ուսումնասիրում են մեր անցյալը, պեղում են հայ ժողովրդի ոգեկանության աղբյուրները, ամեն քայլափոխին հանդիպում են Քրիստոսի լույսի ցոլքերին: Առանց այդ լույսի իմացումին կարելի չէ հայ ժողովրդին ճանաչել, կարելի չէ հայ մշակույթը հասկանալ:

Ահա թե ինչ պետք է հասկանանք հոգևոր իմաստով «լույս» ասելով, թե ինչ վճռական, բարենորոգչական, ստեղծագործ դեր է կատարել մեր ժողովրդի պատմության մեջ Քրիստոսի Ավետարանը: Անշուշտ ուրիշ ժողովուրդներ էլ, տակավին Ա դարում, իրենց սիրտը բացեցին Քրիստոսի լույսին, սակայն, եթե չենք սխալվում, միայն հայ ժողովուրդն էր, որ քրիստոնեությամբ կերտեց իր ոսկեդարը: Հելլենները, օրինակ, իրենց քաղաքակրթության և մշակույթի ամենաբարձր գագաթներին հասան Քրիստոսից հինգ հարյուր տարի առաջ: Ուրիշ ժողովուրդներ, ֆրանսիացիք օրինակ, շատ ուշ, ԺԷ դարում իրենց ոսկեդարն ապրեցին: Մեր ժողովրդի պարագային, իրար հանդիպեցին Քրիստոսի լույսը և մեր ոսկեդարը, մեկը մյուսից անբաժան, մեկը մյուսով շաղկապված, մեկը մյուսով պայծառացած:

Եվ այսօր էլ, սիրելի ժողովուրդ, թեև ժամանակները փոխվել են, և այլ պայմանների մեջ է ապրում հայ ժողովուրդը այստեղ թե արտասահմանում, այլ գաղափարախոսական հոսանքներն են ներգործում համաձայն մեր ժամանակների մարդկության առջև դրված հարցերի, սակայն խորքում ա՛յն, ինչ որ ստեղծվում է նոր, իր արմատներով կապված է մնում մեր նախնիների ստեղծարար ոգուն, որով մենք երջանիկ ենք, որ այսօր, մանավանդ մեր վերածնված մայր հայրենիքում, հայ ժողովուրդը իր մշակութաստեղծ առաքելությունը շարունակում է նույն ոգեշնչումով: Մեր ազգային հանճարի շնորհիվ մեր ժողովրդի բաղում կավակներ, վերջին վաթսուն և ավելի տարիների ընթացքում, փայլեցին իրենց ստեղծած մշակութային արժեքներով:

Եվ այս ճանապարհի վրա, Քրիստոսի լույսի ճառագայթումների ներքո, Հայաստանյայց Եկեղեցին շարունակում է իր առաքելությունը, իր հոգևոր, բարոյական ու դաստիարակչական առաքելությունը մեր ժողովրդի ծոցում, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում:

Ոգեշնչված մեր անցյալի ժառանգության արժեքներով, ոգեշնչված մեր կրոնական հավատքով և լուսավորված Քրիստոսի լույսով, մեր պարտքն է շարունակել մեր առաքելությունը մեր ժողովրդի ծոցում: Մենք վստահ ենք, թե այդ լույսը միշտ պիտի ճառագայթի հայ ժողովրդի երկնակամարի վրա: Թող Աստված իր հովանին հավետ տարածյալ պահի համայն մեր ազգի վրա՝ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, օգնական և պահապան մնա և հաջողությամբ պսակի նրա բոլոր լուսաշեն գործերը այժմ և հավիտյան, ամեն:



Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ «ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱՆՁԱՏԱՆ» ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ (11 հոկտեմբերի 1982 թ.)

«Եկայք շինեսցուք սուրբ վխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեկ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Գոհություն բարյաց պարգևատու մեր Աստուծուն, որ այսօր շնորհում է Մեկ օրհնյալ այս պահը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հողի վրա բացումը կատարելու այս նոր շինության, որը կոչված է դառնալու գանձատուն հայ եկեղեցական նշխարների և արվեստի գործերի:

Երջանիկ ենք, այո, որ այս շինության մեծանուն բարերար, Հ.Բ.Ը. Միության բավմավաստակ նախագահ տիար Ալեք Սանուկյանի հետ, առաջինները եղանք մուտք գործելու այստեղ ձեր բոլորի հետ միատեղ:

Մեր լույս հավատքի վեմ Միածնաէջ Մայր տաճարի կողքին, այստեղ պիտի պահպանվեն ու ցուցադրվեն մեր բավմադարյան պատմության մրրիկներից փրկված գանձեր՝ սրբական մասունքներ, ձեռագրեր, հին մատյաններ, սրբանկարներ, եկեղեցական արվեստի արծաթյա և ասեղնագործ հնագույն նմուշներ, հայ թագավորների դրամներ, նաև հայ արվեստի հին ու նոր գործեր, բոլորը անկորնչելի վկայություններ հայ ստեղծագործ հանճարի, հայ ոգեկանության:

Այս պահին Մեր մտածումը թռիչք է առնում դեպի հեռու-հեռուները մեր անցյալի, երբ սաղմնավորվեց այդ ոգեկանությունը, նույն այս հողի վրա, ուր մենք կանգնած ենք այսօր, չորրորդ դարի լուսաբացին Քրիստոսի Ավետարանի ճառագայթումով, և ապա մեկ դար հետո մեր ոսկյա դարից, երբ այդ ոգեկանու-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԻՐ ՀՈԳԵՎՈՐ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՎ ԵՎ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՎ ՈՒ ՊԱՏՎԱՐԺԱՆ ՀՅՈՒՐԵՐՈՎ

թյունը հոգի, մարմին ու կյանք կգեցավ ու ծիածանվեց Հայոց աշխարհի հորիզոնի վրա և մնաց դարեր ու դարեր շարունակ լուսավորող ու առաջնորդող անմար փարոս սերնդից սերունդ, մինչև մեր օրերը:

Մենք՝ այսօրվաններս, կավակներն ենք ծիածանված այդ ոգեկանության, որ մեր օրերին էլ մեր Եկեղեցու և ազգի գոյության իմաստն է, ապրելու նպատակը և իրավունքը, ճակատագիրը ու ապագան:

Մեր գիտակցության մեջ հառնում են ահա լույս կերպարները սուրբ լուսավորիչներ՝ Գրիգոր Հայրապետի, Մեծն Սահակի և Մեսրոպ եռամեծ վարդապետի, որոնց անմոռաց հիշատակին ենք նվիրում նաև այս նորակառույց Տունը, որդիական երախտագիտությամբ ու խոնարհությամբ, ու մի անգամ ևս ուխտ ենք անում հավատարիմ մնալու նրանց ժառանգությանը, նրանց տեսիլքներին, նրանց պատգամներին: Զի ազգերը կարժեն այնքան, ինչքան կարժեն նրանց հոգևոր գանձերը, նրանց ազգային մշակույթը: Առանց ազգային ոգեկանության և սեփական ինքնատիպ մշակույթի, չկան ազգություններ բառի ամբողջական իմաստով: Եվ այս է գաղտնիքը մեր Եկեղեցու և ժողովրդի գոյատևման, մանավանդ վերջին հազար տարիների ընթացքում, երբ նրանք, թեև տևապես հրո ճարակ դարձան մեր երկիրը ներխուժող անհոգի ուժերի սմբակների տակ և կորցրին գրեթե ամեն ինչ ու իրենց մարմինն իսկ նահատակեցին սնհավասար հերոսական մարտերում, սակայն տոկալով բոլոր այդ դաժան պայմաններին, շարունակեցին վառ պահել ջահը ազգային ոգեկանության, շարունակեցին պայքարը «վասն հաւատոց, վասն հայրենեաց», միշտ հավատարիմ Քրիստոսի պատգամին՝ «վհոգին մի՛ շիջուցանէք»:

Հայ ժողովրդի պատմությունը, աշխարհի ժողովուրդների պատմության հորիզոնի վրա, մի դյուցազներգություն է հանուն հոգեկանության և հանուն հայրենյաց ազատության: Նույնիսկ 1915 թվականի ցեղասպանությունը չընկճեց մեր ազգի կենարար հոգին ու ազատ ապրելու կամքը: Հայ ժողովուրդը գերեվարներից հարություն առավ «իր քաջ որդւոց սուրբ արիւնով», վերակերտեց իր նոր կյանքը, իր նոր երկիրը Սարդարապատի հաղթանակով և հայ պետության վերականգնումով, արդի մեր մայր հայրենիքով, ազատության, հարատև վերաշինության ու ազգային մշակույթի սքանչելի ծաղկումի հաղթական երթով, հայրենիք, որ բոլոր հայերիս մխիթարությունն է, հպարտությունը ու պարծանքը:

Անցնող վաթսուն և ավելի տարիների ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ևս իր ուժերը մեկտեղեց, իր վերքերը բուժեց և իր կարելին ի գործ դրեց իր մասնակցությունը բերելու նորաստեղծ հայ պետության ամրապնդման ու վերաշինության և ազատագրված իր կավակների հոգևոր կարթոնքի գործին: Երախտապարտ սրտով պարտավոր ենք հիշատակել Մեկ նախորդող երեք Հայրապետներին՝ Գևորգ Ե, Խորեն Ա և Գևորգ Զ երջանկահիշատակ կաթողիկոսներին, որոնք իրենց խաչը քաջաբար վերցրած, իրենց պարտքը կատարեցին հայրենաշինության և ազգային վերածնդյան առաջին չորս տասնամյակներին:

Հարգա՜նք, լո՛ւյս և օրհնությո՛ւն նրանց պայծառ հիշատակին:

Քսան և յոթը տարիներ առաջ, 1955-ի աշնանը, Աստված և մեր Մայր Եկեղեցին կամեցան, որ Մենք շարունակենք Մեր նախորդների առաքելությունը: Թե ի՞նչ հնարավոր դարձավ իրագործել Մեր գահակալության տարիներին, այդ մասին չէ որ պիտի խոսենք այստեղ: Սակայն թույլ տվեք միայն ասել, թե Մեր գահակալության շրջանի բազում շինարարական իրագործումների շարքը պսակվում է այսօր մի նոր իրագործումով, մի նոր կառույցով, որ բացառիկ նշա-

նակություն ունի թե՛ իր ճարտարապետական կատարելությամբ, թե՛ իր ներքին բարեկարդումով և թե՛ իր բովանդակությամբ ու նպատակադրումով:

«Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» կառույցով, մայր հայրենիքի հողի վրա բարձրացավ մի նոր հայկական հուշարձան ևս, ընծա Ս. Էջմիածնին, ընծա հայ ժողովրդին, ընծա գալիք սերունդներին:

Ցնծացեք և ուրախ եղեք, որ անցան վշտի դարերն հայոց, չկան այլևս ողբ ու որբեր, չկա այլևս սարսափը յաթաղանի:

Կա մի հայոց երկիր, խաղաղ ու անվտանգ, որ վերաշինվում է օրեցօր իր կավակների բաղուկներով ու հանճարով, հայրենի բարեխնամ պետության հովանու ներքո:

Կա ու ապրում և աճում է մի հայրենաբնակ ժողովուրդ, հպարտ, ինքնավստահ ու լավատես: Կա ու ծաղկում է մի նոր ազգային մշակույթ, նոր երգերով, նոր լույսերով, նախնյաց ոգեկանությամբ շաղախված, նույնպես «արժանի գրոց յիշատակի», ինչպես պիտի վկայեր մեր պատմահայր Խորենացին:

Հարգարժան տիար Մանուկյան և ավնիվ տիկին Մարի, Ձեր անունները կրող այս գանձատունը Մենք նկատում ենք Ձեր սրտի պարգևը ոչ միայն Մայր Աթոռիս, այլև մեր վերածնված հայրենիքին, հավերժական մեր Մայր Հայաստանին: Հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, հանուն մեր հայրենաբնակ ժողովրդի շնորհակալություն Ձեզ, սրտագին շնորհակալություն Ձեզ:

Թող Տերը օրհնի Ձեր կյանքն ու Ձեր ազգաշեն առաքելությունը և թող Ձեզ պարգևի կենաց խաղաղ ու արևոտ ևս բազում տարիներ, որպեսզի շարունակեք ուրախացնել մեր Մայր Եկեղեցին ու ժողովուրդը, որոնց հարազատագույն զավակներն եք հանդիսանում Ձեր պանծալի ազգանվեր իրագործումներով:

Այսօր Մեր պարտքը լրիվ կատարած չէինք լինի, եթե Մեր երախտագիտությունը չհայտնեինք նաև մեր հանրապետության պետական մարմիններին, որոնք բացառիկ հոգատարությամբ մեզ օժանդակեցին այս կառույցի շինարարական աշխատանքների ողջ ընթացքում, հատկապես շինանյութերի հայթայթման գործում:

Մեր խոսքի մեջ, քիչ վերև, այս շինությունը գնահատեցինք իբրև մի կառույց, որ «բացառիկ նշանակություն ունի, թե՛ իր ճարտարապետական կատարելությամբ, թե՛ իր ներքին բարեկարդումով և թե՛ իր բովանդակությամբ»: Մեր այս գնահատանքը ուղղվում է հատկապես այն անձնավորությանց, որոնք իրագործեցին Մեր առաջադրանքները. նախ շինության նախագծի հեղինակ շնորհալի ճարտարապետ Բաղդասար Արզումանյանին, կառուցողներ՝ Մայր Աթոռիս գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանին, ինժեներ Մկրտիչ Հովհաննիսյանին և ճարտարապետ Սեպուհ Թեքնեճյանին: Պարտք ենք համարում Մեր շնորհակալությունը հայտնելու նաև Մայր Աթոռիս ճարտարապետական հանձնաժողովին, որ ընդ նախագահությամբ ճարտարապետ պրոֆ. Վարազդատ Հարությունյանի և անմիջական մասնակցությամբ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի, տևապես հետևեց շինարարական աշխատանքների ընթացքին իր օգտաշատ խորհուրդներով և թելադրանքներով: Մեր գնահատանքի խոսքը նաև այս կառույցի վրա աշխատող տասնյակ հմուտ արհեստավոր վարպետներին և ժրաջան բանվորներին, որոնք կարգապահությամբ ու սիրով աշխատեցին ճշմարիտ հայ մարդու սրտացավությամբ, և իր լրումին հասցրին գանձատան կառուցումը:

Այսպիսով, ահա իրականություն դարձավ Մեր երազներից մեկը ևս:

Այսպիսով, նոր մի ջահ ևս վառվեց Սուրբ Լուսավորչի Տան մեջ:

Այսպիսով, մի նոր լույս ևս սկսեց ճառագայթել Երևանի լույսերի կողքին:

Ողջույն «Ալեք և Մարի Մանուկյան» նորակառույց գանձատան: Թող բարին Աստված օրհնի այս Տունը և պահպանի նրան անփորձ ու անսասան, միշտ լուսառատ, միշտ պայծառ, ի վայելումն ապագիս հայոց:

«Ի Տեառնէ եղև այս և է սքանչելի առաջի աչաց մերոց: Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմ. 117—24): Ամէն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ (12 հոկտեմբերի 1982 թ.)

«Հա՛յ մարդ, հիշիր դու միշտ երկաթ շերեփը Հայրիկի»:

Մեկ համար հոգեկան անհուն մխիթարություն է այս պահին ողջունել ու օրհնել լուսաբնակ Հայրապետ Մկրտիչ Խրիմյան Հայրիկի հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձանը, կառուցված Սուրբ Էջմիածնի հողամասի վրա, ոչ հեռու նրա շիրիմից, արդյամբ Մայր Աթոռիս բարերար տիար Միհրան Բուխանյանի, հարապատ կավակ Վասպուրական աշխարհի:

Խրիմյան Հայրիկը, կաթողիկոս Ամենայն Հայոց, հոգևոր դաստիարակ հայրենի հողը մշակող խոնարհ ժողովրդի, մարգարեաշունչ «նվագող վշտից հայրենեաց», բանաստեղծ և վարպետ կենդանի խոսքի, մարտի հրավեր կարդացող ռահվիրա ի խնդիր հայոց ապատագրության, վաղուց ի վեր պաշտամունքի առարկա է դարձել համայն հայության:

Հայ ապատագրական շարժման արյունոտ ճանապարհի վրա, Խրիմյան Հայրիկը իր ուրույն տեղն ունի, մանավանդ «երկաթե շերեփ»-ի խորհուրդով:

Ընդհանուր ապգաց պատմության մեջ տասնևիններորդ դարը նկատվել է բռնակալ պետությունների, հատկապես Օսմանյան կայսրության լծից բպում ապգությունների ապատագրման դար: Այդ ճանապարհի վրա պատմական է 1878 թվականը, երբ ռուս-թուրքական պատերազմից հետո, Բեռլինում վեհաժողով էր գումարվում, որոշելու համար բախտը Օսմանյան կասրության լծի տակ հեծող մի քանի ապատատենչ ապգությունների:

Այդ օրերին հայերը ևս Բեռլին ուղարկեցին իրենց պատվիրակներին, որպեսզի վեհաժողովին ներկայացնեն հայոց արդար դատը: Պատվիրակությունը գլխավորում էր Մկրտիչ Խրիմյան արքեպիսկոպոսը:

Պատվիրակության մեկնումի պահին հարց տվեցին Խրիմյան Հայրիկին, թե ի՞նչ լեզվով պիտի խոսի Բեռլինում, քանի որ, բացի հայերենից, նա այլ լեզու չգիտեր: Խրիմյան Հայրիկը պատասխանեց. «Ես պիտի գնամ Բեռլին, պիտի ներկայանամ վեհաժողովին ու պիտի արտասվեմ»: Նա հավատում էր, թե իր արտասուքով պիտի շարժեր խիղճը աշխարհի մեծամեծների:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

Եվ Խրիմյան Հայրիկը գնաց Բեռլին ու արտասվեց, սակայն մեծամեծների խիղճը չշարժվեց: Վերադարձին, հայոց դարավոր վշտի նվագող Հայրիկը, իր առաքելության մասին պատմեց հետևյալը. «Ժողովո՛ւրդ հայոց, Բեռլին գնացինք, ներկայացանք վեհաժողովին ու տեսանք, որ ժողովի մեջտեղում դրված էր մի մեծ կաթսա՝ մեջը լիքը հարիսա: Բոլոր ազգերը իրենց ձեռքերում երկաթե շերեփներ բռնած՝ իրենց բաժին հարիսան էին վերցնում: Մենք հայերս էլ մեր շերեփը մտցրեցինք հարիսայի մեջ, սակայն այն այրվեց մեր ձեռքից ու հալվեց կաթսայի մեջ: Մեր շերեփը թղթից էր»:

Հայ ազգը այդ օրվանից մանավանդ, հասկացավ երկաթե շերեփի պատմության իմաստը: Հետագա պատմական դեպքերը, հայերի հերոսական մարտընչումներն ու խարխափումները այլ բան չէին, եթե ոչ որոնումը մի երկաթյա փրկարար շերեփի, որ մի հուժկու հարվածով կարողանար փոխել սև ճակատագիրը հայ ազգի:

Եվ բավում հուսախաբություններից ու ողբերգություններից հետո, պատմական հեղաշրջումների գրեթե անսպասելի դասավորումով, վերջապես հնչեց փրկության ժամը հայոց, երբ մեր ժողովուրդը ձեռք բերեց երկաթյա իր շերեփը, իր քաջ որդիների սուրբ արյունով, Սարդարապատի ճակատամարտում և նորաստեղծ հայկական պետության վերջնական ամրապնդումով 1920 թվի աշնանը:

Այո՛, պատմական իրողություն է, որ Սարդարապատի հաղթանակը և 1920-ին ռուսաց կորքի հարվածը մեր դարավոր թշնամուն, հանդիսացավ մեր ժողովրդի այն երկաթյա շերեփը, որով նա ձեռք բերեց իր պետական անվտանգությունը և իր կյանքի ծաղկումը, որով թռիչք առավ մշակույթ ստեղծող իր ազգային հանճարը:

Ահա խորհուրդը երկաթյա շերեփի մեր օրերում: Ահա իմաստը այս հուշարձանի, մանավանդ այս տարի, երբ տոնախմբվում է վաթսունամյակը Խորհրդային Միության ազգային հանրապետությունների համադաշնակցության կազմավորման, որի լիիրավ անդամն է նաև Հայաստանի Հանրապետությունը:

Խրիմյան Հայրիկը այսօր մեզ պատգամում է՝ հայե՛ր, պի՛նդ բռնեցեք ձեր ձեռքի երկաթյա շերեփը, հաստա՛տ մնացեք այն վեմի վրա, ուր կանգնած եք այսօր, վա՜յ այն ազգին, որ իր հույսը դնում է հեռավոր մեծամեծների խղճի վրա:

Մենք վստահ ենք, թե այսպես պիտի խոսեր ինքը՝ Խրիմյան Հայրիկ, եթե այսօր մեր մեջ գտնվեր: Բայց նա մեր մեջ է այսօր և մեր մեջ պիտի մնա միշտ և ցույց պիտի տա նաև հետագա սերունդներին ճանապարհը երկաթե շերեփի, որո՛վ միայն մեր ժողովուրդը պիտի կարողանա պաշտպանել ու պահպանել իր հայրենի արդի պետությունը և այդ վեմի վրա հաստատ ու ամուր կանգնած, պիտի կարողանա իրականացնել բոլոր իր արդար երազանքները:

Նա պատգամում է նաև՝ «Ես կթողում ձեզ մեր հայրենի ժառանգություն, դաշտեր ու հողեր...:

Թե մեռնիմ, երթամ գերեվման, և այլևս չկարեմ խոսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա կթողում ձեզ գիրս իբրև մշտախոս կտակ ու հիշատակ, որուն միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողեն չբաժնվի:

Այսպես, Թոռնիկ, հողն պետք է կենաց և մահու օր, սորա համար Պապիկն զքեզ հողին հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես զհողն, չթողուս որ ուրիշներ ձեռքեդ հափշտակեն, դու անհող մնաս»:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա, նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7): Ամեն:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին, ժամը 11-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը ընդունում է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին և Մայր Աթոռի հյուրերին՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Ալեք Մանուկյանին, Բարեգործական Միության ԱՄՆ-ի, Կանադայի, Լատինական Ամերիկայի բաժանմունքների ղեկավարներին, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին և հոգևորական ու աշխարհական այլ անձանց:

Մեծարգո նախագահ Ֆ. Սարգսյանը ողջունում է բարձրաստիճան հյուրերին և, բարձր գնահատելով Վեհափառ Հայրապետի հայրենասիրական ու խաղաղասիրական գործունեությունը, քաջառողջություն և նոր հաջողություններ է մաղթում Նորին Սրբությանը՝ Նրա ակնիվ առաքելության ճանապարհին: Մեծարգո նախագահը գնահատանքի ջերմ խոսք է ուղղում նաև տիար Ալեք Մանուկյանին՝ սփյուռքահայության ծոցում նրա ծավալած հայրենասիրական և կրթական ու հայապահպանման գործունեության համար:

Վեհափառ Հայրապետը և պրն. Ալեք Մանուկյանը իրենց պատասխան խոսքերով շնորհակալություն են հայտնում ջերմ ընդունելության համար և սրտագին բարեմաղթություններ անում մայր հայրենիքի հետագա է՛լ ավելի ծաղկման համար:

Բարեկամական մթնոլորտում տեղի ունեցած սույն ընդունելությանը ներկա էին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ Վ. Հ. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը «Հրապդան» հյուրանոցում ճաշկերույթ է տալիս ի պատիվ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության 27-րդ տարե-

դարձի և այդ առթիվ Հայաստան ժամանած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Ալեք Մանուկյանի ու նրան ընկերակցող անձանց:

Ճաշկերույթի ընթացքում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը ջերմորեն շնորհավորում է Վեհափառ Հայրապետին՝ Նրա գահակալության 27-րդ տարեդարձի առթիվ, ապա բարիգալստյան խոսք է ուղղում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Ալեք Մանուկյանին, նրա տիկնոջը և մյուս հյուրերին:

Պարոն Ռուբեն Պարսամյանի խոսքից հետո ելույթ է ունենում Հայոց Հայրապետը: Նա մասնավորապես նշում է, որ այս անգամ Իր գահակալության տարեդարձը հատուկ նշանակություն է ստանում «Ալեք և Մարի» գանձատան և Խրիմյան Հայրիկի աբյուր-հուշարձանի բացմամբ:

Նորին Սրբությունը ջերմ հուզումով վեր է հանում տիար Ալեք Մանուկյանի բացառիկ անձնավորությունը իբրև հարապատ ու հավատավոր կավակը Հայ Եկեղեցու, իբրև վաստակաշատ նախագահը Հ. Բ. Ը. Միության, իբրև հայ հայրենիքի գերագույն շահերի պաշտպան հասարակական գործիչ և իբրև ազնիվ ու առաքինի, իր շուրջ միայն լույս և բարիք բաշխող մարդ:

Ի պատասխան իրեն ուղղված գնահատանքի այս ջերմ խոսքերի Բարեգործական Միության նախագահ Ալեք Մանուկյանը հանդես է գալիս հետևյալ ճառով.

«Սիրելի բարեկամներ, չափազանց խոնարհ կզգանք մենք զմեզ հարգանքի այն արտահայտությանց դիմաց, որոնք ուղղվեցան մեզի, հայրենիք հասնելու առաջին վայրկյանեն սկսյալ, հայրենաբնակ ժողովուրդեն, թե՛ պետական անձնավորությանց և թե՛ Վեհափառ Հայրապետին կողմե:

Վստահաբար, բոլոր ազնիվ խոսքերը և գնահատանքի ջերմ արտահայտությունները մեր միջոցավ կերթան Սփյուռքի մեր հարազատ զանգվածներուն, որոնց սիրտը կբաբախե հայրենիքի ջերմ սիրով: Գիտենք, թե սփյուռքահայությունը կարևոր տեղ մը ունի ձեր մտածումներուն մեջ, խոսուն վկայություններով դուք հաստատած եք մանավանդ, թե սփյուռքահայությունը լրացուցիչ մեկ մասը կկազմենք մեր հայրենաբնակ ժողովուրդին: Ամեն սփյուռքահայ հոգևոր քաղաքացին է իր հայրենիքին, անբաժանելի մեկ մասնիկը անոր: Տասնամյակ մը առաջ էր, երբ եկանք հայրենիք՝ համբուրելու համար մեր նախահայրերուն սրբազան հողը: Երջանիկ էինք մեր ժողովուրդը իր ապահով օրրանին մեջ տեսնելով: Սակայն այսօր երջանիկ և մասնավորաբար հպարտ կզգանք, որ մենք զավակն ենք ավելի զքեղացած, ավելի զորացած և ծաղկած հայրենիքի մը:

Ամեն սփյուռքահայ ուրախության զգացումներով կդիմավորե իր հայրենիքի հզոր վերելքը, և մենք բացառություն չենք կրնար կազմել, մանավանդ, երբ մեր դիմաց կգտնենք ձեզ՝ ճշմարիտ հեղինակները այդ մեծագործության:

Եթե իրավ է, որ մեր նախահայրերու հոգիները կսավառնին մեր գլխուն վերև, ապա ուրեմն անոնք բարի և ազնիվ նախանձով վերեն պիտի նային մեր սերունդին, որովհետև դարերու անհնարին զրկանքներեն ետք մեր սերունդն է, որ բախտավորություն ունեցավ հայրենիքը տեսնելու:

Քանի՜ սերունդներ հայրենիքի կարոտով մեկնեցան այս աշխարհեն, ու քանի՜ սերունդներ հայրենիքի երազին համար պայքարեցան ու նահատակվեցան:

Եվ այսօր մեր սերունդն է, որ կտեսնե հայրենիքի վերականգնումն ու վերկայելե իրականացումը մեր հայրերուն դարավոր երազին...

Այսօր հայը տերը դարձած է իր հայրենիքին՝ իր պատմական հողերու մեկ բեկորին վրա: Եվ թե ան ունի պետական կյանք՝ իր պաշտոնական լեզվով, ծաղկող մշակույթով ու գրականությամբ:

Մեր հայրերը և անոնց հայրերը երազեցին այսպիսի խաղաղ օջախ մը ունենալ՝ պահպանելու և ծաղկեցնելու մեր ազգային մշակույթը, բայց դժբախտաբար արյունն ու աքսորը եղան իրենց բաժինը: Վեց դարեր ամբողջ հայ ժողովուրդը զրկված մնաց պետական կյանքե: Ու երբ երկու տարի անտեր Հայաստանը ունեցանք, ան ոտքի կոխան դարձավ իր դարավոր թշնամիներուն՝ շեշտելով այն իրողությունը, թե մեր փոքրիկ երկրի վերապրումը կարելի է ապահովել միայն հզոր պետության մը պաշտպանությամբ:

Բազմաչարչար հայության այս վերջին կռվանը ունեցավ իր ճակատագրական պահերը, մանավանդ, երբ ստորագրվեցավ Ալեքսանդրապոլի դաշնագիրը: Սակայն բախտի անիվը, որ միշտ աղետին ուղղությամբ դարձած էր, անգամի մը համար դարձավ ի նպաստ մեր ժողովուրդի, ու մեր փոքրիկ երկիրը փրկվեցավ վերջնական կործանումեն:

Ահա 62 տարիներե ի վեր ապահով վերելք մը կապրի մեր հայրենիքը: Երկրորդ աշխարհամարտը ցնցեց երկիրը, սակայն չկրցավ զայն կործանել: Ասիկա ինքնին նշանակալից երևույթ մըն է. անցյալին՝ նման ցնցումներ կը-կործանեին մեր երկիրը և ավերակի վրա ավերակ կդիզեին:

Արտասահմանը չկրցավ գործնապես մասնակցիլ հայրենաշինության գործին՝ բացի առաջին տարիներու իր օժանդակութենեն: Հայրենի ժողովուրդն է, որ իր բազուկներով ու եղունգներով կերտեց այս երկիրը և հասուց այսօրվան բարգավաճ ու շենշող վիճակին:

Այս բարգավաճման մեջ իր հիմնական ու նշանակալից դերը ունի նաև ֆիզիկական ու քաղաքական այն ապահովությունը, զոր Հայաստան վայելեց վերջին վաթսունամյակին, շնորհիվ ռուս ժողովուրդի պաշտպանության և օգնության:

Մենք արտասահմանի մեջ քաղաքական ու գաղափարական տարբեր դրության մը ներքև կապրինք, սակայն չենք կրնար քաղաքական ժամանակավոր չափանիշներով դատել Հայաստանի գոյության իմաստը: Մեզի համար ամենեն թանկագինը ու նվիրականը մայր հայրենիքի կենդանի գոյությունն է, և այդ երևույթը մենք կտեսնենք իր պատմական ընթացքին մեջ: Հակառակ գաղափարական ամեն կարգի վերապահությանց՝ արդի ժամանակներու պատմությունը ցույց տվավ, թե ներկա դրությունը ամենեն ապահով գոյավիճակը երաշխավորած է մեր երկրին ու մեր ժողովուրդին համար: Նույնիսկ մեր անկախ թագավորության շրջաններուն, երբ հայությունը բարոր ու մշակութային աճումով կյանք մը կարողացավ ստեղծել, ներխուժումներու սարսափը անպակաս էր մեր սահմաններուն վրա:

Եթե մեր բազում նահատակություններն ու տառապանքները բան մը սորվեցուցին մեզի՝ ատիկա քաղաքական իրապաշտությունն է: Բարեբախտաբար, մեր փոքրիկ երկիրը 60 տարիներե ի վեր կվայելե պաշտպանությունն ու օժանդակությունը ռուս ազնիվ ժողովուրդին: Եվ ան, որ կսիրե Հայաստանը և կգուրգուրա անոր գոյության վրա, չի կրնար չհարգել զայն պաշտպանող ձեռքը:

Երբ կնայինք այսօր աշխարհի քարտեզին, կճմլվի մեր սիրտը, որովհետև խռովությունը ամեն տեղ է. սահմաններ կջնջվին, հողամասեր կգրավվին, կանգվածներ կբնաջնջվին, և արյունը կհոսի առատորեն: Այս վրդովիչ պատ-

կերի դիմաց՝ ապահով կմնան, սակայն, Հայաստանի նահմանները. ու կյանքը կշարունակվի իր խաղաղ ու ստեղծագործ ընթացքով:

Ահա այս է ոգեշնչող պատկերը մեր հայրենիքին, և արդեն այս է կարևորը. դրոշակի գույնին ու վարչաձևին մասին հարուցված վեճերը արտասահմանին մեջ աննշան կդառնան, երբ կանգուն է հայոց հայրենիքը:

Աննախընթաց երևույթ է, որ վերջին վաթսունամյակի աշխարհացունց բախումներուն մեջ թիվ մը հող անգամ չպակսեցավ մեր երկրեն: Նորօրյա հրաշք կարելի է համարել այս իրողությունը:

«Տարբեր ես դուն մեր երակեն»,—ըսած է Սփյուռքը խորհրդանշող ամենեն սիրելի բանաստեղծը՝ Վահան Թեքեյանը, և ապա անմիջապես ավելցուցած է. «ավելի լա՜վ...»:

Այս օրվան ամուր և անխորտակելի Հայաստանը խարիսխն է մեր ապագա մեծ երակներուն: Անոր իրականությամբ է, որ կրնանք իրագործել մեր ապագայի երակները:

Դուք, սիրելի հայրենակիցներ, կկերտեք ոչ միայն ձեզի համար, այլ նաև մեզի համար, սփյուռքահայերուս համար: Արդեն հայրենիքի բարերար ձեռքը կհասնի ամեն տեղ, հայրենիքի շունչը կերաշխավորե սփյուռքի գոյատևումը: Ան կհասնի մեզի իր արվեստագետներով, իր դասագրքերով, իր երգերով ու պարերով:

Սփյուռք-հայրենիք մշակութային ու հոգեկան կապերու պահպանության գործին մեջ անփոխարինելի եղած է դերը Սփյուռքահայ կոմիտեին. ան հայրենիքը մոտեցուցած է Սփյուռքին և Սփյուռքը՝ հայրենիքին: Եվ այդ փոխադարձ ճանաչողությունն ու սերն են, որ պահպանած են հայ ժողովուրդի միասնականության ու մեկության գաղափարը:

Կուզենք այսօր մեր սրտագին շնորհակալությունները հայտնել Սփյուռքահայ կոմիտեին և անոր միջոցավ՝ նաև հայրենի պետությանը: Առանց հայրենի իրականության և օժանդակության, կարճ պիտի ըլլա Սփյուռքի պատմությունը, և աննպատակ՝ անոր գոյապայքարը: Մենք կպահենք Սփյուռքը այսօրվա ու վաղվա Հայաստանին համար:

Մենք հպարտությամբ և կորացող հավատքով հետևեցանք նաև Ս. Էջմիածնի դարավոր Աթոռի ծաղկումին: Եվ այսօր կշնորհավորենք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին հայրապետության 27-րդ տարեդարձը և կմաղթինք Իրեն երկար ու երջանիկ տարիներ:

Երբ Վազգեն կաթողիկոս արտասահման կուգա, ամբողջ Հայաստանն է, որ կբերե Ան Սփյուռքի տարահալած ժողովուրդին:

Ձեր վաթսուն տարիներու հաջողությունները, հաղթանակները, մշակութային և ազգային կոթողային իրագործումները մեզ կբերեն այն անխախտ համոզումին, թե վերջնականապես հարություն առած է հայոց դարավոր երկիրը և թե հավերժ է Հայաստանի կյանքը:

Մեր այս այցելությունը հոգեկան հարուստ և անփոխարինելի ապրումներով համակեց մեր հոգիները: Հայրենի պետությունը, մշակույթի գործիչները, Վեհափառ Հայրապետն ու մեր հարազատ ժողովուրդը ամեն ինչ կընեն, որպեսզի անմոռանալի ուխտագնացության մը վերածվի մեր այս ճանապարհորդությունը դեպի մայր երկիր: Զգացված ու երախտապարտ ենք բոլորս:

Մեր կողմե, ինչպես նաև մեզի ընկերակցող բոլոր հյուրերուն կողմե կուզեմ իմ խորին շնորհակալությունները հայտնել բոլորին ու կոչել ամբողջ սրտով.

Թող անսասան մնա մեր սուրբ հայրենիքը, և հավերժ ապրի մեր ժողովուրդը»:



ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ «ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱՆՁԱՏԱՆ» ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ ՇԵՆՔԻ ԵՎ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 27-րդ տարեդարձի տոնակ տարության արարողությանը կուգադիպեցին երկու անմոռաց հանդիսություններ: Բացվեցին Վեհարանի մոտ կառուցված «Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը» և Մայրավանքի շրջափակի հյուսիսային կողմում, Եղեռնի կոհերին նվիրված խաչքար-հուշարձանի կողքին՝ Մկրտիչ Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանը:

Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ էին ժամանել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, Ամերիկայի Միացյալ Նահանգաց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը, ինչպես նաև Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը:

Նույն ուրախ առիթով, Վեհափառ Հայրապետի հրավերով, որպես պատվավոր հյուրեր Մայր Աթոռ էին ժամանել Գանձատան բարերար, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս նախագահ տիար Ալեք Մանուկյանը՝ իր հարգելի տիկնոջ՝ Մարի Մանուկյանի, դստեր՝ տիկին Լուիզ Սիմոնի և թոռան՝ օրիորդ Քրիստին Սիմոնի հետ, Մայր Աթոռի բարերարներ՝ տեր և տիկին Էդվարդ Մարտիկյանը (ԱՄՆ), տիար Ճորճ Քյուրքճյանը, տիկին Աստղիկ Քյուրքճյանը (Լոնդոն), տեր և տիկին Մելանգթոն Արսլանյանը (Բելգիա), տեր և տիկին Հրայր Հովնանյանը, տեր և տիկին Միհրան Բուխանյանը (ԱՄՆ), տիկին Էլիզ Զրբաշյանը (Մարսել), տիար Ժիրայր Մանասյանը (Փարիզ), տիար Ժան Թյությունջյանը (Ֆրանսիա) տիար Մկտրիչ Շելեֆյանը (Ժնև), Շավարշ Սևհոնքյանը (Լոզան), տիար Արշավիր Կլորիկյանը (Ֆրանսիա), ինչպես

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՏՐՈՒՄ Է «ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱՆՁԱՏԱՆ» ՄՈՒՏՔԻ ԺԱՊԱՎԵՆԸ

նաև հայագետ պրոֆ. Ժան Պիեռ Մահեն՝ իր տիկնոջ հետ, սփյուռքահայ ազգային հասարակական գործիչներ պրոֆ. Բարունակ Թովմասյանը, տիար Հրաչ Սեդրակյանը, տիար Հայկաշեն Ուլունյանը՝ իրենց տիկինների հետ, տիար Գևորգ Այվազյանը և ուրիշներ:

Հյուրերի հետ Մայր Աթոռ էին ժամանել ԱՄՆ-ի, Կանադայի, Լատինական Ամերիկայի և հայկական այլ գաղթօջախների մի շարք կազմակերպությունների ղեկավարներ, հասարակական գործիչներ և պաշտոնական այլ անձինք:

ԺԱՄԱՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Հոկտեմբերի 2-ին, շաբաթ օրը, հարգարժան հյուրերին ընդունում է Վեհափառ Հայրապետը և տալիս Իր օրհնություններն ու բարի մաղթանքները:

Ապա հարգելի հյուրերը այցելում են Մայր տաճար, Հին ու Նոր Վեհարանների թանգարանները և դիտում այնտեղ ցուցադրված հայ եկեղեցական արվեստի թանկարժեք նմուշները և այլ արժեքավոր իրեր:

Հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, մեծարգո հյուրերը Մայր տաճարում նելլկա են լինում սուրբ պատարագի արարողությանը, որից հետո նրանք Մայր Աթոռի միաբանության հետ Մայրավանքի սեղանատանը մասնակցում են սիրո ճաշի:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Հոկտեմբերի 4-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ հյուրերը ծաղկեպսակով և ծաղիկներով այցելում են Հայ Նահատակների հուշարձան-կոթող:

Հավերժական կրակի շուրջ բոլորված, լուռ և ինքնամփոփ, նրանք խորին հուզումով ունկնդրում են կոմիտասյան մեղեդիները, որոնք կաթիլ առ կաթիլ լցնում են բոլորի հոգին:

Տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵ

Հոկտեմբերի 5, չորեքշաբթի: Այսօր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի դահլիճում հավաքվել են մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության աշխատողներ, կոմիտեի անդամներ, որոնք եկել են՝ հանդիպում ունենալու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Ալեք Մանուկյանի և նրան ընկերակցող անձանց հետ:

Բացման խոսքով հանդես է գալիս Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը:

Այնուհետև Վարդգես Համազասպյանը իր խոսքի մեջ վեր է հանում Հ. Բ. Ը. Միության նախագահ Ալեք Մանուկյանի անձնավորությունը, որին թե՛ մայր հայրենիքում և թե՛ Սփյուռքում ճանաչում և հարգում են բոլորը՝ իր անձնվեր գործունեության և հայրենասիրության համար:

Ապա կոմիտեի նախագահը Ալեք Մանուկյանին հանձնում է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ուղերձը Բարեգործականի 75-ամյակի առթիվ:

Библиотека Академии Наук

Հանդիպման ընթացքում ողջույնի խոսքով հանդես են գալիս բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի փոխտնօրեն Բաբկեն Չուգասպյանը և Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Խըռլոպյանը:

Այնուհետև ելույթ է ունենում Ալեք Մանուկյանը:

«Այս հավաքույթն ինձի համար անակնկալ մըն էր,—ասում է նա,—այսքան բազմություն և այսպիսի մեծ ծավալով ցերեկույթ մը չէի սպասեր: Ուրախ եմ Հայաստան գտնվելուս համար: Եվ պիտի ջանամ ավելի երկար ապրիլ, որպեսզի վերստին գամ Հայաստան: Շնորհակալ եմ Բարեգործականի և իմ անձիս մասին ըսված բարի խոսքերուն համար:

Բարեգործականը Սփյուռքի ամենամեծ մարդասիրական և կրթական կազմակերպությունն է: Կան նաև բազմաթիվ ուրիշ կազմակերպություններ, որոնք նույնպես կաշխատին ազգապահպանումի համար: Եթե հնարավոր ըլլա հաջորդ քանի մը տարիներուն այս բոլոր կազմակերպություններու ներկայացուցիչներու մասնակցությամբ հավաք մը կազմակերպել՝ որդեգրելով Սփյուռքի հայապահպանության որոշակի ծրագիր մը, այնպես որ բոլոր միությունները լրացնեն միմյանց գործը, յուրաքանչյուրն իր կարողության չափով, մեր կարծիքով Սփյուռքի գոյատևման, հայապահպանության ի խնդիր ճիգերն ու միջոցները ավելի կարդյունավորվին այս ձևով: Որովհետև ազգապահպանման գործը Սփյուռքի մեջ հետզհետե ավելի կդժվարանա: Հին սերունդը կա՛մ արդեն մեկնած է այս աշխարհեն, կա՛մ ալ հեռանալու վրա է: Այս սերունդը հոգեկան ուրիշ կերտվածք ուներ, ամուր կապված էր իր հայրենի հողին, ավանդություններուն, լեզվին: Եղեռն տեսած, ցավ ու տառապանք տեսած սերունդ էր: Դժբախտաբար նոր սերունդը հայրենի հողեն հեռու մեծցավ և հին սերունդին պես չզգար զայն: Բայց մենք կարելին կընենք նոր սերունդը մեզի հետ պահելու, մանավանդ զայն ներկա և ապագա Հայաստանի համար պահելու ի խնդիր: Շատ կարևոր է մայր հայրենիքի գործակցությունը այս գործին մեջ: Շատ կարևոր է սփյուռքահայ երիտասարդներու այցելությունը մայր հայրենիք: Ականատես եղած ենք դեպքերու, երբ հայ միջավայրե հեռացած երիտասարդը հայրենիք այցելութենեն ետքը հրաշալի հոգեփոխություն մը կրած է, հայացած, խանդավառված իր հայությամբ և ընդգրկված հայկական հասարակական կյանքի մեջ: Դպրոցները հայապահպանության գլխավոր կռվաններն են: Ամերիկայի մեջ տարվետարի հայկական ամենօրյա դպրոցներու թիվը կավելնա: Միայն այս տարի երեք նոր դպրոց բացվեցավ: Նյութական մեծ դժվարություններով կպահվին այս դպրոցները: Ունինք նաև որակյալ ուսուցիչներու և տնօրեններու պակաս:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն շատ կարևոր գործ կտեսնեն Սփյուռքի հայապահպանության գործին մեջ: Մաղթենք, որ այդ դեռը ավելի ու ավելի մեծնա, մեր գործակցությունը ավելի ընդլայնվի, որպեսզի կատարենք մեր պարտքը մեր ժողովուրդի տարագիր հատվածին հանդեպ և ապագա սերունդներուն առջև պարտական և ամոթով չմնանք»:

Ցերեկույթն ավարտվում է ճոխ համերգով, որին մասնակցում են հայրենի արվեստագետները:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ ԵՎ Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔ

Հոկտեմբերի 6-ին, չորեքշաբթի: Այսօր Մայր Աթոռի հյուրերը այցելում են Հայաստանի պետական պատկերասրահ, որտեղ հետաքրքրությամբ ծանոթանում են հայ և օտար դասական ու ժամանակակից անվանի գեղանկարիչների ստեղծագործություններին:

Կեսօրին հյուրերը մեկնում են Գառնի՝ այցելելու հեթանոսական տաճար, ապա ուղևորվում են դեպի Ս. Գեղարդի վանք:

Վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը, ի գլուխ քահանայից դասի, դիմավորում է այցելուներին և առաջնորդում եկեղեցի: Տեր հայրը ծանոթացնում է Ս. Գեղարդի վանքի պատմությանը՝ վերջում նշելով, որ վերջին տարիներին վերանորոգվել են Ս. Գեղարդի տաճարները, սալահատակվել ու բարեկարգվել է բակը՝ վանքի բարերար Էդվարդ Մարտիկանի նվիրատվությամբ:

Երեկոյան հյուրերը Երևանում դիտում են «Անուշ» օպերան:

ԱՅՑ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Հոկտեմբերի 7-ին, Հինգշաբթի: Այսօր, առավոտյան ժամը 11-ին, սփյուռքահայ ուխտավորների խումբը այցելում է Սարդարապատի հուշահամալիր:

Մայր Աթոռի հարգարժան հյուրերը հիացմունքով են դիտում Սարդարապատի հոյակերտ կոթողն ու ոգեշնչվում հայրենիքի ազատության և անկախության համար զոհված և այժմ այստեղ քարե արձիվներ դարձած հայ զինվորների փառապանծ ու խրոխտ կեցվածքով:

Ապա հյուրերը երկար քայլում են Սարդարապատի թանգարանի գեղեցիկ և խորհրդավոր սրահներով՝ մանրամասնորեն ծանոթանալով թանգարանի ցուցանմուշներին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Հոկտեմբերի 8-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Ս. Սարգիս եկեղեցու գլխավոր մուտքի մոտ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, քահանայից դասի, թեմական և եկեղեցական խորհրդի անդամների հետ, դիմավորում է տիար Ալեք Մանուկյանին, Ս. Սարգիս եկեղեցու վերաշինության բարերար տիար Ճ. Քյուրքճյանին և նրանց ուղեկցող անձանց:

Սրբազան հայրը հյուրերին ծանոթացնում է թեմական և եկեղեցական խորհուրդների անդամների հետ, ապա որոշ տեղեկություններ հաղորդում վերանորոգված Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու մասին:

Ավելի ուշ հյուրերն ուղևորվում են «Հայկաշեն» հայրապետական ամառանոց, որտեղ ի պատիվ նրանց տրվում է ճաշկերույթ:

Երեկոյան Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում նրանք դիտում են Արամ Խաչատրյանի «Գայանե» բալետը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ օրը, Մայր Աթոռի հյուրերն անմոռանալի պահեր են անցկացնում Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում: Նրանք ծանոթանում են Հայկական ՍՍՀ գիտության, տեխնիկայի, մշակույթի փառավոր նվաճումներին: Հյուրերը մեծ հետաքրքրությամբ են դիտում վերածնված հայ աշխատասեր ժողովրդի աշխատանքի հիանալի արդյունքները, որոնցից շատերը արտահանվում են աշխարհի բազմաթիվ երկրներ:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Մայր տաճարում տեղի է ունենում կիրակամտի հանդիսավոր ժամերգություն, որին ներկա են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի հոգևոր և աշխարհական բոլոր հյուրերն ու հավատացյալների հոծ բազմություն:

Ժամերգության ավարտից հետո, ի պատիվ հյուրերի, Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ տրվում է հայ և եվրոպական եկեղեցական հոգևոր երաժշտության ընտիր հատվածներից բաղկացած ճոխ համերգ՝ խմբավար Խորեն Մեյխանեջյանի ղեկավարությամբ:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 10-ին, կիրակի: Այսօր մեծ հանդիսավորությամբ Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը մատուցում է սուրբ պատարագ:

Ժամը 11-ին հայ բարձրաստիճան հոգևորականներից և Մայրավանքի միաբանության անդամներից կազմված բազմամարդ թափորը, որին հետևում է սփյուռքահայ ուխտավորների խմբերը, եկեղեցու վանքերի ղողանջների ներքո Վեհափառ Հայրապետին առաջնորդում է Մայր տաճար:

Արտասահմանից ժամանած բազմահարյուր ուխտավորներ և հյուրեր ավելի քան երեք հազար հայաստանցի հավատացյալների հետ միատեղ երկյուղածությամբ ունկնդրում են սուրբ պատարագի արարողությանը:

Խորհրդավոր լռության մեջ սկսվում է հայրապետական ս. պատարագը, որի ներշնչող խորհրդով է ներթափանցված տաճարը լցնող հավատացյալների ողջ բազմությունը: Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ հնչում են հայոց պատարագի հոգեպարար մեղեդիները՝ ղեկավարության ներքո վաստակավոր խմբավար Խորեն Մեյխանեջյանի:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը արտասանում է Իր ոգեշունչ քարոզը (տես էջ 3):

Հավարտ սուրբ պատարագի Մայր Աթոռի հյուրերը հրավիրվում են Վեհարան, որտեղ ժամը 15-ին հայրապետական սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ: Ճաշկերույթին ներկա են Հայ Եկեղեցու արտաքին և ներքին թեմերի թեմական առաջնորդները, հայ բարձրաստիճան հոգևորականներ, Հ. Բ. Ը. Միության նախագահ տիար Ալեք Մանուկյանը և Մայր Աթոռի բարերարները՝ իրենց տիկիններով, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամները, սփյուռքահայ և հայրենի մտավորականության ներկայացուցիչներ, հասարակական գործիչներ և պաշտոնական այլ անձինք:

Ճաշկերույթին հրավիրված են Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին



ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ԶԵՏԵՂՈՒՄ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՆՄԱՐ ԿՐԱԿԻ ՇՈՒՐՋ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ԻՐ ԿՆՈՋ, ԴՍՏԵՐ ԵՎ ԹՈՌԱՆ ՀԵՏ, ՆՈՐԱԲԱՑ ԳԱՆՁԱՏԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ

առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում բաժակաճառեր են արտասանվում և բարեմաղթություններ ասվում Ամենայն Հայոց Հայրապետի քաջառողջության, արևշատության, Նրա եկեղեցանվեր ու հայրենաշեն գործերի հաջողության, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, նրա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, բարգավաճման ու ծաղկման համար:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄ «ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱՆՁԱՏԱՆ»

Հոկտեմբերի 11-ին, երկուշաբթի:

Այսօր ուրախ և հիշարժան օր է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Հանդիսավոր իրադրության մեջ կատարվում է բացումը «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» նորակառույց շենքի:

Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար Մայր Աթոռ են հրավիրվել հարգարժան հյուրեր մայր հայրենիքից և Սփյուռքից, այդ թվում՝ հայրենի կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներ և բազմաթիվ մտավորականներ:

Երեկոյան ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, Մայր Աթոռի միաբաններով և հյուրերով, առաջնորդվում է գանձատան նորակառույց շենքի գլխավոր մուտք: Ներկաների խանդավառ արտահայտությունների և բուռն ծափահարությունների ներքո գանձատան բարերար Ալեք Մանուկյանը կտրում է բացման ժապավենը, և ներկաները մուտք են գործում գանձատան բոլորաձև դահլիճ: Այստեղ տեղի է ունենում բացման հանդիսավոր արարողություն, որից հետո Հայոց Հայրապետը հանդես է գալիս բացման ճառով (տես էջ 6):

Վեհափառ Հայրապետի ճառից հետո հանդես է գալիս Հայկական Բարեգործական ընդհանուր Միության նախագահ Ալեք Մանուկյանը հետևյալ ուղերձով.

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ԳԱՆՁԱՏԱՆ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(11 հոկտեմբերի 1982 թ.)

Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,

Հարգելի պետական ներկայացուցիչներ, ուխտավորներ, բարեկամներ և հյուրեր,

Պատմական խորհուրդներով լի պահեր կապրինք բոլորս այսօր, ներկա գտնվելով Ս. Էջմիածնի նոր գանձատան բացումին: Պատմական՝ այն իմաստով, որ այս վայրին մեջ մեր քրիստոնեական առաջին կառույցները բարձրացած են Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով: Ու պատմական՝ անոր համար, որ 17 դարեր ամբողջ մեր հայրերը եկած ու խոնարհած են այս սուրբ հողին վրա, վրույցի նստած են երկինքի հետ, և ասկե բարձրացող խունկին և մոմին աղերսող լույսերուն միացված են իրենց սրտին ցավն ու աղոթքի փշրանքները:

Ու մենք, Լուսավորիչներեն ու Շնորհալիներեն դարեր ետք, կուգանք աշխարհի միևնույն կետին վրա՝ մեր հայրերուն աղոթքը կրկնելու և անոնց սրբազան տեսիլքը կիսելու: Մեր դիմաց իր օրհնաբեր Աջը կբարձրացնի Ս. Գրիգորի

արժանավոր հաջորդ և անոր հավերժական Աթոռի առաքելատիպ նոր Գահակալը՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Այս պահուն մեր միտքին մեջ պատմությունը կմիախառնվի ներկային և երազը՝ իրականության, կարծեք մեր ականջներուն կհասնին դարավոր և իմաստուն մրմունջները մեր եռամեծ Հայրապետներուն: Այստեղ, հայոց հայրենիքի արյունաշաղախ և խնկաբույր այս հողաշերտին վրա Սփյուռքի տարագիր հայ մարդուն հոգին կթոթափե իր բոլոր բեռները, կմերկանա իր հանդերձանքներեն ու շպարներեն ու վճիտ լույսի մաքրությամբ կհամբուրե այն քարերը, ուր Միածինը ինք իջավ և ուրկե անցան հոգնած ոտքերը իր նախահայրերուն...

Գաղթական հայը դարերով կերտած է պալատներ ու եկեղեցիներ, դպրոցներ ու ազգային հաստատություններ, սակայն այդ բոլոր կառույցներեն և .ս-նոնց մեջ հորդող կյանքեն՝ միայն գերեզմանաքարեր կմնան իբրև վկայություն՝ Սինգապուրեն մինչև Հնդկաստան և Ինդոնեզիայեն մինչև Լեհաստան: Միայն հա՛յ հողի վրա կերտվածն է, որ կմնա հավիտյան, միայն ա՛յս հողին վրա է, որ խաչքարին կողքին կենդանի՛ շունչով կողողանջե հայուն խաչավարդ գմբեթը:

Սփյուռքի այս տխուր ճակատագրի ամայության զգացումով կլեցնե մեզ՝ ու մեր հոգին կայրի դեպի հայրենի հող, ուր կենդանի՛ է հայ ժողովուրդը իր ճարտարարվեստով, մշակույթով ու պետականությամբ: Այդ պատճառով ալ ավելի նշանակալից և հոգեպարար կդառնա հայրենի հողին վրա կոթող մը բարձրացնելու պատիվը: Սփյուռքի թափառական հայը լավ կհասկնա բանաստեղծ Հովհաննես Շիրազի հոգին, որ խոսքը ուղղելով Սփյուռքին կըսե.

Օտար աշխարհը մի հյուղ չի՛ տա քեզ,
Բայց թե պալատ էլ տա արևի տակ,
Թե հայրենիքում մի խրճիթ չունես,
Մոռացված որբ ես օտար լուսնի տակ:

Ամեն մարդ երազ մը կունենա կյանքին մեջ, ու մեզի համար ալ երազ մը եղած էր միշտ քար մը կետեղել հայրենիքի կառույցին վրա. և անսալով Ամենայն Հայոց Հայրապետի կոչին՝ ուզեցինք բարձրացած տեսնել այս գանձարանը՝ Վեհարանի կողքին և Ս. Էջմիածնի դարավոր գմբեթի շուքին տակ. երազ մը, որ մարմին առավ Վազգեն Վեհափառի շունչով և Անոր անվրիպելի ճաշակով:

Մենք ներկա գտնված ենք բազմաթիվ մշակութային կեդրոններու բացումին, բայց այսօրվանը պիտի մնա եզակի մեր հիշողության մեջ, ինչպես եզա՛կի պիտի մնա այս գանձարանը, ուր պիտի պահպանվին մեր նվիրական նշխարներուն հետ՝ հայ հանճարի ստեղծագործության նմուշները: Սուրբ Էջմիածնի այս շրջափակին մեջ բարձրացած կառույցները դարերով և հսկա ժամանակներով բաժնված են իրարմե, սակայն բոլորը միասին կկազմեն ամբողջություն մը՝ անխորտակելի ամրոց մը, պահպանելու համար հայուն հավատքը և անոր միտքին ու սիրտին արգասիքները:

Ամենայն Հայոց Հայրապետին գահակալության 27 տարիները հատկանշվեցան շինարարությամբ. Ան Իր բարձր ճաշակով և Ներսես Շինողներու սրբական կիրքով ամեն կողմ շինարարություն տարածեց, արդարորեն արժանանալով «Վազգեն Շինարար Հայրապետ» կոչումին: Ուրախ ենք, որ մեզի ևս պատեհությունը տրվեցավ քար մը կետեղելու մեր հայրենի նվիրական հողին վրա. և այդ կետեղումը կատարվեցավ հայ հողի ամենեն սրբական մեկ անկյունին վրա, Ս. Էջմիածնի՛ հողին վրա: Երբեք չենք ստացած այսպիսի խոր գոհունակություն, ինչպես կզգանք այսօր, մեր սրտի պարտքը հատուցանելով Ս.

Էջմիածնի Սեղանին: Եվ այդ կերպով Մայր Աթոռին մեկի ներշնչած հավատքն է, որ կվերադարձնենք կրկին այդ հավատքի խորանին. ըսելով՝ «Քոյդ ի քոյոց տացի քեզ...»:

Այսօրվան հանդիսությունը մեկ հանգրվանն է Վազգեն Վեհափառի բազմաբեղուն գործունեության: Ան Լուսավորչի գահուն վրա բարձրացավ հայ ժողովուրդի պատմության ամենաճակատագրական պահերեն մեկուն: Եվ ցարդ բախտավոր եղավ հայ ժողովուրդը, որ կյանքը ավելի քան քառորդ դարու աշխույժ իշխանություն մը պարգևեց իր բարի և ազգանվեր Գերագույն Հոգևոր Պետին: Սակայն չէ ավարտված Անոր առաքելությունը, Ս. Էջմիածնի մեջ, ինչպես ամբողջ աշխարհի վրա. հեռավոր ափերեն Իր հավատարիմ հոտը Իրեն կնայի ու կաղոթե Անոր արևշատության համար, որպեսզի Ան շարունակե Իր նախախնամական առաքելությունը հայ կյանքին մեջ: Վեհափառ Հայրապետը Իր առաքելությունը հայ կյանքի մեջ վարած է խոհեմությամբ, համբերությամբ և վայելուչ արժանավորությամբ: Ան ողջմտությամբ առաջնորդած է Իր աշխարհացրիվ հոտը երկրագունտի վտանգալից ճամփաներու վրա և պատկառանք ներշնչած է՝ ինչպես մեր Եկեղեցու վավակներուն՝ նույնպես և աշխարհի մեծերուն. և Հայ Եկեղեցվո վարկը բարձրացուցած է հոն, ուր արժանի էր որ Ան գտնվեր:

Հայ ժողովուրդը, ներկա ժամանակներուն Հայոց Հայրապետությունը մարմնավորված ու խորհրդանշված տեսած է Խրիմյան Հայրիկի առինքնող անձին մեջ: Ուրեմն կարմանալի չէր, որ հայ հավատացյալն ու հայ շինականը Վազգեն Վեհափառի գահակալության առաջին օրերուն ունեցան մեկ ուժեղ բաղձանք և իրենց աղոթքներուն ու մաղթանքներուն մեջ սրտագինս գոչեցին. «Խրիմյան Հայրիկին պես էղնիս»: Եվ իրոք, ներկա պայմաններուն մեջ Ան իրագործեց այդ մաղթանքն և եղավ մերօրյա Խրիմյան Հայրիկ մը՝ Իր միտքի վաստակով, Իր ազգային ըմբռնումներով և մանավանդ Իր հոգևոր կորովի առաջնորդությամբ: Եվ բախտը օգնեց որ Ան, Խրիմյան Հայրիկի «Լացին» փոխարեն կարենար Իր ժողովրդին բաշխել բարիք, շինարարություն ու մխիթարություն և Իր պատգամներուն մեջ ավետեր մեր վերածնած երկրին շենշող իրականությունը:

Քանի մը օրեն պիտի բաժնվինք մայր հողեն, հիշատակ մը թողնելով մեր ետին սակայն, պիտի բաժնվինք ավելի հարստացած, հաճելի և հոգեպարար հիշատակներով, պիտի բաժնվինք հավատարմության նորոգված ուխտով, որպեսզի կարենանք արիությամբ շարունակել սփյուռքահայ մարդու կյանքին փշալից մեր առաքելությունը: Պիտի երթանք այն անկեղծ մաղթանքով, որ անխորտակելի մնա հայոց վերածնած երկիրը, միշտ պայծառ մնա Լուսավորչի Կանթեղը և բարօր մնա մեր աննման Հայրապետը:

Ալեք Մանուկյանի սույն խոսքից հետո, Հայոց Հայրապետի հրավերով, ելույթ է ունենում պատմական գիտությունների դոկտ., պրոֆ. ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը: Իր խոսքում մեծարգո գիտնականը նշում է հայ ժողովրդի պատմության մեջ թագավորական պալատներին կից կառուցված գանձատների ունեցած կարևոր դերն ու նշանակությունը մեր ժողովրդի մշակութային կյանքում: «Այսօր,—իր խոսքն ավարտում է հարգելի պրոֆեսորը,—այս ուրախ պահին, մենք տեսնում ենք հայ ժողովրդի հարազատ զավակ Ալեք Մանուկյանի նվիրատվությամբ և ճարտարապետական գեղեցիկ ոճով կառուցված մի նոր գանձատուն, որը կծառայի հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքների պահպանմանն ու նրանց տարածմանը»:

Հանդիսավոր արարողությունը վերջանում է «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Այնուհետև հյուրերը մեծ հետաքրքրությամբ դիտում են գանձատան ընդարձակ դահլիճներում ցուցադրված հայ եկեղեցական արվեստի թանկարժեք ու բազմատեսակ նմուշները:

Ավելի ուշ, ժամը 19.30-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, ի պատիվ մեծարգո հյուրերի, տրվում է համերգ հոգևոր ճեմարանի ուսանողության և «Շարական» խմբի մասնակցությամբ: Համերգին իրենց մասնակցությունը բերեցին նաև ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանը՝ արտասանությամբ, և Մայր տաճարի երգչախմբի մենակատար Վալերի Հարությունյանը՝ ժողովրդական երգերի կատարմամբ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ ԵՎ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր Աթոռի հյուրերն այցելում են հոգևոր ճեմարան:

Ճեմարանի մուտքի մոտ հյուրերին դիմավորում է ճեմարանի տեսչական կազմը՝ տեսուչ Տ. Եղնիկ քահանա Պետրոսյանի գլխավորությամբ:

Հյուրերն առաջնորդվում են տեսչարան, որտեղ նրանց ծանոթություններ են տրվում ճեմարանի ներքին կյանքի, ուսանողության, դասախոսական կազմի և ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ: Այնուհետև հյուրերը զրույց են ունենում ճեմարանի սաների հետ:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը, հանդիսավոր թափորով և հյուրերի ուղեկցությամբ, առաջնորդվում է Մայր տաճարի գավթի այն մասը, ուր ամփոփված են հայ ժողովրդի մեծանուն զավակ Խրիմյան Հայրիկի աճյունները: Այստեղ, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, կատարվում է հոգեհանգստյան կարգ:

Այնուհետև թափորը շարժվում է դեպի Մայր տաճարի հյուսիսային կողմը, որտեղ գտնվում է Խրիմյան Հայրիկի հիշատակը հավերժացնող նորակառույց աղբյուր-հուշարձանը: Հուշարձանի առաջ կատարվում է կրոնական հանդիսավոր արարողությունը: Հուշարձանի բարերար պրն. Միհրան Բուխանյանը և իր տիկինը հուշարձանի շուրջ հավաքված բազմության խանդավառ ծափահարությունների ներքո, ձգում են հուշարձանը ծածկող պաստառը: Հուշարձանի վրա երևում է մեսրոպյան մեծ տառերով փորագրված հետևյալ խոսքը. «Հա՛յ մարդ, հիշի՛ր դու միշտ երկաթ շերեփը Հայրիկի»:

Ապա Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս բացման ճառով (տես էջ 10):

Վեհափառ Հայրապետի բովանդակալից ճառից հետո, խոսքը տրվում է պարոն Ալեք Մանուկյանին:

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(12 հոկտեմբերի 1982 թ.)

Վեհափառ Տեր,

Գերաշնորհ ու հոգևոր հայրեր, պատվո հյուրեր, ուխտավորներ և սիրելի հայրենակիցներ,



«ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱՆՁԱՏԱՆ» ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՇԵՆՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԳԵՀԱՆԳԱՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՇԻՐԻՄԻ ՄՈՏ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԵԼՈՒՅԹԻ ՊԱՀԻՆ ԽՐԻՄՅԱՆ
ՀԱՅՐԻԿԻ ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Հայ մարդը միայն իր հայրենի հողին վրա կրնա իր նախահայրերուն աճյուններուն մոտ զգալ ինքզինք և անդենականեն լսել անոնց վսեմ պատգամները:

Այս պահուն այդպիսի պատմական ու երկյուղալի մթնոլորտի մը մեջ կգըտնըվինք բոլորս Խրիմյան Հայրիկի լուսավոր շիրիմին շատ մոտիկ. և կողջունենք բացումն անոր հուշարձանին: Սովորաբար հուշարձան կկանգնեն որպես երաշխավորություն ապագայի ավերներուն դեմ. հուշարձան կկանգնեն որպեսզի սերունդները չմոռնան սիրված անձ մը, հոգևոր առաջնորդ մը կամ մտավորական մը: Սակայն ե՞րբ մոռացված էր Խրիմյան Հայրիկ, որ կարիքը զգացվեր հուշարձանի մը: Ան իր մահվնե 75 տարիներ ետք **այնքա՛ն** կենդանի էր մեր կյանքին մեջ, որքան կենդանի էր իր ողջության. հետևաբար այս կոթողը ավելի **մարմնացո՛ւմն** է մեր սիրոյն և զգացումներուն՝ քան թե պատնեշ մը ժամանակի ավերներու դեմ. որովհետև Խրիմյան Հայրիկը միշտ **ո՛ղջ** է մեր մեջ, ան **կխոսի** մեկի, կքալե մեր պատմության մեջ և արդեն մեկմե առաջ՝ կցոլա մեր ապագային վերև...:

Անմահ է Խրիմյան Հայրիկը և այս հուշարձանը այդ **անմահությունն է,** որ կուգա կոթողել **հա՛յ** հողի սիրտին վրա: Խրիմյանի այս հուշարձանին առջև երկյոտ մըն է, որ կանցնի մեր էութենեն, և **ամբո՛ղջ պատմությունը** կպարզվի մեր առջև:

Ամենայն Հայոց Հայրապետը 1956-ին, Իր առաջին կոնդակներեն մեկուն մեջ այնքան իմաստալից կերպով բնորոշած է Խրիմյանի դերն ու տեղը մեր կյանքին մեջ գրելով. **«Ամեն հայ մարդ երկու հայր ունի՝ ի՛րը և Ամենայն Հայոց Հայրիկը».** այս իմաստով, քանի որ ամեն վավակի մեջ **մասնիկ** մը կա իր հորմե, ուրեմն, ամեն հայ մարդ իր մեջ փշրանք մը կապրեցնե Խրիմյան Հայրիկեն:

Ան ծնավ պատմական **հզոր** ժամանակներու մեջ, երբ հայ հողն ու հայ մարդը կարթնային իրենց թմբիրեն, երբ հայ ազատագրության շունչը կփոթորկեր հոգիները և երբ կայսրություններ իրար կզարնվեին մերթ փայլակներու լույսով և մերթ ալ արյան հեղեղներու սարսափով ողողելով հայոց պատմական հողը: Ահա այսպիսի ժամանակներու վրա տարածվեցավ անոր կյանքը, որ սկսավ իբրև դաստիարակ և հարստացավ հայրենաշունչ գրականության բազում հատորներով ու վերջապես փառավորվեցավ իբրև ոգևոր Գերագույն պետ՝ Սուրբ Էջմիածնի դարավոր գահուն վրա: Հայ ժողովուրդի ճակատագիրը վինք բազմաթիվ ոտղություններով առաջնորդեց՝ Պոլիս, Երուսաղեմ, Պեռլին, Մոսկվա և այլուր. սակայն **ո՛ւր որ գնաց**՝ ան իր հետ տարավ իր «Վասպուրականցի Վարժապետ»-ի հոգին, որովհետև Վասպուրականը պատմության մեջ հայոց հնագույն հայկական օրրաններեն մեկը հանդիսացած էր. այդ պատճառավ ալ Խրիմյան Հայրիկ իր հայրենաշունչ հատորներուն, քարոզներուն թե «Արծվի Վասպուրականի»-ի էջերեն, ջերմեռանդ սիրով կոչ կուղղեր հայ ջինականին **ամո՛ւր** կառչիլ իր հողին, այդ հնամյա օրրանին:

Ան վանականի կյանքեն ու վարժապետութենեն բարձրացավ Պոլսո Պատրիարքության գահին, պահ մը հայոց վշտալի ճակատագիրը «լացի լեզվով» պարզեց Պեռլինի դիվանագիտական ատյաններուն և ապա իբրև Ամենայն Հայոց Հայրապետ՝ իր շունչը, գրական վաստակը, հայ ջինականի բնածին իմաստությունը բաշխեց իր աշխարհացրիվ հոտին:

Ան հանդիսացավ դառն երգիչը հայ խոնարհ ժողովուրդի ցավերուն. որքան բարձրացավ ան՝ այնքան մնաց խոնարհ. 1869-ին, երբ Պոլսո Պատրիարք

կընտրվեր, կհայտարարեր. **«Իմ վրաս մի՛ նայեք որպես մի միայն Պոլսո Պատրիարք: Ես պատկերն եմ Հայաստանի ցավերո՛ւն»:**

Ան անձնապես ունեցավ տխուր կյանք մը, բայց գիտցավ այդ տխուր փորձառութենեն իմաստության մարգարիտներ քամել և որպես «Մարգարիտ արքայութեան երկնից» բաժնել իր ժողովուրդին ու պայքարիլ անոր երջանկության ու ապատ և ինքնիշխան կյանքի կերտումին:

Ան պաշտամունք ուներ հայ հողին հանդեպ, և այդ պաշտամունքը վճիտ կերպով կճառագայթեր իր բոլոր գրական հատորներեն, քարոզներեն և իր ընդհանուր գործունեութենեն. ան իր «Հրաւիրակ Արարատեան» խորագրով գիրքին մեջ, սրտառուչ կերպով կգոչե. **«Դեպի մայր երկի՛ր, ազգապահպանման միա՛կ վայրը, դեպի նվիրական վայրերը՝ համբուրելու մեր փառավոր անցյալի նշխարները...»:**

Մենք այսօր այդ կոչեն գրեթե մեկ ու քառորդ դար ետք, անսալով Հայրիկի հայրենաշունչ կոչին՝ եկած ենք հայրենիք «համբուրելու համար փառավոր անցյալին նշխարները», երբ **ինք ևս** դարձած է համբուրելի նշխար, որուն առջև կուգանք խոնարհիլ հարգանքով ու երախտիքով:

Խրիմյան Հայրիկ պատմական հսկոր դարաշրջան մը բացավ մեր ժողովուրդին առջև, երբ 1878-ի Պեռլինի վեհաժողովեն հուսախաբ վերադարձավ Պոլիս, ուր արտասանեց իր նշանավոր «հարիսա»-ի կաթսայի քարոզը. և իր «երկաթյա շերեփ»-ի պարզ խորհրդանշանը դարձավ **ամենեն վճռակա՛ն** ազդանշանը հայ ապատագրական պայքարի պատմության, և հնչեց նահանգ-նահանգ և երկրե-երկիր:

Ան համեստ ու խոնարհ էր հայ շինականին հետ, ցավակից ու վշտակից անոր: Սակայն, խրոխտ ու ձաղկող էր աշխարհի հսկոր իշխանավորներու կամայականությանց ու բռնությանց դեմ. արդարև, ան 1903-ին հայ եկեղեցական կալվածներու գրավման որոշումին դիմաց կգոչեր. **«Սիրասուն զավակներս, չե՛մ հանձներ և կբողոքե՛մ հսկորագույնս»:**

Իսկ երբ հայ ժողովուրդի ջարդարար սուլթանը շքանշան կհանձներ օրվան Պատրիարք Ներսես Վարժապետյանին, Խրիմյան Հայրիկ դառն ծիծաղով մը կըսեր. **«Ոչխարներու ոսկորներեն մանյակ շինեցին ու հովվին վիզեն կախեցին...»:** Ահա այսպիսի կոթողային դեմքի մը հիշատակն է, որ մեկ կհամախմբե այսօր, այս պատմական վայրին մեջ:

Խրիմյան Հայրիկի հեղինակավոր ու խրոխտ ձայնը հնչեց հայոց պատմական հողին վրա ու ժողովուրդի սրտին մեջ. սակայն, ինչ որ հատկանշական է ամերիկահայերուս համար, անոր ձայնը **հասա՛վ** մինչև մեր ափերը և 1895-ին, մեր թեմի հիմնադրության օրերուն, իր օրհնությունները հասցուց մեր գաղութին, որ այսօր կշարունակե ապրիլ անոր իմաստուն պատգամով: Խրիմյան Հայրիկ, ամերիկահայության ուղղած իր խոսքին մեջ կըսեր մասնավորաբար.

«Ողջույն Ձեզ Արարատյան աշխարհեն...

Ողջույն Ձեզ Հայոց Հայրիկեն, որ ավետիս տա Ձեզ իբրև Նոյան աղավնին թե՝ ցամաքեցավ ջրհեղեղ, դարձեք Ձեր հայրենի աշխարհ: Սիրտ առեք, քաջալերեցեք անբախտ ու բախտավոր որդիք հայոց, վի Աստուծո այցելություն մոտ է մեր չարչարյալ աշխարհին»:

Ան վախճանեցավ 1907-ին և չտեսավ երբեք թե ե՞րբ և ինչպե՞ս խաղաղություն իջավ մեր «չարչարյալ աշխարհին», թե ինչպե՞ս հայ ժողովուրդը վերստին տերը դարձավ իր ճակատագրին՝ այս սուրբ հողերուն վրա:

Բայց մենք, անսալով իր հայրապետական սուրբ կոչին, հեռավոր Ամերիկաներեն կուգանք իր իսկ պատգամը բերելու իրեն, և ըսելու թե «ցամաքեցավ

ջրհեղեղ» ու հայը դարձավ հայրենի աշխարհ, առաջին հերթին խոնարհելու Խրիմյանի հիշատակին ու հուշարձանին առջև՝ իբրև կոթողված բռունցք մեր ազգային ինքնության և արի գիտակցության:

Կապրի Խրիմյան Հայրիկը մեր մեջ և հավիտյան պիտի մնա անոր պատգամը հայոց պատմության վերև:

Ալեք Մանուկյանի ուղերձից հետո երախտագիտական խոսք ասաց հուշարձանի բարերար պարոն Միհրան Բուխանյանը: Նա խոր հուզումով իր գոհունակությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին, որի բարեհաճ կարգադրությամբ Մայրավանքի շրջափակում կառուցվեց սույն վեհաշուք աղբյուր-կոթողը:

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ: Ճաշկերույթի ընթացքում բաժակաճառ է արտասանում Ալեք Մանուկյանը՝ առաջարկելով խմել Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության և Նրա գործերի հաջողության համար:

Ճաշկերույթին ելույթ են ունենում նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, տիար Ձորձ Քյուրքճյանը, ճարտարապետ Վարպետ Հարությունյանը, տիար Միհրան Բուխանյանը և հայրենի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը: Բաժակաճառով հանդես է գալիս նաև բանաստեղծուհի Մարո Մարգարյանը, որն իր խոսքի վերջում ոգևորությամբ արտասանում է Վեհափառ Հայրապետին ձոնված իր հետևյալ բանաստեղծությունը.

Կա ճանապարհ մի անթեք,
Կա մշտավառ մի կանթեղ,
Դեռ դարերից խոր խավար
Գալիս է մի լույս հավատ:

Խոր դարերից է գալիս
Մեր ջահերի շարքը մեծ,
Վեհությունը մեր պահող
Ավագների կարգը մեծ:

Եվ այսօր էլ մեկ համար
Հոգու սյուներ ու կամար՝
Ավագներից դու ավագ,
Երեցներից դու երեց,
Մեծ հայրերի սուրբ գծով
Նորից մեր բախտը բերեց:

Ճաշկերույթի վերջում Հայոց Հայրապետը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրում է պրն. պրն. Արշավիր Կլորիկյանին, Գևորգ Այվազյանին և Միհրան Բուխանյանին, իսկ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով՝ պրն. Ձորձ Քյուրքճյանին:

Հոկտեմբերի 13-ին, չորեքշաբթի օրը, տասներկուօրյա այցելությունից հետո, Ալեք Մանուկյանը և մյուս հյուրերը հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից՝ իրենց շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնելով բոլորի նկատմամբ ցույց տրված ջերմ ու սրտաբաց ընդունելության համար:

Վեհափառ Հայրապետը Իր օրհնությունն է տալիս և բարի ճանապարհ

մաղթում հյուրերին՝ ցանկանալով նրանց հաջողություններ իրենց հայրենանվեր և ապագուտ աշխատանքներում:

«Զվարթնոց» օդանավակայանում հյուրերին ճանապարհում են Մայր Աթոռի միաբանության ներկայացուցիչներն ու պատասխանատու աշխատակիցները:

Օդանավակայանում մեծարգո հյուրերին բարի ճանապարհ են մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը, տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, ինչպես նաև պետական պաշտոնական այլ անձինք և հայրենի մտավորականության ներկայացուցիչներ:



ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՐԵՐԱՐ
ՄԻՀՐԱՆ ԲՈՒԽԱՆՅԱՆԸ ԵԼՈՒՅԹԻ ՊԱՀԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

ԱՂԲՅՈՒՐ-ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԻՑ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Ս. Աթոռոյս Ամենապատիվ Պատրիարք Սրբական Հայրը, ընդունած ըլլալով հրավերը Հռոմի Սրբական Քահանայապետ Հովհաննես Պողոս Բ-ի, հինգշաբթի 30 սեպտեմբեր 1982-ին, օդային գծով մեկնեցավ Հռոմ, ընկերակցությամբ Ս. Աթոռոյս նորընտիր դիվանապետ գերշ. Տ. Դավիթ եպս. Սահակյանի և Երուսաղեմի Ֆրանչիսկյան միաբանության մեծավոր (Քյուսթոտ) Հայր Մանչինիի, ներկա ըլլալու կիրակի, 3 հոկտեմբերին տեղի ունենալիք կրոնական այն արարողության, որով Պապը երանության վիճակին պիտի բարձրացնէր Ֆրանչիսկյան Հայր Սալվատոր-Լիլին, իր յոթը հայ հետևորդներով, որոնք նահատակված են 1895 նոյեմբեր 22-ին Մարաշի մեջ:

Հանդիսության օրը, հավարտ ս. պատարագի, Սրբական Պապի ու Ամենապատիվ Պատրիարք Սրբական Հոր միջև տեղի ունեցավ մտերմիկ տեսակցություն մը և նվերներու փոխանակում:

Ամենապատիվ Սրբական Հայրը իր հետևորդներով վերադարձավ Ս. Աթոռ հինգշաբթի, 7 հոկտեմբերին:

ԴԻՎԱՆ Ս. ԱԹՈՌՈ

Ս. Աթոռ,
19 հոկտեմբեր 1982



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԵՎ 50-ԱՄՅԱ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՀՈԲԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՐ

(19 Հունիս 1982)

Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի 1981—82 տարեշրջանի ամավերջի հանդեսը այս տարի տեղի ունեցավ բացառիկ շքեղությամբ, որովհետև 1982-ը քահանայության հիսնամյա հոբելյանն է Ս. Աթոռիս գահակալ Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե Սրբազան Պատրիարք Հոր:

Շաբաթ, 19 հունիսի երեկոյան ժամը ճիշդ 7-ին վարժարանի շքեղորեն զարդարված հանդիսասրահ ժամանեց հոբելյար Պատրիարք Հայրը, ի գլուխ Ս. Հակոբյանց բովանդակ միաբանության, և դիմավորվեցավ ժառանգավոր սաներու կողմե երգված «Սիրտ ի սիրտ» վարժարանիս քայլերգով:

Հանդեսի հայտագիրը բաժնված էր երկու մասերու: Բացման խոսքով հանդես եկավ վարժարանի և ընծայարանի փոխտեսուչ տիար Ալեքս Գալայճյան, որմե ետք տեղի ունեցավ արտասանության և երգի մրցանք: Չորս սաներ նախ արտասանեցին Եղիվարդի «Պարմաններ» և ապա իրենց ընտրած քերթվածը, որմե ետք տեղի ունեցավ երգի մրցանք, դարձյալ չորս սաներու մասնակցությամբ: Կազմված էր վարժարանիս ուսուցչական կազմեն դատական մարմին մը:

Ապա գործադրության դրվեցավ հայտագրի Բ մասը, որ ամբողջությամբ նվիրված էր Նորին Ամենապատվություն Պատրիարք Հոր քահանայության հիսնամյակին: Հավուր պատշաճի խոսքով հանդես եկավ վարժարանի և ընծայարանի տեսուչ, լուսարարապետ գերշ. Տ. Գարեգին արքեպ. Գալանճյան, որ շատ հուզիչ բառերով վերհիշեց իր աշակերտական օրերը Պատրիարք Հոր տեսչության շրջանին և ըսավ. «Դուք իրավ շարունակությունը եք տասնհինգ դարերու տևողությամբ հայ վանականության ժառանգության, որոնք իրենց գրչին լույսը տվին մեր մշակույթի անվաճ հարստության: Մենք այսօր Ձերդ Ամենապատվության մեջ կտեսնենք հայ մատենագրության մեծ հանճարը՝ Ձեր սեփական դուրով հղկված ու գեղեցկացած և ստացած Ձեր իսկ դրոշմը Եղիվարդյան կոչվելով: Գիտեմ, երբ այս տողերը կըսեմ Ձեր իսկ ներկայության, պիտի նեղվիք ու մեղադրեք զիս —ըստ Ձեր հին ու բարի սովորության իբրև մեկը, որ կու գա հրապարակավ վիրավորելու խոնարհության մեջ միշտ բարձրացող չքնաղ գեղեցկություն մը: Ի՞նչ ընեմ, ինչպես անցյալին, այսօր ևս թող վայրկյան մը Ձեր վիջող և ներող քաղցր նայվածքը իյնա իմ սրտիս մեջ, կավակի մը՝ որ կուզե այս պահուս անվերապահության մը հաճույքը վայելել, թարգմանը հանդիսանալով Սրբոց Հակոբյանց ողջ միաբանության և Ձերդ Ամենապատվության տասնյակ ու տասնյակ աշակերտական խումբին ամենաանկեղծ զգացումներուն»:

Ապա Սարգիս սրկ. Թասլաքյան մեներգեց Օհան Տուրյանի կողմե դաշնավորված Եղիվարդի «Վարդան»-ը: Արամ սրկ. Ալճան-

յան տվավ հոբելյար Սրբազանի կենսագրությունը, իսկ Կոմիտաս աբդ. Շերպեթճյան մեներգեց գուսան Աշոտի «Օճախում» երգը: Միհրան սրկ. Քչըքրրըգյան հատված մը կարդաց Եղիվարդի «Օտարական»- են, իսկ Արամ սրկ. Ալճանյան մեկներգեց Շահան Ռ. Պերպերյանի դաշնավորած Եղիշե Դուրյան Պատրիարքի «Խաչը», որմե ետք Սարգիս սրկ. Թասլագյան ատենախոսեց Նորին Ամենապատվության գրական վաստակի մասին: Գերշ. տեսուչ Սրբազան Հոր հակիրճ տեղեկագրեն վերջ, տեղի ունեցավ մրցանակաբաշխություն, և ուսումնական լավագույն արդյունքներ ձեռք բերող ժառանգավոր սաներ արժեքավոր գիրքեր նվեր ստացան Նորին Ամենապատվութենեն: Իսկ Ժառանգավորաց Ե դասարանի սաներ՝ Սարգիս սրկ. Թասլագյան, Միհրան սրկ. Քչըքրրըգյան, Արամ սրկ. Ալճանյան և Պողոս սրկ. Շահանյան Նորին Ամենապատվութենեն ստացան իրենց վկայականները: Մրցանակներ տրվեցան նաև արտասանության և երգի մրցանքի առաջին հանդիսացողներուն:

Ապա գերշ. տեսուչ սրբազանը խնդրեց Նորին Ամենապատվութենեն, որ ընե փակման խոսքը: Հոբելյար Պատրիարք Հայրը, զգալապես հուզված, ըսավ.

«Ներկա եղանք բոլորս Ժառանգավորաց վարժարանի գեղեցիկ այս հանդեսին, լսեցինք երգերու և արտասանություններու մրցանքը, և վստահ եմ, թե բոլորս եկանք այն եզրակացության, որ նոր ոգի մը իր լուսավոր գլուխը սկսած է շարժել այս հաստատութենեն ներս, և այս, անտարակույս, ինչպես մեզի, այնպես ալ ձեզի համար սրտահույզ երևույթ մըն է: Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը կարևոր առաքելություն մը ունի: Մենք չենք ուզեր այս հաստատության մեջ պատրաստել հայերեն գիտցող բժիշկներ, փաստաբաններ և կամ ապատ ուսումներու ներկայացուցիչներ, այլ՝ մեր պատմության, լեզվին և անցյալին գիտակ մարդեր, որոնք կարենեն քննել և ուսումնասիրել մեր արժեքները:

Օրերը տրտում են. արտասահմանի մեր վիճակը իրապես տխուր է: Ժամանակն է, որ մեր երիտասարդ աշակերտները սրբեն իրենց հոգիեն ստորակացության փոշին և գիտնան, թե իրենք մեծ ժողովուրդի մը, մշակույթ ստեղծող մեծ ժողովուրդի մը կավակներն են: Մենք աղքատ Ղազարոսներ չենք՝ ուրիշներու պատին տակ կեցած. եթե եղանք ժամանակվան մը համար, իրագործեցինք նույնիսկ և կրցինք ըլլալ այն, ինչ որ մեր իրավունքն էր ըլլալ և ինչ որ մեր իրավունքն էր եղած դարերով: Ժամանակին, միջին դարուն, և անկե առաջ, մեր մշակույթի ջահը վեր բռնած էին մեր վանքերը: Անցած են ժամանակները, և այսօր կարծեք թե խաչաձևված ճամբաներու վրա և խաչաձևված ճամբաներու մեջեն նորեն մեր վանքերն են, որ պետք է ստեղծեն այն, ինչ որ անոնք ստեղծեցին իբրև պատվարներ, իբրև ոսկյա դղյակներ ժամանակի անորոշության մեջեն: Ըսի ձեզի թե մենք հայերեն գիտցող բժիշկներ և փաստաբաններ չէ, որ կուզենք տալ այս հաստատութենեն, անոնք չեն կրնար մեր գոյամարտին մեջ մեզ օգնել. մեզ փրկողը պիտի ըլլան միայն ու միայն մեր վանքերեն դուրս ելած մեր անցյալը, մշակույթը, մեր հոգեկան և մտքի արժեքները յուրացուցած տղաքը: Հետևաբար, սիրելի շրջանավարտներ, գոտեպնդվեցեք և կացեք ձեր ասպարեզին շեմին վրա և ըսեք թե, եթե ուրիշներ կհիանան մեր լեզվին, պատմության և մշակույթին վրա, մենք կըսքանչանանք անոնցմով և պիտի ընենք այն, ինչ որ մեր ժողովուրդը և նախնիքը ըրած են դարերով և եկած ու հասած են հոս»:

Հանդեսը վերջ գտավ Ս. Աթոռի օրհներգ «Օրհնեցէք զՏէր» շարականի հոտնկայս երգեցողությամբ: Ապա Պատրիարքարանի շքեղ դահլիճին մեջ տեղի ունեցավ ընդունելություն:

ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ
ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պոլսայանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Եթէ պլեկուս մարդկան խօսիցիմ եւ կիրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ պղինձ որ հնչէ, կամ իբրեւ ծնծղայս որ ղողանջեն» (Ա Կորնթացիս ԺԳ 1) բնաբանով:

Սրբական հայրը քարոզում է Փրկիչ Հիսուս Քրիստոսի աստվածային այն մեծ սիրո մասին, որը հիմքն է խաղաղության, եղբայրության, մարդկանց տալիս է բարին գործելու ներքին ուժ և մարդասիրական ազնիվ զգացումներ:

*
* *

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ.—Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգոր Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ի հիշատակումն «Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց» տոնի, մատուցվում է հանդիսավոր ս. պատարագ: Պատարագիչն է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը:

Ս. պատարագի արարողության ժամանակ կատարվում է սարկավագական ձեռնադրություն: Սրբական հայրը սարկավագ է ձեռնադրում Բուենոս Այրեսից ուխտավորաբար Հայաստան ժամանած Կարապետ Գույումճյանին: Ձեռնադրության արարողությունն ավարտվում է սրբական հոր «Պահպանիչ»-ով:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը քարոզում է «Նմանեալ Մովսէսի, Տէր վարդապետ. բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ» (Շարական) բնաբանով:

Սրբական հայրն իր քարոզում առանձնապես շեշտում է սուրբ թարգմանիչների կատարած բարձրարժեք և անգնահատելի թարգմանությունների մասին, որոնք համաշխարհային մշակույթի մեջ ունեն իրենց պատվավոր տեղը:

*
* *

Հոկտեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր

տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հայկակուն աբեղա Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Գնացէք այսուհետեւ, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մատթէոս ԻԸ 19) բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում մտքեր են փոխանակվում Հայկակուն աբեղա Նաջարյանի՝ Մայր տաճարում հոկտեմբերի 17-ին արտասանած քարոզի կապակցությամբ:

*
* *

Հոկտեմբերի 22-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան եպս. Բալիոզյանը:

Սրբական հորը «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորում է Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը:

*
* *

Հոկտեմբերի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում «Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի» (Մատթէոս Ժ 38) բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հոկտեմբերի 28-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Ամենայն Հայոց Հայրապետը Վեհարանում ընդունում է Մեծ Բրիտանիայի, ԳՖՀ-ի, Դանիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Բուլղարիայի, ԳԴՀ-ի, Հունգարիայի, Ճապոնիայի և այլ երկրների մի խումբ թղթակիցների, հեռուստատեսության ու ռադիոյի, ինչպես նաև հեռագրական գործակալությունների աշխատակիցների այցելությունը և զրույց ունենում նրանց հետ:

*
* *

Հոկտեմբերի 29-ին, ուրբաթ.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան տիար Կլոդ Առնոնին՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Հայոց Հայրապետի և մեծարգո պարոն դեսպանի միջև տեղի է ունենում զրույց՝ բարեկամական ջերմ մթնոլորտում:

*
* *

Հոկտեմբերի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Աղան եպս. Բալիոզյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ սրբությունը՝ «Սիաւասիկ մայր իմ եւ եղբարք իմ. Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ՝ նա է իմ եղբայր եւ քոյր եւ մայր» (Մարկոս Գ 33) բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 12—15 օրերին պաշտոնական այցով Մայր Աթոռում էր գտնվում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի պատասխանատու աշխատողներից բաղկացած մի պատվիրակություն: Պատվիրակության կազմում էին ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի անդամ Մակարիոս արքեպիսկոպոսը (Եթովպական Եկեղեցի), Կորեայի քրիստոնեական ակադեմիայի տնօրեն և ԵՀԽ-ի գործադիր կոմիտեի անդամ դոկտ. Վոն Իոնգ Կանգը, Սեուլի ազգային համալսարանի պատմության ֆակուլտետի պրոֆ. Ին-Հո Լին և ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի օգնական, Հավատո և Կարգի հանձնաժողովի ատենապետ պրոֆ. Տոդոր Սաբևը:

Հոկտեմբերի 12-ին, երեքշաբթի օրը, «Զըվարթնոց» օդանավակայանում Մայր Աթոռի հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլապալյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը:

Այնուհետև հյուրերը ավտոմեքենաներով առաջնորդվեցին Էջմիածնի Մայրավանք և տեղավորվեցին Մայր Աթոռի վանատանը իրենց հատկացված հարկաբաժիններում:

Հոկտեմբերի 13-ին, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանում ԵՀԽ-ի ներկայացուցիչներին ընդունեց և բարի գալուստ մաղթեց Ամենյան Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի հյուրերի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց եղբայրական ջերմ մթնոլորտում:

Ժամը 12-ին հյուրերն այցելեցին հոգևոր ճեմարան, որտեղ նրանց ընդունեցին ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քահանա Պետրոսյանը և փոխտեսուչ Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը: Հոգևոր ճեմարանի տեսչական կազմի և հյուրերի միջև տեղի ունեցավ զրույց, որի ընթացքում ԵՀԽ-ի ներկայացուցիչներին բացատրություններ տրվեցին հոգևոր ճեմարանի պատմության, դասախոսական և ուսանողական կազմի, ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքի, դասավանդվող կրոնական առարկաների ուսուցման և հարակից այլ հարցերի մասին: Ապա Մայր Աթոռի հյուրերն այցելեցին Մայր տաճար, ծանոթացան Մայրավանքի թանգարաններին, եղան «Ալեք և Մարի Մանուկյան» նորաբաց գանձատանը, ինչպես նաև Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե վանքերում:

Նույն օրը, ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետը, ի պատիվ Մայր Աթոռի մեծարգո հյուրերի, Վեհարանի սեղանատանը տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա եղան հայ բարձրաստիճան հոգևորականներ:

Երեկոյան հյուրերը Երևանում ծանոթացան մայրաքաղաքի տեսարժան վայրերին:

Հոկտեմբերի 14-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, ԵՀԽ-ի պատվիրակությունն այցելեց Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որտեղ մանրամասն բացատրություններ տրվեցին նրանց ձեռագրատանը ի պահ դրված հայ մշակույթի հնագույն գանձերի մասին: Ապա հյուրերը մեկնեցին Գառնի, այցելեցին տեղի հեթանոսական տաճարը և այնտեղից ուղևորվեցին դեպի Ս. Գեղարդի պատմական վանք, որտեղ նրանց ջերմորեն դիմավորեց և բարի գալուստ մաղթեց վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը: Այստեղ ևս պատվիրակության ան-

դամները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան միջնադարյան այս հռչակավոր վանքի պատմությանն ու նրա վիմափոր տաճարներին:

Ժամը 14-ին վանքի հյուրասրահում, ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի, տրվեց ճաշկերույթ, որն անցավ սիրալիր եղբայրական մթնոլորտում: Այնուհետև հյուրերը հրաժեշտ տվեցին վանահորն ու վանքի միաբաններին և լավագույն տպավորություններով վերադարձան Երևան:

Նույն օրը, երեկոյան, Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում ԵՀԽ-ի ներկայացուցիչները ներկա եղան երեկոյան ժամերգությանը և մասնակցեցին էկումենիկ աղոթքին:

Հետևյալ օրը, հոկտեմբերի 15-ին, առավոտյան ժամը 11-ին, ԵՀԽ-ի պատվիրակությունն այցելեց Ծիծեռնակաբերդ և ծաղկեպսակ վետեղեց Հայ նահատակաց հուշարձանին: Այստեղ տեղի ունեցավ հոգեհանգստյան կարճ արարողություն, ապա հյուրերից յուրաքանչյուրն իր լեզվով հոգվոց արտասանեց Ապրիլյան եղեռնի զոհերի հիշատակին:

Ժամը 13-ին Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնում ԵՀԽ-ի պատվիրակության և Մայր Աթոռի ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ խորհրդակցական հանդիպում: Սույն հանդիպմանը Մայր Աթոռի կողմից մասնակցեցին հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, Տ. Ներսես եպիսկոպոս Պոլապալյանը, Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը, Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը, Տ. Եղնիկ քահանա Պետրոսյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Խորհրդակցության ընթացքում քննության առնվեցին մասնավորապես կրոնական դաստիարակության և Եկեղեցիների միության վերաբերող մի շարք այժմեական հարցեր:

Ժամը 13-ին հյուրերը Վեհարանում հրաժեշտ տվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ իրենց շնորհակալ զգացումներն արտահայտելով Նորին Սրբությանը՝ պատվիրակության նկատմամբ Մայր Աթոռի կողմից ցույց տրված սիրալիր և ջերմ ընդունելության համար:

Նույն օրը, երեկոյան, ԵՀԽ-ի պատվիրակությունը մեկնեց Մոսկվա:



ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԼԼԸՆՃՅԱՆ

ԱԴԱՄԱԿԱՆ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՄԵՂՔԸ

Երբ մեղքի մասին խոսվում է կրոնական իմաստով, նկատի է առնվում այն հարաբերությունը, որ գոյություն ունի մարդու և Աստծու միջև, ի տարբերություն մարդու զգացումների և գիտակցության միջև եղած հարաբերության:

Մեղքը, կրոնական տեսանկյունից դիտած, ամենևին կապ չունի մարդկանց կողմից երևույթների սուբյեկտիվ ընկալման հետ, ըստ որի, ինչ որ մեկի համար մեղք է թվում, մյուսի համար հակառակն է: Ե՛վ եբրայական, և՛ քրիստոնեական մտածելակերպը մեղքն ընդունում է որպես իրականություն, որպես գոյություն ունեցող անհերդաշնակություն մարդու և Աստծու միջև: Աստվածաբանական մտածելակերպով ինչքան էլ ջանք թափվի մեղքը որպես բարու բացակայություն, որպես լույսի անհետացում և որպես ներդաշնակության կորուստ բանաձևելու, այսուհանդերձ չի կարելի ժխտել իրականությունը չարի, խավարի և անհերդաշնակության: Պետք է ի մտի ունենանք, որ լույսը, բարին կամ ներդաշնակությունը սկզբնագո իրականություններ են, իսկ դրանց հակադիրը մեղքն է՝ արդյունքը գոյություն ունեցող այն նախանձոտ և բարությունից մերկացված ուժի, որ կրոնական լեզվով սատանայական իշխանություն է կոչվում, և որին հաճախ անձնատուր է լինում մարդկային ապատ կամքը:

Որովհետև մեր հավատքը հիմնված է աստվածային հայտնությունների վրա, կարելի է ասել, որ մեղքի գիտակցությունն էլ մեր մեջ առաջացել է այդ հայտնությունների շնորհիվ, որով և կարող ենք չարը բարուց կանականել: Աստվածային Ս. Հոգին «գալով՝ պիտի ապացուցի աշխարհին, որ նա սխալ է մեղքի և արդարության հարցում և դատաստանի հարցում: Մեղքի հարցում՝ որովհետև ինձ չեն հավատում. արդարության հարցում՝ որովհետև իմ Հոր մոտ եմ գնում, և այլևս ինձ չեք տեսնի. դատաստանի հարցում՝ որովհետև այս աշխարհի իշխանը դատապարտված է» (Հովհ. ԺԶ 8—11):

Որչափ Աստված մերձենա մարդուն, բաժնեկից դարձնի նրան իր գութին ու սիրույն, այն չափով էլ մարդն ավելի ու ավելի կսկսի ճանաչել իր մեղավոր վիճակը: Աստծու հետ ունեցած իրենց մերձավորությունն էր, որ մաքրավարդեց սրբերին մեղքի տիղմից, այլապես նրանք էլ այլոց նման պիտի նստեին «ի խաւարի»:

Երբ մեղքով է լցված մարդու սիրտը, աստվածայինը չի կարող այնտեղ բույն դնել: Մարդը կորցնում է Աստծուն ընդունելու իր ունակությունը: Այլ խոսքով՝ մարդն ի վիճակի չի լինում իր կարողության չափով փոխադարձել Աստծու անսահման գութն ու սերը:

Աստծու գութի կամ շնորհքի նկատմամբ անտարբեր չլինել և փոխադարձաբար սիրել Նրան՝ կնշանակի հեռանալ մեղքից. ավելին՝ պարտավորություն ստանձնել մեր նմանների նկատմամբ: Այդ պարտավորությունը կայանում է միմյանց սիրելու մեջ, որովհետև «ով չի սիրում իր եղբորը, որին տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, որին չի տեսել» (Ա Հովհ. Դ 20):

Այսպիսով, մեղքը խաթարում է սիրո կապը Աստծու հետ, ինքնաբերաբար նաև՝ սիրո կապը մարդկանց միջև: Սրան լավագույն օրինակ կարող է ծառայել Ս. Գրքում մեջբերված մարդու անկման պատմությունը, որտեղ երբ Ադամը Աստծուց պատասխանատվության է կանչվում, հանցանքը գցում է Եվայի

վրա և դրանով խորտակում մինչ այդ տղամարդու և կնոջ միջև գոյություն ունեցող վստահության կապը: Նույնն է պարագան նաև ընտանեկան կյանքում, երբ մեկի գործած մեղքը անդրադառնում է բովանդակ ընտանիքի վրա և քայքայում գոյություն ունեցող ներդաշնակությունը:

Երբ խոսում ենք մեղքի մասին, չենք կարող շրջանցել Սուրբ Գրոց արդի մեկնաբանների, այդ թվում և մի շարք հայտնի աստվածաբանների այն տեսակետները, որոնք մթագնում են մեղքի և նրա ծագման վերաբերյալ ավանդական տեսությունները: Ըստ նրանց, մեղքը դիտվում է որպես մարդկային ընկերության և վարք ու բարքի արտադրանք կամ որպես յուրատեսակ մի հիվանդություն, որն ինքնին դատապարտելի չէ: Սրանով տկարանում է մեղքի բարոյական հասկացությունը և այն դառնում է ինչ-որ հարաբերական ախտանիշ: Ի՞նչ են սակայն այդ ախտանիշի դրդապատճառները. որտեղի՞ց է այն եկել ու հաստատվել հասարակության մեջ. ինչո՞ւ համար, օրինակ, դատապարտում ենք կավթողական պատերազմները, ռասիզմը, գողությունը, կաշառակերությունը և այլն, եթե դրանք մեղանչական հասկացություններ չեն, այլ որևէ մի հասարակության պահանջը լրացնող արտադրանք, որը, նայած թե բժիշկը ինչ ակնոցով է դիտում, կարելի կլինի գնահատել որպես լավ կամ վատ: Երբ մեղքն այսպես հարաբերական հասկացության է վերածվում, բնականաբար նվազեցվում է նրա վտանգավոր և վնասաբեր բնույթը, այնպես որ նրա լծի տակ ընկնողը միշտ էլ կկարողանա արդարացման ինչ-որ հենակետ գտնել:

Ինչ չափով որ սխալ է մեղքը ընկերային արտադրանք նկատելը, նույնչափ և ավելի ևս սխալ է մեղքի հասկացության մեջ ընկնող հայտնի երևույթներին մի այնպիսի կորություն վերագրելը, որից անհնարին լիներ ձերբազատվել: Եկեղեցին ընդունում է, որ մեղքը մի իրականություն է և ունի իր այլազան երեսները, սակայն այն հաղթահարվում է, երբ մարդ ապավինում է Աստծու շնորհին և պահքով ու աղոթքով սպառազինվում նրա դեմ (Հմմտ. Մտթ. ԺԷ 20):

Մեղքը այնքան բազմատեսակ է և այնպիսի անդնդային խորություն ունի, որ վերևից դիտելիս չես կարող իմանալ նրա խորքը, չի երևի նրա հատակը, իսկ եթե ցածր իջնես, չես հասնի նրա հատակին: Հետևաբար մեղքը ինչքան էլ ուսումնասիրվի և տեսակավորվի, էլի մնում է խորհրդավոր և անսահմանելի:

Վերևում ասվեց, որ մեր հավատքը հիմնված է աստվածային հայտնությունների վրա, և որ մեղքի գիտակցությունն էլ մեր մեջ առաջացել է շնորհիվ այդ հայտնությունների: Ուրեմն աստվածային առաջին հայտնության հետ զուգընթաց գործվում է նաև Ս. Գրքում հիշատակված առաջին մեղքը, որը Եկեղեցին սկզբնական (Peccatum originale), ադամական կամ ժառանգական (Peccatum hereditarum) մեղք է անվանում:

Ի՞նչ է նրա էությունը:

Հենվելով Ս. Գրքի տվյալների վրա՝ Եկեղեցին ուսուցանում է, որ սկզբում մարդկային կյանքը այնքան սերտ հաղորդակցության մեջ էր Աստծու հետ, որ նրա մեջ չէր կարող տեղ ունենալ մեղքը: Մարդու այս սկզբնական վիճակը բնութագրվում է որպես դրախտային դրություն կամ նախնական վիճակ:

Դրախտային այս դրությունից հեռացումը սկիզբ է դնում աստվածային փրկագործության խորհրդին, որն ուրիշ բան չէ, եթե ոչ մարդկանց վերադարձնել իրենց նախնական դրությանը (Հմմտ. Ես ԾԹ 20. Մտթ. ԺԸ 11. Ա Պետր. Ա 18): Մյուս կողմից էլ հայտնի է, որ հակաաստվածայինը, այսինքն՝ մեղքը խորթ մի վիճակ է մարդու համար: Մարդը կոչված է աստվածայինին, քանի որ Աստծու պատկերի նմանությամբ է ստեղծվել:

Մեղքի նկատմամբ դրսևորվող սուրբ գրային առաջին գիտակցությունն սկսվում է Ադամ և Եվայի կատարած մեղանչումով, մի մեղանչում, որ տարածվում է հետագա բոլոր սերունդների վրա, որովհետև մարդիկ իրենց ծննդով այն հանցապարտ իրավիճակն են ժառանգում, որն առաջացավ նախամարդու պատվիրապանցությամբ, երբ նա Աստծուն դեմ գալ փորձեց և ուզեց համեմատվել նրա հետ[1]: Այսպիսով, սկզբնական մեղքը ստանում է ժառանգական բնույթ:

Ինչ վերաբերում է **ժառանգական մեղքին,** հարկավոր է նշել, որ արդի մի շարք աստվածաբաններ, մեծավ մասամբ ավետարանական Եկեղեցուց, հարցականի տակ են դնում այս ավանդական տեսությունը: Նրանք գտնում են, որ նախամարդու հանցանքը չի կարող ամբողջ մարդկությունը պատուհասել, թե մարդիկ պետք է ձերբազատվեն անցյալից եկած այդ բեռան ճնշումից, թե մի ժառանգական մեղք չի կարող ժառանգորդին պատասխանատվության ենթարկել և թե, վերջապես, մեկի անհատական գործը չի կարող ուրիշի ժառանգությունը լինել[2]:

[1] Յուրաքանչյուր օրենք, լինի դա աստվածային թե մարդկանց կողմից հաստատված, նախադրում է այդ օրենքը պանցելու մարդկային ազատությունը: Աստվածադիր օրենքը կապում է մարդկանց Աստծու հետ, որպեսզի նրանք իրենց ազատ կամքի շնորհիվ չընտրեն հակաաստվածայինը:

[2] *K. Barth.* Die Kirchliche Dogmatik, IV, էջ 855:

Հին Կտակարանի կանոնական գրքերում էլ թեև մահը մեղքի արդյունք է համարվում (Սիրք. ԻԵ 33, Իմաստ. Ա 13—16), սակայն ոչ մեկ տեղ ակնարկություն չկա ադամական ժառանգական մեղքի մասին, այլ շեշտը դրվում է անհատական մեղքի վրա:

Նոր Կտակարանում, սակայն, կարգացվում է մի տեսություն, որն իր հիմքում նկատի ունի ադամական մեղքը, և որի հիման վրա Եկեղեցին առաջ է քաշում ժառանգական մեղքի գաղափարը: Հիսուսը, օրինակ, Աբրահամի հայրությամբ հպարտացող հրեաներին, որոնք մերժում էին լսել Աստծու ձայնը, հասկացնում էր, թե իրենք մեղանչական ծագում ունեն և ասում էր. «Դուք հոր կողմից սատանայից եք, և ձեր հոր ցանկություններն եք կամենում կատարել»[3]. այսինքն՝ հեռացած եք Աստծուց և հակաաստվածային դրության մեջ եք: Իսկ ի՞նչ պետք է անել նորից մերձենալու համար Աստծուն: Հարկավոր է վերստին ծնվել. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում քեզ, եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծու արքայությունը մտնել. որովհետև մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի»[4]:

Պողոս առաքյալը իր թղթերում պարզաբանում է ժառանգական մեղքի գաղափարը: Ա Կորնթ. ԺԵ գլխում, ակնարկելով ժառանգական մահվան, նա ասում է. «Քանզի մի մարդով մահ եղավ և մի մարդով՝ մեռելների հարություն: Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան»: Մի ուրիշ տեղ, Հռոմեացվոց թղթի հինգերորդ գլխում, նույն առաքյալը Ադամ-Քրիստոս համեմատությունը կատարելիս՝ գեղեցկահյուս բառերով բացատրում է, թե ինչպես ապատվեց մարդկությունը Ադամի ժառանգ թողած մեղանչական դրությունից՝ ստանալով Աստծու շնորհքն ու պարգևները՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ:

«Ապա ուրեմն, ինչպես մեկի հանցանքով բոլոր մարդիկ դատապարտության մատնվեցին, նույնպես և մեկի արդարությամբ բոլոր մարդիկ պիտի հասնեն կյանքի արդարության. որովհետև մեկի անհնազանդությամբ մեղավորները բպում եղան, նույնպես և մեկի հնազանդությամբ արդարները բպում պիտի լինեն»[5]:

Այս կապակցությամբ արժե կարդալ նաև նույն թղթի վեցերորդ գլուխը: Պետրոս առաքյալի ընդհանրական թղթում նույնպես հանդիպում ենք հետևյալ մտքին. «Իմացեք, որ ապականացու արծաթեղենով և ոսկեղենով չէ, որ փրկվեցիք ձեր հայրենավանդ ունայն ընթացքից, այլ թանկագին արյամբ Քրիստոսի, որ անբիծ և անարատ է, ինչպես գառը»[6]:

Նոր Կտակարանով կարելի է հակադրվել և հերքել ավետարանական Եկեղեցու աստվածաբանների և տարբեր մտածողների տեսակետները ժառանգական մեղքի նկատմամբ: Թե՛ կրոնական և թե՛ մարդկային տեսանկյունից դիտելով՝ վտանգավոր է մեղքը մարդկային բնության մեկ հատկանիշ նկատել և ընդունել գոյությունը միայն անհատական մեղքի, որովհետև դրանով պարտավոր ենք ընդունել նաև, որ մարդու մեջ գոյություն ունի մի «չար սկզբունք», ինչ որ նշանակում է դուալիզմի մոլորության մեջ մխրճվել: Սուրբ Գիրքը ամբողջ ստեղծագործությունը, ներառյալ մարդը, հայտարարում է **բարի:** Մեղանչական դրությունը ժառանգաբար մեկ հասած մի ժամանակավոր դրություն է, որից ձերբազատվում է մարդ, երբ մկրտությամբ երկնավոր Հոր որդեգրությունն է ստանում՝ լինելով ժառանգակից Քրիստոսի և տաճար Հոգվույն Սրբո[7]:

Ժառանգական մեղքը անհնար է բաժանել փրկագործության խորհրդից և հակառակը: Մարդկանց ապականված դրության պատճառով էր, որ տեղի ունեցավ ջրհեղեղը, այդ նույն դրությունն էր, որ ստիպեց ուխտադրուժ հրեա ժողովրդին Աստծու ընտրյալ ժողովուրդ լինելու հանգամանքից, այդ նույն դրությունն էր, որ պատճառ եղավ Աստծու գթասրտության, որով նա իր Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, երկիր ուղարկեց՝ նրա արդար արյամբ մի նոր ուխտ կնքելու համայն մարդկության հետ՝ վերահաստատելու համար նրանց սկզբնական անարատ դրության մեջ: Եթե հավատում ենք փրկագործության խորհրդին, ուրեմն պետք է ընդունենք նաև ժառանգական մեղքի գոյությունը: Եթե նախամարդու գործած մեղքը անձնական բնույթ ունի և ազդեցություն չի կարող թողնել ապագա ժառանգների վրա, ուրեմն Քրիստոսով եղած փրկագործությունը վերաբերում է միայն նախամարդուն և ոչ թե համայն աշխարհի մարդկությանը, իսկ նրա գոհագործումն էլ չի կարող արժեք ունենալ Քրիստոսին հաջորդող սերունդների համար: Այս տեսակետը սխալ է, և ուղղափառ Եկեղեցին փրկագործության խորհրդով ջնջված ադամական ժառանգական մեղքի նկատմամբ իր

[3] Հովհ. Ը 44:
[4] Հովհ. Գ 5—6:
[5] Հռոմ. Ե 18—19:
[6] Ա Պետր. Ա 18—19:
[7] Այս մասին տես Հայց. Եկեղեցվո մկրտության բանաձևը:

հավատքն արտացոլում է Սուրբ Մկրտության խորհրդի մեջ:

Այժմ բերենք այս մասին մի քանի վկայություններ եկեղեցական հայրերից:

Գրիգոր Նյուսացին «Լեռան քարոզ»-ի մասին գրած իր մեկնության մեջ նշում է. «Փոխանակ դրախտային բերկրալի կյանքի, ժառանգեցինք մի երկիր՝ լիքը տառապանքով և հիվանդությամբ: Փոխանակ այն երանելի դրության, բավմապիսի դժբախտություններ հնձեցինք: Փոխանակ հրեշտակների հետ միասին լինելով՝ վեհագույն ընկերակցությունը վայելելու, դատապարտված ենք ապրելու երկրի կենդանիների հետ, որովհետև մենք հրեշտակային և բերկրալի կյանքը փոխանակեցինք կենդանիների կենաց հետ»[8]:

«Չարը որոշ չափով դարձել է մեր բնության բաղկացուցիչ մեկ մասը՝ մեր նախահոր և նախամոր կատարած հանցանքի հետևանքով: Նրանք իրենք իրենց մեղքին հանձնեցին և իրենց անհնազանդությամբ ընթացք տվեցին հիվանդությանը»[9]:

Եփրեմ Խուրի Ասորիի «Մծբնական երգեր»-ում մարգարեներն ու արդարները սատանայի կողմից նկատվում են Ադամի մարմին զգեցած մարդիկ, սակայն նրանցում գոյություն ունի նաև աստվածայինը, նրանք մարդ և Աստված են, ու սատանան ի զորու չէ նրանց վրա իշխանություն բանեցնելու: Այնտեղ, ի միջի այլոց, կարդում ենք նաև հետևյալը. «Ես տեսա Ադամին, որն այն ակունքն է, որտեղից դուրս են գալիս բոլոր սերունդները: Քննեցի նրա զավակներին և փորձեցի յուրաքանչյուրին, սակայն նրանցում ոչ ոքի չգտա, որ լիներ մեկ մասով Աստված, իսկ մյուս մասով՝ մարդ: Ես փորձեցի նույնպես Մովսեսին, որը լույսի փայլով էր ճառագայթում, և նրան, իր իսկ լեզվով, շփոթության մեջ գցեցի»[10]:

Գրիգոր Նազիանզացին գրում է. «Նա, որ սկզբում մարդուն ստեղծեց՝ ազատ ու ինքնիշխան անելով, միայն պատվիրանի օրենքին ենթարկեց նրան և դրախտային բերկրության առատությամբ օժտեց: Առաջին մարդուն հատկացնելով և նվիրելով այս շնորհները՝ դրանք նվիրած եղավ նաև հաջորդող բոլոր սերունդներին: Միայն նրան, ով պահում էր պատվիրանը, տրված էին առատությունն ու ազատությունը. պատվիրականությանը սակայն հետևում էր աղքատություն և ստրկություն»:

«Այն օրվանից, երբ հանդես եկան նախանձն ու կռվարարությունը, ինչպես նաև օձի խորամանկ ուժը, որ միշտ հակամետ է զգայական թուլությամբ մոլորեցնելու և ուժեղներին տկարների դեմ գրգռելու, տրոհվեց միասնականությունը այլականության մեջ, և բնության ազնվագույնը քայքայվեց ընչասիրության հետևանքով և բռնատիրական օրենքների օժանդակությամբ: Ուշադրություն դարձրու սկզբնական միության և ոչ թե հետագա քայքայվածության, Արարչի օրենքներին և ոչ թե բռնապետների հրահանգներին»[11]:

«Պետք չէ, որ լուծը ավելի ծանր լինի և ժառանգական մեղքի պատիժը՝ ավելի ճնշիչ: ...Մեր թշվառության պատճառ եղողը [դրախտի] այն ծառն է, այն անիծյալ ճաշակումը, այն մոլորեցնող օձը, այն անհնազանդությունը, որ ճակտի քրտինք շպրտեց կյանքին»[12]:

Իրենեուս Լիոնացին «Ընդդեմ հերետիկոսաց» գրքում[13] գրում է. «Բայց սա Ադամն է, և եթե մարդ ճշմարտությունն է ուզում ասել, սա այն առաջնաստեղծ մարդն է, որի մասին, համաձայն Սուրբ Գրքի, Տերն ասում է. «Հորինենք մարդուն մեր պատկերի նմանության համաձայն»: Մենք բոլորս նրանից ենք և այդ իսկ պատճառով նրա անունն ենք ժառանգել: Բայց եթե մարդը փրկվելու է, ուրեմն փրկվելու է նաև այն մարդը, որն սկզբից գոյացավ: Անմտություն կլիներ, եթե նա, ով ուժգինս խոցված էր թշնամուց և ով գերվածների առաջինն էր, չփրկվեր նրանից (այսինքն՝ Քրիստոսից), ով հաղթեց թշնամուն, այլ փրկվեին միայն նրա զավակները, որոնց նա միևնույն գերության մեջ էր ծնել»[14]:

Լիոնացու հիշյալ հատվածում ցույց է տրվում մինչև Ադամ հասնող մարդկային բոլոր սերունդների առնչվածությունը միմյանց հետ: Այս իսկ պատճառով Քրիստոսով եղած փրկությունը վերաբերում է բոլորին, այդ թվում և Ադամին:

«Նրա զավակները» արտահայտությամբ Լիոնացին նկատի ունի Ադամին հաջորդող սերունդները, որոնք թեև **մեղքի գերության մեջ են ծնվում**, սակայն Քրիստոսով փրկվում են:

---

[8] *Gregor von Nyssa*, München, 1927, էջ 204:

[9] Անդ, էջ 216:

[10] *Ephrām der Syrer*, I Band, München, 1919, էջ 291:

[11] *Gregor von Nazianz*, I Band, München, 1928, էջ 294:

[12] Անդ, էջ 401:

[13] Սույն գրքի Դ և Ե մասերը հայերեն մի տարբերակ ունեն, որոնք լույս են տեսել գերմաներեն լեզվով Կարապետ Տեր-Մկրտչյանի և Երվանդ Տեր-Մինասյանի կողմից, Լայպցիգ, 1910 թ.:

[14] *Irenaeus*, München, 1912, էջ 311:

ԿԱՐՃ ՔԱՐՈԶՆԵՐ

Հաճոյքով և գնահատանքով հրատարակում ենք Տ. Կարեն քհն. Կտանյանի «Կարճ քարոզներ» խորագիրը կրող ժողովածուից քաղված հետևյալ երեք քարոզները, որոնց մեջ շինիչ և դաստիարակիչ բովանդակության հետ ի հայտ է գալիս աշխույժ ու գրավիչ մի ոճ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՐԿԱՆԱՅՔ ԵՒ ՄԻ ՄԵՂԱՆՉԷՔ»

Բարկությունը մարդկային կյանքի մեջ, ամենօրյա, ընդհանրական և ընդունված իրականություն մըն է: Ամեն մարդ կբարկանա, ամեն մարդ կջղայնանա, ամեն մարդ կհուզվի: Եվ սակայն բարկության վանական կերպեր գոյություն ունին, վայրույթի վանական աստիճաններ կան: Ասոր համար է թերևս, որ սաղմոսներու հեղինակը, ասկե հազարավոր տարիներ առաջ, քարոզած և ըսած է. «Բարկացեք, բայց մի մեղանչեք»:

Բարկությանց մեկ կարևոր մասը կարելի է իրավացի կամ բնական անվանել: Առօրյա խոսակցության մեջ շատ հաճախ «արդար վայրույթ» ասությունը կգործածենք: Աստված անգամ կբարկանաս: Հիսուս երբ բարկացավ, խարական առավ և Աստուծո տունը շուկայի վերածող մարդիկը վռնտեց: Մովսես իր վայրույթեն պատվիրաններու տախտակը փշրեց, և Հովհաննես Մկրտիչ իր հուզումեն փարիսեցիները «օձի ծնունդ» անվանեց: Աստուծո վայրույթը միշտ ալ արդար է:

Մարդկային բարկությանց տեսակներ կան, որոնք ոչ միայն արդար չեն, այլ մանավանդ խիստ վտանգավոր են: Կկործանեն, կջարդեն և ահ ու դող կպատճառեն: Բարկացողին բուն նպատակն է դիմացինը ցավցնել, լացնել, վշտացնել: Սույն բարկությանց միակ նպատակն է «Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման»: Մեղմություն, ալնվություն և ներում գոյություն չունի:

Տակավին բարկության այլ տեսակներ գոյություն ունին, որոնք կամքե անկախ պատճառներով երևան կուգան և մտային խանգարմանց արդյունք են: Այսպիսի անձինք ջղայնոտ կորավկին: Անոնք ամեն վայրկյան բարկացոտ վիճակ մը ունին: Եվ ամեն պըստիկ բանի կբարկանան: Այսպիսի բարկություններ թեև անվնաս են, և սակայն անտանելի են: Անոնք դիմացինն անգամ խելագարության կրնան առաջնորդել:

Մտային խանգարմանց արդյունք է նաև անձին, եսին, աշխարհին, ինքզինքին, կյանքին և գործին դեմ բարկանալու հիվանդությունը: Հոգեբան մարդիկ կըսեն, թե այսպիսի բարկությունը բարկությանց ամենեն խըղճալին և գեշն է: Անձին, հոգիին և կյանքին դեմ բարկացողը հուսահատ և ընկճյալ կանվանենք: Անհավատ, անհույս և անսեր մարդիկ անձնասպանության կմղվին, եթե չըբժշկվին:

Կա նաև քաղաքական կամ քաղաքացիական բարկություն: Ամբոխային, դասակարգային և ցեղապաշտական բարկություն: Իրողություն մը, որ աշխարհիս պատմության մեջ միշտ գոյություն ունեցած է և այսօր ալ գոյություն ունի: Բայց այս տեսակի բարկությունը մեր քարոզին մաս չենք ուզեր ընել:

Եթե բարկացոտ մարդոց թիվը շատ է, և եթե բարկության պատճառներն ու տեսակները այլական են, աշխարհիս վրա կան նաև մարդիկ, որոնք բարկանալ չեն գիտեր: Ասոնք անպայրույթ ծնած են: Վախկոտ և դողդոջուն կյանք մը կապրին: Կարծես թե հոգի, սիրտ և միտք չունին: Միշտ ասոր անոր

«այո, այո» կըսեն: Ամեն իրականություն կընդունին առանց գանգատելու: Կարծես թե ստրուկի կյանք մը ունեցած ըլլային:

Եվ ի վերջո, կան մարդիկ որոնք ոչ թե չեն կրնար բարկանալ, այլ չեն ուզեր բարկանալ: Ասոնք հանդարտաբարո, ինքնավստահ, և ըրածնին ու ըսածնին գիտցող մարդիկ են: Անոնց երեսին և հոգիին մեջ խաղաղություն կիշխե: Այս մարդիկ գիտեն իրենց կայրությը կսպել և կառավարել:

Հոգեբուժության դաշտին մեջ մասնագետ ճանչցված մարդիկ և հեղինակներ կքարոզեն, թե մարդ արարածը պետք է բարկանա և բարկութենեն պետք չէ վախնա, եթե կուզե առողջ կյանք մը ապրիլ: Եթե ջղայնոտ մեկն ես, ինքվինքդ մի կսպեր, կըսեն, մի պրկվիր, կըսեն, ընդհակառակը, ջանա ինքվինքեդ դուրս հանել ազեկ խենթացնող ուժերը: Պոռա, կանչե, և մարմնեդ ու հոգիեդ արձակե ազեկ բանտարկող զգացումները: Բայց դիմացինդ մի ցավցներ:

Եթե մեկը ծեծել կուզես, սենյակդ մտիր, դուռը գոցե, բարձ մը առ, և պոռալով ու ճըչալով բարձը ծեծե որքան որ կուզես: Թող ուրիշներ խորհին թե դու խենթ ես, հոգդ մի ըներ, դուն այսպեսով է որ պիտի խաղաղիս և հանդարտիս:

Դեռևս Սաղմոսերգուին նպատակն այդի հոգեբաններուն պես էր, երբ կխրատեր «Բարկացեք, բայց մի մեղանչեք»: Բարկացիր, և թող բարկանան կամ բարկացնեն քեզ: Բայց ներե և հաշտվե օրը իրիկուն չեղած: Թող ուրիշը յոթն անգամ քեզ կայրացնե, դուն պատրաստ եղիր անոր 77 անգամ ներելու: Մոռնալ գիտցիր: Բարկության հետ խնդալ սորվե: Խնդուք և կայրություն կյանքի անբաժան մասնիկներն են: Եթե բան մը քեզի կբարկացնե, անմիջապես լքե կայն և ուրախ գործի մը սկսե: Տես, թե որքան պըտղաբեր և երջանիկ պիտի ըլլաս:

«ԵՂԻՑԻ ՁԵՐ ԲԱՆ՝ ԱՅՈՆ ԱՅՈ, ԵՒ ՈՉՆ ՈՉ»

Ճշմարտախոսությունը առաքինություն մըն է, և ստախոսությունը մեղք մըն է: Ճշմարտախոս անհատը հարգելի, սիրելի և վստահելի մեկն է: Մինչդեռ ստախոսը ատելի, գարշելի, անարժեք անձնավորություն մըն է:

Քրիստոնեական կրոնի ուսուցմանց մեջ ճշմարտախոսությունը բարձր և կարևոր տեղ մը կգրավե: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ճշմարտախոսության մեծ արժեք ընծայեց և կայն «Լեռան քարոզին» մասնիկը ըրավ: Քրիստոսի համար ճշմարտախոսությունը պարզ և հստակ օրենք մըն է և կպահանջվի ամեն անհատե ամեն պարագայի տակ: «Թող այոդ այո և ոչդ ոչ ըլլա» ըսավ Քրիստոս: Այո-ին և ոչ-ին կապված կանական խոստումներ և երդումներ բացարձակապես ավելորդ են և չարության աղբյուր են, ըսավ Ան:

Հին Ուխտի մեջ երդումներ ընելը և կանական խոստումներ ընելը երկարապատում սովորություն մը և պահանջք մըն էր: Երդում ընելու սովորությունը այսօր ևս գոյություն ունի, մանավանդ կառավարական և դատական գործառնությանց մեջ· Ըստ Քրիստոսի քարոզության, սակայն, երդում ընելը ավելորդ և անպետ սովորություն մըն է: Ճշմարտախոս և խոսքին տեր քրիստոնյա մը պետք չունի յուր խոսքին վԱստված վկա կանչելու և կամ երկնքի և Սուրբ Գրոց անունով երդում-պատառ ըլլալու: Աստված, սրբությունք, կյանք, մահ և սիրտ խաղալիք բաներ չեն և թեթևությամբ պետք չէ առնվին: Երդում ընելը չար արարք մըն է և այլ մեղքերու կառաջնորդե: Շատ է թիվը անոնց, որոնք իրենց երդումը և խոստումը դրժած են: Անոնք «Աստուած վկայ» կկանչեն, «Քրաս մայ հարթ» կգոչեն, բայց սուտ են և կեղծ են:

Ստախոսությունը և կեղծավորությունը, սուտը որպես ճշմարիտ ծախելու արվեստը ամենօրյա իրականություն մըն է: Այս արվեստը շատերու մոտ առաքինություն կնկատվի: Առնենք, օրինակի համար, առևտրական աշխարհի մեջ, ամեն արտադրություն որպես «լավագույն» և «գերազանց» և «չնաշխարհիկ» հռչակելու սովորությունը: Մըտիկ տվեք շուկայի մեջ եփած, ճշմարտախոս ձևացող առուծախի մարդոց խոսքերը: Անոնք մեկ վայրկյանի մեջ կարող են հարյուր սուտ խոսիլ առանց խղճահարության: Անոնք կհավատան թե, այսօր ապրուստ շահելու համար մարդս պետք է սուտ խոսի:

Սուտն ու կեղծիքը, առաքինություն մը չէ սակայն և չի կրնար ըլլալ: Շատ ողբերգություններ գոյություն չէին ունենար եթե մարդիկ ճշմարտախոսութենե չվախնային և հետևեին Քրիստոսի քարոզության: Ով բարեկամ, թող այոդ այո, և ոչդ ոչ ըլլա:

Այո-ի և ոչ-ի խնդիրը հոգեբանության դաշտին մեջ ևս կարևորություն ստացած է: Այս օրերս հրապարակի վրա գիրք մը կա, որ կըքարոզե. «Եթե ի սրտե կփափաքիս «ոչ» ըսել, այն ատեն «այո» մի ըսեր»: Շատեր կըսիրեն կեղծավորություն ընել, անտեղի փափկանկատություն ցույց կուտան և քաղաքավարության վոհ կերթան: Կուզեն մերժել, կուզեն «ոչ» ըսել, կփափաքին «այո» չըսել, բայց անկարող են: Ահա այսպիսյաց այս գիրքը խրատ կուտա և կըսե. «Փոփոխամիտ, տկարամիտ, վախկոտ և տա-

տամսոտ մի ըլլար: Եթե «այո» ըսիր, մի՛ խղճահարիր: Մյուս կողմեն համառ, հաստատամիտ և աներեր մի՛ ըլլար: Եթե «այո» ըսած էիր և կուզես միտքդ փոխել, մի՛ վախենար, փոխե՛: «Ըսածս ըսած է» «Ես թուքս չեմ կլլեր» մի՛ ըսեր:

Ավետարաններուն մեջ երկու եղբայրներու առակը կա: Ասոնցմե առաջինը խոստացավ դաշտ երթալ և գործել իր հորը համար, բայց չգնաց: Ան սուտ խոսեցավ և յուր հայրը խաբեց: Երկրորդը սակայն «չեմ երթար» ըսավ և հետո զղջաց, իր հորը վրա մեղքցավ և միտքը փոխելով՝ գնաց և գործեց: Ան, որ իր խոսքին տերը չէ, անարժեք մեկն է: Ընկերության մեջ պատիվ չունի: Իր խոսքին տերը եղողը սակայն քաջ, անկեղծ, հասուն և ճակատաբաց անձնավորություն մըն է: Նմանող եղիր այս վերջինին:

«ԵՍ ԵՄ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀԻ»

«Ես եմ լոյս աշխարհի» խոսքը թեև կարճ, սակայն չափազանց կարևոր և գեղեցիկ խոսք մըն է: Զայն կկարդանք Հովհաննու Ավետարանի 8-րդ գլխուն մեջ: Մեր Տերը Հիսուս Քրիստոս այս խոսքը արտասանեց փարիսեցիներու և դպիրներու հետ լուրջ խոսակցություն մը ըրած ատենը:

Ի՞նչ ըսել է «Ես եմ լոյս աշխարհի»: Ի՞նչ է լոյսին պաշտոնը: Հիսուս ինչո՞ւ «լոյս» բառը ընտրեց յուր ինքնությունն ու էությունը մեկի հասկնալի և իմանալի ընելու համար:

Լոյսը աշխարհի ստեղծագործության մեջ առաջնակարգ տեղ մը կգրավե: Աստված լոյսը ստեղծեց ուրիշ ամեն բանե առաջ՝ ստեղծագործության առաջին օրը: Լոյսի գոյութենեն առաջ տիեզերքը անկայուն, անորոշ և խավարային վիճակի մը մեջ էր: Եվ երբ Աստված գոչեց՝ «Եղիցի լոյս», լոյսը գոյություն առավ, արևը, լուսինը և աստղերը հաստատվեցան, խավարը հալածվեցավ, և թե՛ երկինք, թե՛ երկիր լոյսերով ողողվեցան: «Եվ ետես Աստուած զի բարի է»:

Եվ ահա, լոյսերու արարիչ և խավարներու հալածիչ Հայր Աստուծո Միածին Որդին կըմարդանա, աշխարհ կուգա և կհայտարարե. «Ես եմ լոյս աշխարհի»: Այո՛, թեև աշխարհ լոյսերով ողողված է, արև կա, լուսին կա, և մարմնավոր լոյսը անպակաս է, և սակայն այս աշխարհը դեռ լոյսի պետք ունի, քանզի մարդիկ հոգևոր և մտային խավարներու մեջ կբնակին: «Աչք ունին և ոչ տեսանեն» կըսե մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: «Ես եկա որպես լոյս: Եկա, որ ձեր հոգևոր աչքերը բացվին: Ան որ զիս կտեսնե, խավարեն լոյսին եկած կըլլա և լոյսի կյանքը ստացած կըլլա»:

Առաքյալք Քրիստոսի լուսավոր էության մասին առաջին անգամ վերահաստ եղան, Թաբոր լեռան վրա, երբ Հիսուս պայծառ կերպարանք կգեցավ, և յուր երեսները արևի պես լուսավորվեցան: Պողոս առաքյալ այս լուսավոր Քրիստոսն էր, որ տեսավ Դամասկոսի ճամբուն վրա և կուրացավ: Այս օրերս գիրք մը տպված է «Լայֆ աֆթըր լայֆ» անունով: Այս գրքին մեջ մահը տեսնող հիվանդներ կվկայեն, թե իրենք լուսավոր էակ մը տեսած են, և այդ էակը Քրիստոսն է:

Արեգակն ու լուսինը, լոյսն ու կրակը միշտ ալ կրոններու և պաշտամանց առարկա եղած են: Բայց ոչ մեկ կրոնի առաջնորդ, ըլլա ատիկա Մուհամմետ, Պուտտա կամ Գոնֆուկիոս, ինքզինք «լոյս» հոչակած է: Միայն Հիսուս Քրիստոսն է, որ «Ես եմ լոյս աշխարհի» կըսե:

Որպես «լոյս» ճանչցվեցավ նաև Քրիստոսի քարոզած կրոնը: Քրիստոնեությունը որպես լոյս տարածվեցավ խավարյալ աշխարհի չորս ծագերուն: Հայերս Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները «Առաջին Լուսավորիչ» անվանեցինք: Եվ Տրդատ թագավորն ու ամբողջ հայ. աշխարհը քրիստոնյա ընող մեր Ս. Գրիգոր Պահլավունի Հայրապետը «Լուսավորիչ» որակեցինք: Մենք տակավին «լուսավորչական» բառը կգործածենք մենք կմեկ ուրիշներուն ծանոթացնելու համար:

Հայ Եկեղեցվո մեջ Քրիստոսի նվիրյալ բոլոր տերունի տաղավարներն ու տոները կըճանչցվին որպես լոյսի տոներ: Թե՛ Ծնունդի և թե՛ Զատիկի նախագիշերին կատարվող պատարագը ճրագալույց կանվանենք: Տյառնընդառաջը կուտ լոյսի տոն է, և Վարդավառը Քրիստոսի Պայծառակերպության օրն է: Եկեղեցիներու մեջ մում, լոյս, կանթեղ և ջահ կգործածենք: Եվ մեր Աստվածը «Լոյս արարիչ լուսոյ» կհոչակենք:

Մարդիկ կան, որոնք լոյսը չեն սիրեր: Լոյսը կատեն: Խավարը կնախընտրեն: Կարծես թե խավարը կպաշտեն և խավարամիտ են: Այսպիսյաց համար Հիսուս ըսած է. «Քանզի գործք նոցա չարութեան են»: Մենք՝ քրիստոնյաներս, լուսո որդիներ ենք սակայն: Քրիստոս մեկի պարտականություն տված է խավարին դեմ պայքարիլ: Եթե Քրիստոս յուր լոյսին շնորհիվ մեկ խավարեն փրկած ու մեկի կյանք շնորհած է, մեկի կմընա այդ լոյսը տարածել:

ԿԱՐԵՆ ՔԱՀԱՆԱ ԿՏԱՆՅԱՆ



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

1982 թվականը Ռումինիայի հայկական համայնքի կրոնական կյանքում եղել է աշխույժ և բեղմնավոր գործունեության մի տարի:

Սուչավայի հոգևոր հովիվ երիտասարդ Տ. Արամայիս աբեղա Շլուկյանի եռանդուն ջանքերի շնորհիվ Սուչավայի հայոց Ս. Խաչ եկեղեցին այժմ հոգևոր կենդանություն է ապրում իր կալմակերպված կյանքով: Ամեն կիրակի այնտեղ կանոնավոր կերպով տեղի ունեցող սուրբ պատարագի արարողությունները դեպի իրենց են քաշում մեծ թվով հայ հավատացյալներ, որոնք հոգեկան մեծ բավարարությամբ հետևում են արարողությունները:

Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը և Տ. Արամայիս աբդ. Շլուկյանը Ս. Հաճկատար վանքի բակում, ուխտավորների հետ (15 օգոստոս 1982 թ.)

ների ընթացքին և հաճույքով լսում հայկական եկեղեցական երաժշտությունը: Բացի այդ, ամեն հինգշաբթի և ուրբաթ օրերը, ուխտավորների հոծ խմբերի ներկայությամբ, Հաճկատար վանքում կատարվում են եկեղեցական մասնավոր պաշտամունքներ և աղոթքներ հայերեն լեզվով, որոնց մասնակցում են ուխտավորներ, խոր հավատքով և սիրով:

Հոգեշնորհ Տ. Արամայիս աբեղան Էջմիածնի հոգևոր ճեմարանի նախկին շրջանավարտ սաներից է: Նա միաժամանակ հոգևոր հովիվն է Բոթոշանի, Թրկոկնայի, Յաշի և Ֆոկշանի հայ եկեղեցական համայնքների, ուր ժամանակ առ ժամանակ այցելում է և պատարագ մատուցում տեղի հայոց եկեղեցիներում՝ Ռումինիայի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Տիրայր արքեպիսկոպոսի կարգադրությամբ:

Այս տարի Սուրբ Աստվածածնի տոնական հանդիսություններն անց են կացվել աննախընթաց խանդավառությամբ Ս. Հաճկատար վանքում: Հանդիսավոր ս. պատարագ է մատուցել Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը: Պատարագին ներկա են եղել հարյուրավոր հայ ուխտավորներ և մեծ թվով օտար հավատացյալներ՝ եկած արտասահմանից և Ռումինիայի վանական քաղաքներից:

Վանքի եկեղեցում և նրա շրջափակում հայր Արամայիսի ջանքերով այս տարի հաջողվել է անցկացնել էլեկտրական սարքավորում և հաստատել մի ջանթարգել:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄՈՒՄ

Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի եկեղեցական դասն ու համայն հավատացյալները հոգեկան անսահման հրճվանքի մի օր են անցկացրել կիրակի, սեպտեմբերի 26-ին, 1982 թ., Վարագա Սուրբ Խաչի տոնի օրը: Այդ օրը Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի բարեջան առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, ի գլուխ թեմի հոգևոր հովիվների, քահանայության սուրբ կարգին է կոչել բարեջնորհ Հովսեփ սարկավագ Մովսիսյանին՝ օծելով նրա ճակատն ու ձեռքի ափերը և նրան վերանվանելով Տ. Վազգեն քահանա:

Այդ առթիվ առաջնորդ սրբազան հայրը նորընծա քահանային մաղթել է արդյունաշատ հոգևոր ծառայություն՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Ձեռնադրության արարողությանը մասնակցել և ներկա են եղել Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանը, Տ. Իսահակ ծ. վարդապետ Ղալարյանը, Օքլենդի հայոց հոգևոր հովիվ Տ. Լևոն վարդապետ Աբելյանը, Լոս Անջելոսի հայոց հոգևոր հովիվ Տ. Արշակ ծ. վարդապետ Խաչատրյանը, Տ. Սիփան վարդապետ Մխսյանը, քահանա հայրեր և բազմաթիվ հավատացյալներ:

Արժանապատիվ Տ. Վազգեն քահանա Մովսիսյանը ծնվել է 1956 թվականին Կալիֆոռնիայի նահանգի Լոս Անջելոս քաղաքում: Փոքր հասակից, որպես դպիր, ծառայել է Լոս Անջելոսի հայոց Ս. Հակոբ եկեղեցում: Հետագայում նա իր գործոն աշխատակցությունն է բերել թեմի Հայաստանյայց Եկեղեցու Երիտասարդաց Կազմակերպության մեջ, ինչպես նաև մասնակցել է թեմի կողմից կազմակերպված բազմաթիվ ձեռնարկումներին:

1973—1977 թվականներին Տ. Վազգեն քահանան սովորել է Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում և ուսման շրջանը հաջողությամբ ավարտելուց հետո ստացել է Պսակավոր Արվեստից տիտղոսը հոգեբանության և կրոնական առարկաների գծով:

1977 թվականին նա եկել է Մայր Աթոռ Ս. Էջմիածին և մեկ տարի ուսանել հոգևոր ճեմարանում՝ հետևելով հայագիտական, կրոնական և ծիսագիտական դասընթացներին: Նույն տարին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ի ներկայության Ամենայն Հայոց Հայրապետի, ձեռնադրվել է սարկավագ:

Ապա, վերադառնալով Լոս Անջելոս, նա մեկ տարի հետևել է Քլերմոնթի աստվածաբանական ուսումնարանի դասընթացներին և 1981 թվականին, ավարտելով իր թեզը, ստացել է աստվածաբանական գիտությունների մագիստրոսի տիտղոս:

1980 թվականից սկսած նա ծառայել է Լոս Անջելոսի Ս. Հակոբ և ապա Սանտա Կլարա հովտի հայոց եկեղեցիներում որպես հոգևոր հովվի օգնական և հոգևոր մատակարար:

Տ. Վազգեն քահանան այժմ իր քառասունքն անցկացնում է Լոս Անջելոսի հայոց Ս. Հակոբ եկեղեցում՝ հոգևոր ղեկավարության ներքո Տ. Արշակ ծ. վարդապետ Խաչատրյանի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Վեհափառ Հայրապետի, շնորհավորում է նորընծա Տ. Վազգեն քահանա Մովսիսյանի քահանայական ձեռնադրությունը և բարեմաղթում, որ նա ակնվությամբ, հավատքով ու նվիրումով իր ապագա կյանքն ու գործը կապի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անսակարկ ծառայության վսեմ գործին՝ հանդիսանալով անձնդիր հոգևոր սպասավորը իր Մայր Եկեղեցու և հարազատ ժողովրդի:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԼԻՈՆՈՒՄ

Հայ ժողովրդի դարձը քրիստոնեության՝ տեղի ունեցավ Միլանի հրովարտակից առաջ, չորրորդ դարի սկզբին, երբ հռոմեական հալածանքները դեռ ծանրորեն ճնշում էին քրիստոնեական կյանքի վրա կայսրության բոլոր սահմաններում: Այդ նույն ժամանակաշրջանը, սակայն, հանդիսացավ աստվածաբանական վեճերի և բանաձևումների մի շրջան, երբ, Կոստանդիանոս կայսեր դարձով, քրիստոնյա հավատացյալները դուրս եկան Հռոմի գետնադամբարաններից՝ կառուցելու համար իրենց եկեղեցիները և դավանելու իրենց հավատքը ազատորեն: Բոլոր քրիստոնյաների համար հավատքի մի միություն ստեղծելու անհրաժեշտությունը աշխուժացրեց արիոսական բանավեճերը և 325 թվականին հանգեց Նիկիո տիեզերական ժողովին: Այս ժողովի նախաձեռնողը և նախագահը եղավ ինքը կայսրը, որի գլխավոր մտահոգությունն էր հաղթական եկեղեցին տեսնել միավորված իր Հավատո հանգանակի մեջ: Նիկիո ժողովին մասնակցեց Սբ. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը: Նա իր հետ Հայաստան բերեց Նիկիական հանգանակը և այն ներկայացրեց իր հորը, որն այդ ժամանակ արդեն քաջվել էր մի լեռ՝ ավարտելու իր կյանքի օրերը ճգնության և մենակեցության մեջ: Ժողովը այդ հանգանակի վերջում ավելացրել էր մի հայտարարություն՝ մի նկովք, որը մինչև այսօր արտասանվում է պատարագի ընթացքում սարկավագի կողմից. «Իսկ որ ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ Հոգի, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել կՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական Եկեղեցի»: Սուրբ Գրիգոր հայրապետը դրան ավելացրեց հետևյալը. «Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն և միոյ աստուածութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն»: Եվ նույն այս խոսքերը կրկնելով՝ պատարագիչ քահանան երկրպագում և համբուրում է Ավետարանը, որ նրան մեկնում է սարկավագը: Հայ Եկեղեցին այդ նկովքի մեջ երկու անգամ հիշատակել է սուրբ Հոգին բացահայտ մի մտահոգությամբ՝ հաստատել ուղղափառ հավատքը եռանձն Աստուծո նկատմամբ: Հավատո հանգանակը նույնպես մի փոքր տարբերվում է հռոմեական կաթոլիկ եկեղեցում գործածվող Հավատո հանգանակից, որը ծանոթ է «Նիկիական-Կոստանդնուպոլսական հավատամք» անունով: Տարբերությունը հետևյալ երկու կետերի մեջ է. «Համագոյակից» բառը փոխարինված է «նոյն ինքն է բնութենէ» Հոր արտահայտությամբ: Այնուհետև երկու անգամ ավելացված է «մարմին» բառը. «Գալոց է **նովին մարմնով** և փառօք Հօր՝ ի դատել...», ինչպես նաև վերջում, վերջին դատաստանի հիշատակության մեջ՝ «Ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և **մարմնոց»:**

Հայ Եկեղեցին, հաստատված լինելով և ծաղկում ապրելով Կապադովկիայի արևելքում, ինչպես նաև սկզբնական շրջանում դրված լինելով Կեսարիայի դպրոցի հովանու տակ հենց իր՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի կողմից, շատ խորը ապրեց արիոսական տագնապը: Երկու հեղինակավոր աստվածաբաններ իշխեցին նրա մտածողության վրա՝ Սբ. Բարսեղ Կեսարացին Վեցօրյակի մասին իր քարոզներով—գրվածք, որ դասական մի շարադրանք է աշխարհի ծագման, կառուցված-

քի և կարգացման վերաբերյալ—ինչպես նաև Սբ. Աթանասը, որն իր «Ընդդեմ արիոսականների» աշխատությամբ հերքում է աշխարհի ստեղծագործության որոգինեսյան ըմբռնումը և Աստուծո Երրորդության գաղափարի հիմքերն է դնում: Հայոց եկեղեցիներում արտասանվող Հավատո հանգանակը վերագրվում է Սբ. Աթանասին, «Համագոյակից» (ὁμοούσιος) բառի բացթողումը, որի շուրջ ծավալվեցին արիոսական բանակռիվները Նիկիո ժողովից հետո, պատահական չէ: Նախ՝ այդ բառը մի քիչ շատ փիլիսոփայական տերմին է և երկրորդ՝ չափից դուրս **վարդապետականություն** է բուրում, ըստ մեր Եկեղեցու Հայրերի ճաշակի, որոնք նախընտրեցին ավելի պարզ մի բառ՝ «Բնութիւն», երբ խոսքը Երրորդության անձերին էր վերաբերում: Նիկիո ժողովին հաջորդած դարերում բորբոքված աստվածաբանական բանավեճերի ամբողջ ընթացքում մեր Եկեղեցու Հայրերը տևապես հակադրվեցին հավատքի ավանդությունը իմացականացնելու կամ վարդապետականացնելու բոլոր փորձերին: Նրանք նախընտրում էին հավատարմորեն պահպանել «Քրիստոսի ոգին» Եկեղեցու ծեսի, սրբության, ավանդության և ճշմարտության կենդանի ճանաչման մեջ: Հավատքի ճշմարտությունների սիստեմավորված ամեն տեսակի բացատրության մեջ նրանք տեսան բանական կատեգորիաների կաղապարների մեջ բռնի կերպով կրոնական մի մտածում մտցնելու վտանգը, որի բնույթն իսկ օտար է այդպիսի մի կարգի:

Քրիստոնեական մտածողության հելլենականացման դեմ մղվող այդ պայքարի ժամանակաշրջանում, պայքար, որը առաջ էր եկել նոր-պլատոնական տերմինոլոգիայի և աշխարհի ստեղծագործության որոգինեսյան ըմբռնման որդեգրումով, Տերտուղիանոսը չէ՞ր ասել միթե՝ «Մեկ համար չկա այլևս հետաքրքրություն՝ Հիսուս Քրիստոսից հետո, չկա այլևս որոնում՝ Ավետարանից հետո: Քանի որ մենք հավատում ենք, ուրիշ ոչինչ չենք ցանկանում, քան հավատալը, որովհետև նախ մենք հավատում ենք, որ հավատալուց այն կողմ չպետք է անցնենք» (De Praescriptiones hacreticorum VIII) և մի ուրիշ տեղ՝ «Փիլիսոփաները հերետիկոսների նախամայրերն են» (De anima 3):

Եփրեմ Ասորին, որի ազդեցությունը մեծ է եղել հայ աստվածաբանական մտքի վրա, «Կնիք հավատո» անունը կրող աշխատության մեջ, որը Եկեղեցու Հայրերի գրվածքներն ամփոփող մի ժողովածու է՝ հայերենի թարգմանված է դարում, խոսելով Երրորդության խորհրդի մասին՝ ասում է. «Ուզում եմ մոտենալ, բայց վախենում եմ... չմոտենանք, որպեսզի չհեռանանք, չհեռանանք, որպեսզի չմոլորվենք... Արհամարհելի փոշու հատիկին թույլատրվա՞ծ է միթե խոսել համագոյակից իր Արարչի մասին... Դու ճանաչեցիր նրա անունը, դավանի՛ր նրան և մի՛ վերլուծիր բնավ, քանզի դու չես կարող ճանաչել նրա բնությունը...»:

Ճանաչել Աստուն՝ հնարավոր է միայն այն չափով, որչափով որ նա հայտնում է իրեն, որչափով որ Երրորդությունը հայտնվում է փրկության տնտեսության մեջ, որչափով վերանցականը՝ անճանաչելին (transcendant) գործում է ներունակի՝ ճանաչելիի (immanent) մակարդակի վրա:

Աստուծո առաջին գործը ստեղծագործությունն է, և Տիեզերքի Արարիչ Աստուծո նկարագրության մեջ է, որ Եկեղեցու Հայրերը փորձեցին հաստատել Երրորդության վարդապետությունը:

Աթանաս Ալեքսանդրացին, որին հետևեցին կապադովկիացիներն ու հայերը, կարգացնում է Աստվածաշնչից ժառանգված տիեզերաբանության մի տեսություն, որը հակադրվում է ստեղծագործության վերաբերյալ հունական ըմբռնումներին իբրև ցիկլային հավիտենական կրկնություն աշխարհների: Ըստ այդ ըմբռնումների, սկզբնական, իմացական ստեղծագործությունը կայուն է: Այն իր **տրամաբանական** բացատրությունը գտնում է Աստուծո էության հայեցողության մեջ, և նրա առաջին շարժումը ապստամբության մի ձև է Աստուծո դեմ: Ստեղծագործության մեջ փոփոխությունն ու այլայլությունը անկման հետևանքներ են և հետևաբար՝ հիմնովին վատ:

Ստեղծագործության այս ըմբռնմանը, որը դուրս է բերված Աստուծո փիլիսոփայական անանձնական գաղափարից, որպես բացարձակի, Աթանասը և Բարսեղը հակադրում են ստեղծագործական արարքի մեջ դրսևորվող աստվածային բացարձակ վերանցականության և ազատության աստվածաշնչական հղացքը: Աստվածային նախախնամությունը, որը աշխարհին տվեց **էությունը**, պահպանում է նաև նրա **գոյությունը**, բայց ոչ ի վնաս աշխարհի ստեղծված սեփական դինամիզմի, որը հենց իր՝ ստեղծագործական ծրագրի մասն է կազմում:

Ըստ աստվածաշնչական ըմբռնման, այնպես, ինչպես այն հասկացված է մինչև այսօր հրեա մտածողների կողմից, ստեղծագործության մեջ կա մի պայմանականություն: Աստված աշխարհը չստեղծեց, որպեսզի հետո նրան տար կանխագծված մի կողմնորոշում, որի համաձայն, աշխարհը անհրաժեշտաբար առաջ ընթանար սկզբից դեպի մի վախճան: Աստված աշխարհն ստեղծեց պայմանով, վը-

տանգով, արմատական մի անապահովությամբ: Թալմուդական միդրաշը հետևյալն է ասում Աստուծո բերանով, մինչ նա արդեն կործանել էր քսանվեց աշխարհ—որոնցից ոչ մեկն այն չէր, ինչ նա ուզում էր—և նոր էր ստեղծել քսանյոթերորդը՝ մեր աշխարհը. «Միայն թե այս մեկը գոյատևի»: Աստված ինքն իսկ երաշխիք չունի, որ աշխարհը կգոյատևի, որովհետև աշխարհը կարող է գոյատևել այն դեպքում միայն, եթե մարդը իրենից ինչ-որ բան դնի այնտեղ: Ըստ Աբրահամ Հեղելի խոսքի՝ «Աստված կարիք ունի մարդուն»: Աստված աշխարհը չէր ստեղծի նրա համար, որպեսզի աշխարհը ինքնաբերաբար հետևեր աստվածային ջավդին: Աշխարհի ստեղծագործությունը մի վտանգ է, որ Աստված հանձն է առել, և մարդիկ այդ վտանգը պետք է բաժանեն:

Սբ. Աթանասը և նրանից հետո կապադովկյան Հայրերը, ապա նաև Սբ. Օգոստինոսը և Արևմուտքի քրիստոնյա մտածողները ստիպված եղան ուրվագծել մի տիեզերաբանություն և մասնավորապես մի տեսություն ստեղծագործության վերաբերյալ, որպեսզի կարողանային պայքարել Արիոսի դեմ և պաշտպանել Քրիստոսի աստվածությունը: Սնդիրը վերաբերում էր Հովհաննեսի Ավետարանի նախաբանի հետևյալ խոսքերը հասկանալուն. «Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ որ ինչ եղևն: Նովաւ կեանք էր...» (Հովհ. Ա, 3—4): Քանզի Աստուծո առաջին գործը և նրա հանձն առած առաջին վտանգը աշխարհի ստեղծագործությունն է. դա առաջին գործն է նաև փրկության տնտեսության: Արևելքի քրիստոնեական միտքը Աստուծո ուսմունքն ընդհանրապես դրել է միշտ քրիստոսաբանությունից առաջ, որովհետև նրա առաջնահերթ մտահոգությունն է եղել հասկանալ Քրիստոսի անձը որպես երկրորդ եղելություն, երկրորդ վտանգ, որ Աստված հանձն է առել՝ ապահովելու համար մարդկանց երջանկությունը: Աշխարհի մեջ Աստուծո գործով հայտնված «տնօրինական» Երրորդությունը ուրեմն միակ հիմքն է, որը թույլ է տալիս հաստատելու, որ Աստված իրականում, պարադոքսալ կերպով և անհասկանալիորեն, վերանցական և «ներունակ» մի Երրորդություն է:

Ահա թե ինչու «Աստուծո իրականության մերձեցումը» նշանակում է կենդանի Աստուծուն վերաբերող մարդկային հարցը բերել-հասցնել ճիշտ այնտեղ, որտեղ կենդանի Աստվածն ինքը հայտնում է իրեն իր ամբողջ լրիվությամբ, այսինքն Աստուծու մեջ, որը Քրիստոսի միջոցով հաղորդվում է Սուրբ Հոգով:

«Որ ետեսն զիս՝ ետես զՀայրն» (Հովհ. ԺԴ 9), Երրորդությունը չի հայտնվել որպես «վարդապետություն», այլ՝ որպես Որդին ինքը, որն ապրում է մեր մեջ, որն օժտված է Հոգով և այն ուղարկում է մեզ:

Եփրեմ Ասորու այն սարսափը, թե ինքը կարող է կորցնել իր հավատքը՝ չափազանց հեռու մղելով, կամ ավելի շուտ, չափազանց շատ մոտենալով Երրորդության խորհրդին, ցույց է տալիս նրա գլխավոր մտահոգությունը, որ է՝ **փրկությունը Քրիստոսով:** «Աստված մեզ հետ»—Երրորդության այս վարդապետությունը հաստատվեց Նիկիո ժողովում և արտահայտվեց նրա Հանգանակի մեջ: Մեր Եկեղեցու Հայրերը Նիկիո ժողովի որոշումը հասկացան որպես **Քրիստոսեղելության** հոչակում. այն է՝ Աստված մարդացավ մեր փրկության համար, այսինքն՝ դեպի Աստված մեր վերադարձի համար:

Մինչ արևմտյան աստվածաբանությունը գլխավորաբար պատկերացնում է Մարդեղությունը որպես աստվածային «մեկ» անձի մարդացում՝ բացահայտելու համար այնուհետև պատշաճության պատճառները, որպեսզի այդ անձը լինի Որդին, Արևելքի աստվածաբանները մարդեղությունն ընդունում են որպես Աստուծո մաքուր և պարզ հայտնություն: Հետևաբար, մարդացած Աստվածը չէր կարող այլ բան լինել, քան Որդի-Լողոսը:

Բյուզանդացիները, Քաղկեդոնի պատճառած խզումից հետո մանավանդ, միշտ մեղադրել են մեզ «քրիստոսակենտրոն» լինելու մեջ, ի հակադրություն իրենց երրորդապաշտական հայեցողությունների, որովհետև մեր Եկեղեցու բոլոր Հայրերը հայտնված և «մեր մեջ բնակվող» Աստծուն տեսել են Քրիստոսի անձի մեջ, սուրբ Հոգու ներգործությամբ. «Քրիստոս է իմ Աստուած և փառաւոր արարից զնա, Աստուած փրկութեան իմոյ»: Մեզ համար նրա աստվածային անձը կարիք չունի բացատրության: «Բան» փիլիսոփայական հասկացությունը ջնջվում է «Որդի» հասկացության առաջ: Լողոսի արարչագործական իր դերով չէ, որ բացատրվում է նրա աստվածային անձը, որովհետև այդ կարգի մի բացատրություն մեզ կտաներ դեպի Արիոսը, որն ասում էր, թե Աստված չի կարող հաղորդել իր գոյացությունը «substance) և հետևաբար՝ Լողոսը. քանի որ այն արդյունք է, չի կարող լինել Աստված:

Սուրբ Աթանասի գրվածքի հետևյալ հատվածը հստակորեն բացատրում է Եկեղեցու փաստարկումը. «Եթե Բանը ինքը ևս **մասնակցությամբ** և ոչ թե **ինքն իր մեջ** լիներ աստվածությունն ու Հոր գոյացական պատկերը, ապա չէր կարողանա աստվածացնել ուրիշներին, քանի որ ինքն աստվածացված կլիներ»: Նաև նույն հեղինակի հետևյալ

հատվածը. «Մենք չենք պաշտում արարածին, մենք պաշտում ենք Բանն Աստուծոյն, որ մարմնացած Տերն է ստեղծագործության... Մենք չենք պաշտում այդ մարմինը առանձինն՝ այն է բաժանելով Բանից, մենք Բանը չենք բաժանում իր մարմնից. այլ, ինչպես արդեն ասել ենք, գիտնալով, որ Բանը մարմնացավ, մենք այն ընդունում ենք որպես Աստված, որ գոյություն ունի մարմնի մեջ...»:

Այստեղ մենք դիպչում ենք Քրիստոսի նկատմամբ մեր Հավատո դավանանքի կգայուն մի կետին, որ ես վարանում եմ ներկայացնել ընդարձակորեն՝ վախենալով, որ իմ կաթոլիկ եղբայրներն ինձ մեղադրեն հնադարյան մի վեճ վերարծարծելու մեջ: Դա հայերի կողմից չորրորդ՝ Քաղկեդոնի ժողովի մերժումն է Քրիստոսի **մեկ** կամ **երկու** բնությունների մասին գոյություն ունեցող աստվածաբանական տարակարծությունների պատճառով: Ես կփորձեմ այստեղ համառոտակի ներկայացնել էականը և հստակեցնել այդ մասին մեր Եկեղեցու դիրքը ավելի շատ մեջբերումներով, քան թե քննադատություններով կամ մեկնաբանություններով:

Ժ դարում Հայ Եկեղեցու կաթողիկոսներից մեկը, Խաչիկ անունով, մի պատասխան է գրել Բյուզանդիայի պատրիարքներից մեկի մի նամակին, որ Հայոց Հայրապետին ուղարկվել է Մելիտինեի միտրոպոլիտ Թեոդորոսի միջոցով: Ուզում եմ սկսել՝ մի հատված մեջբերելով այդ երկար պատասխանից. «...Արդ, եթե մենք մկրտվել ենք նրա մահվամբ, ինչպես ասում է Առաքյալը (Հռոմ. Զ, 3—4), դավանում ենք չարչարանքներից վերծ նրա աստվածության և չարչարանքների ենթարկված նրա մարմնի մեկ բնություն, որովհետև այդպիսով մեր մկրտությունը կատարյալ կլինի Աստուծով և կկատարվի Տիրոջ մահվամբ: Դրա համար մենք չենք ընդունում Քաղկեդոնի ժողովի և Լևոնի Հատվածի նորամուծությունը, որոնք խոսում են Աստծու՝ մարմնացած Լողոսի երկու բնությունների մասին, այլ մենք դավանում ենք Քրիստոսին ոչ թե Աստված կամ մարդ միայն, ոչ թե Աստված և մարդ իրարից վատորոշված, այլ՝ մարմնացած Աստված, և, ինչպես Միածին՝ Հորից, նույնպես Միածին՝ իր մորից, մե՛կ Որդի, և որպես մեկ Որդի՝ մե՛կ Քրիստոս, և որպես մեկ Քրիստոս՝ մե՛կ անձ, և որպես մեկ անձ՝ մե՛կ անձնավորություն (ὑπόστασις), և որպես մեկ անձնավորություն՝ մե՛կ կամք, և որպես մեկ կամք՝ մե՛կ կորություն, և որպես մեկ կորություն՝ մե՛կ բնություն, քանի որ նրա բնությունը մի է»:

Քրիստոսաբանական մեծ բանակռիվը, որը 431 թվականին հանգեց Նեստորի դատապարտմանը Եփեսոսի ժողովի կողմից, ընկիպ առավ մեկ բառից՝ **Թեոտոկոս**-Աստվածամայր: Նեստորը անխոհեմությունն ունեցավ հարձակվելու այս բառի գործածության դեմ՝ ասելով, որ Մարիամը մի արարած է, նա չի կարող ուրեմն ճշտիվ Աստուծո մայր լինել: Միայն Հայրն է բացարձակապես **Թեոտոկոս:**

«Մեկ անձ և երկու բնություն՝ միավորումից հետո», բնություններից յուրաքանչյուրը պահելով իր հատկությունները անխառն և որոշակի: Քաղկեդոնական այս հաստատման մեջ Արևելքի աստվածաբան հայրերը տեսան մի վերադարձ դեպի նեստորականություն, որ այս անգամ կասկածի տակ էր դընում երկու կարևոր հավատո մասեր, որ Եկեղեցու առաջին երեք տիեզերական ժողովները մեծ դժվարությամբ էին հաստատել.

Աստվածամայր՝ Մարիամի համար.
Աստվածորդի՝ Հիսուսի համար.

Առաջին հաստատման մեջ նրանք երկրորդն է, որ ուզում էին ակնհայտնի դարձնել, որովհետև նրանց համար խնդիրը ամենից առաջ Հիսուսի մեջ տեսնելն էր իրենց պաշտամունքի առարկան: Աթանասը Ադելֆիուսին ուղղված իր նամակի մեջ հայտարարել էր. «Մենք չենք պաշտում արարածին, մենք պաշտում ենք Բանն Աստուծոյն, որ մարմնացած Տերն է ստեղծագործության... Մենք չենք պաշտում այդ մարմինը առանձինն՝ այն բաժանելով Բանից, և ոչ էլ Բանը պաշտել ուզելով՝ այն բաժանում ենք իր մարմնից. այլ, ինչպես արդեն ասել ենք, գիտնալով, որ Բանը մարմնացավ, մենք այն ընդունում ենք որպես Աստված, որ գոյություն ունի մարմնի մեջ»: Իսկ Գրիգոր Նազիանզացին էլ ավելացրել էր. «Եթե մեկը սուրբ Մարիամին չի ընդունում որպես Աստվածամայր, նա բաժանված է աստվածությունից...»:

Քրիստոսի մարմնի վերքերի և նրա մարդկային բնության մասին խոսող բյուզանդացիների առարկությունների դեմ հայերը վկայակոչում էին Գրիգոր Նյուսացու հետևյալ խոսքերը. «...Բառերով պիտի բացատրվեին, թե վերքերը ծառայինն են, որի մեջ է Տերը, և պատիվները՝ Տիրոջը, որի շուրջ է ծառան, այնպես որ վերքերն ու պատիվները դառնում են հասարակաց յուրաքանչյուր տարրի համար՝ Տերը ընդունելով իր մեջ ծառայի վերքերի կապտանշանները, իսկ. ծառան փառավորվելով Տիրոջը մատուցված պատվով: Դրա համար էլ խոսվում է փառքի անձնավորության Տիրոջ խաչի մասին, և ամեն լեզու խոստովանում է, որ Տեր Հիսուս Քրիստոսը Հայր Աստուծո փառքի մեջ է»:

Հայ Եկեղեցին հարել է Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացու դպրոցին և Եփեսոսի ժողովի որոշումներին հավանություն տալուց հետո այլևս չի ուզեցել շարունակել քրիստոսաբանական մի բանավեճ, որը խանգարում էր նրա հավատքին: Կյուրեղյան այդ քրիստոսաբանությունը հաստատում էր, որ միավորումը մարդկային և աստվածային բնության միջև սկսվել է հենց Հիսուսի հղացումով: Այդ միավորումից առաջ է եկել մեկ էություն, մեկ Քրիստոս, մեկ Տեր: Քրիստոսի միությունը միավորման արդյունք չէ: Կյուրեղի համար Քրիստոսը մեկ է ոչ թե միավորումով, այլ՝ հակառակ միավորման: Մարդեղությունից առաջ հավիտենական Բանը մի կերպարանք էր, մի գոյացություն, մի բնություն (Prosopon hypostasis, phusis): Այդ Բանը, մարդեղությամբ, յուրացրեց անիմանալի մի միավորում, սուրբ Կույսից առնված մի մարդկություն: Սակայն նա ոչ մի փոփոխություն չկրեց այդ միավորումից. նրա անձը մնաց այն, ինչ որ էր. նա գոյություն ունի, միայն թե մի նոր վիճակի մեջ՝ մարմին ստացած: Բանը աշխարհ եկավ մարդու սիրույն և փրկության համար: «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ»: Եվ սուրբ Հովհան Ոսկեբերանը փակում է բանավեճը իր հետևյալ նշանավոր խոսքով. «Թե ինչպե՞ս եղավ այդ միությունը, իլուր է որոնել. Քրիստոս միայն գիտե այն»:

Այդ միությունը հաստատելու համար է, որ Հայ Եկեղեցին, պահելով ընդհանրական Եկեղեցու հին ավանդությունը, հունվարի 6-ին տոնում է ոչ միայն Սուրբ ծնունդը, այլև **Աստվածահայտնությունը.** Ավետում, Ծնունդ և Մկրտություն. «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ մեզ...», քանզի աստվածության այդ հայտնությունը, որ տեղի ունեցավ Քրիստոսի աշխարհ մուտք գործելու երեք պահերին, այն չէ միայն, ինչ մենք մեր օրերին կոչում ենք «եղելություն-Քրիստոս», որին ներկա ենք լինում, որի մասին խորհում ենք, որը փորձում ենք հասկանալ, այլև լույսի մի ժայթքում, որով Աստված մուտք է գործում մեր պատմության և մեր կյանքի մեջ, ինքն իրեն հայտնելով մեզ, ինչպես հայտնեց երեք առաքյալներին Թաբոր լեռան վրա. դա մի հեղափոխություն է, որ ապատագրում է մեր բնությունը և մեզ տեղափոխում աստվածային կյանքի ոլորտը:

Մեծ պահոց երեկոյան ժամերգության մի շարականի մեջ, որը հորինված է սաղմոսների ձևով, ամենապարզ բառերով նկարագրված է հավատացյալի հետևյալ զգացումը.

«Եւ ժողովուրդ որ նստեր ի խաւարի՝ ետես լոյս մեծ.
Զի Աստուած ընդ մեզ է:
Եւ որ բնակեալք էք ի խաւարի և ի ստուերս մահու՝
Լոյս ծագեսցի առ մեզ. զի Աստուած ընդ մեզ է:
Եւ քանզի մանուկ ծնաւ Որդի և տուաւ մեզ.
Զի Աստուած ընդ մեզ է»:

Քրիստոսի լույսի մեջ ջողացող այդ կյանքը Եկեղեցու ծիսական և խորհրդական կյանքն է, կյանքը՝ Եկեղեցու մեջ և Եկեղեցիով: Այնտեղ, ստեղծված և անկյալ մարդը հանդիպում է Քրիստոսին, ընդունում է սուրբ Հոգու ներգործությունը և այդպես հաղորդության մեջ է մտնում եռանձն Աստուծո հետ:

(Հատված Շահե արքեպիսկոպոսի ֆրանսերեն լեզվով տված մի դասախոսությունից Լիոն քաղաքի Սուրբ Իրենեոս էկումենիկ կենտրոնում 1982 թ. մայիսին)





«ԿԱՐԼՈՎԻ ՎԱՐԻ Ե» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՊՐԻՆՍՏՈՆՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 5—8 օրերին Պրինստոն քաղաքի (ԱՄՆ) Աստվածաբանական կոլեջում տեղի ունեցավ «Կարլովի Վարի Ե» խորհրդակցական հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին ինչպես Սովետական Միությունում և Արևելյան Եվրոպայի մյուս երկրներում գործող Եկեղեցիների, այնպես էլ Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչներ և պատասխանատու եկեղեցական այլ գործիչներ՝ թվով շուրջ 50 հոգի:

Խորհրդակցությունը, որ տեղի ունեցավ «Վստահության ամրապնդումը—Արևելքի և Արևմուտքի ժողովուրդները Եկեղեցիները» թեմայով, իրար մոտ էր բերել Արևելքի և Արևմուտքի Եկեղեցիների մի շարք ներկայացուցիչներ՝ եղբայրական փոխադարձ հասկացողությամբ շարունակելու քսան տարի առաջ սկսված իրենց համագործակցությունը և միասնաբար նպաստելու միջազգային լարվածության թուլացմանն ու խաղաղության ամրապնդմանը մեր օրերի աշխարհում:

Սույն հանդիպմանը իր մասնակցությունը բերեց նաև, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը:

Խորհրդակցությունն սկսվեց հոկտեմբերի 5-ի առավոտյան պրեսբիտերական համալսարանի դահլիճներից մեկում՝ Հունգարիայի Ավետարանական վերակազմյալ Եկեղեցու եպիսկոպոս դոկտ. Կարոլի Տոթի և ԱՄՆ-ի Քրիստոսի միացյալ Եկեղեցու նախագահ դոկտ. Էվերի Պոստի նախագահության ներքո: Բացման աղոթքից և ողջույնի կարճ խոսքերից հետո, հաջորդող երկու օրերում տեղի ունեցան երկու լիագումար նիստեր, որոնց ընթացքում վերոհիշյալ թեմայի շուրջ գլխավոր զեկուցումներով հանդես եկան Արևելյան Եկեղեցիների կողմից՝ Տ. Անտոնի միտրոպոլիտը (Ռումինական Օրթոդոքս Եկեղեցի) և Արևմտյան Եկեղեցիների կողմից՝ դոկտ. Կլեր Ռենդոլը (ԱՄՆ-ի Քրիստոսի միացյալ Եկեղեցի):

Ապա ներկայացված զեկուցումների շուրջ ծավալվեց մտքերի լայն փոխանակություն: Այս առթիվ ելույթ ունեցավ նաև Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը՝ «Ըստ խոստման, աչքներս հառած ենք նոր երկնքի և նոր երկրի, որոնցում արդարությունն է բնակվում» (Բ Պետրոս, Գ 10—13) բնաբանով:

Հոկտեմբերի 7-ին հանդիպման մասնակիցները բաժանվեցին չորս առանձին խմբերի՝ չորս նիստերի ընթացքում քննարկելու խորհրդակցության առաջ դրված հիմնական հարցերը և պատրաստելու համապատասխան զեկուցագրեր: Հետագայում այդ զեկուցագրերի հիման վրա կազմվեց խորհրդակցության արդյունքներն ամփոփող պաշտոնական մի հաղորդագրություն, որը ներկայացվեց հանդիպման մասնակիցների քննարկմանն ու հաստատմանը: Հանդիպման վերջին օրը, հոկտեմբերի 8-ի լիագումար նիստում, հետ քննարկման, հաստատվեց «Կարլովի Վարի Ե»-ի պաշտոնական փաստաթուղթը և ապա խմբագրվեց մի նամակ՝ ուղղված ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Բրեժնևին և ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռ. Ռեյգանին:

Հաղորդագրության մեջ մտահոգություն էր

«ԿԱՐԼՈՎԻ-ՎԱՐԻ Ե» ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

հայտնվում այն մասին, որ մեր օրերի աշխարհում քաղաքական այնպիսի իրավիճակ է տիրում, որ խաղաղության սրբական գործը պետք է լինի անհետաձգելի: Սուրբգրական հասկացությամբ, նշված էր փաստաթղթում, «խաղաղությունը պետք է ներկայանա արդարության և ճշմարտության հիմքի վրա և ոչ թե անհանդուրժողության, որ հակառակ է մեր Եկեղեցիների կոչումին և ոգուն»:

Հաղորդագրության մեջ շեշտված էր նաև այն միտքը, որ միջազգային բոլոր հարցերը պետք է լուծվեն մարդասիրական որոշումներով կամ երկխոսությամբ: Այս ելակետից էլ, «Մենք,—ասված էր փաստաթղթում,—որպես Եկեղեցիներ և ժողովուրդ, մերժում ենք սպառազինությունների մրցավազքը և դատապարտում համայն մարդկությանը վտանգ և կործանում բերող ամեն տեսակի անարդար որոշում»:

Պրինստոնի սույն հանդիպման փաստաթղթի հեղինակները հույս էին հայտնում նաև, որ ՍՍՀՄ-ն ու ԱՄՆ-ը, երկու մեծ տերություններ, կկարողանան հաջողությամբ իրենց ավարտին հասցնել Ժնևում և Վիեննայում միջուկային զենքի սահմանափակման վերաբերյալ իրենց սկսած բանակցությունները, ինչպես նաև լուծել մյուս հարցերը՝ կապված զինված ուժերի կրճատման հետ:

Հաղորդագրության վերջում խորհրդակցության մասնակիցները կոչ էին անում բոլոր պետություններին՝ ընդունել «ՄԱԿ-ը առավելագույնս օգտագործելու սկզբունքը, որպես ամբողջ աշխարհում վեճերը լուծելու, ճշմարտությունն ու խաղաղությունը պահպանելու կոչված բարձր ամբիոն»:

Նույն օրը, հոկտեմբերի 8-ի երեկոյան, Պրինստոնի Աստվածաբանական համալսարանի տնօրենությունը քաղաքի «Նասսաու Ինն» ռեստորանում տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին, բացի «Կարլովի Վարի Ե»-ի խորհրդակցության մասնակիցներից, ներկա էին նաև այլ բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչներ ԱՄՆ-ի ազգային Եկեղեցիներից:

Ճաշկերույթն անցավ ջերմ, եղբայրական մթնոլորտում:

«Եւ եղիցին գործք արդարութեան խաղաղութեամբ և կալցի արդարութիւն վհանգիստ և յուսացեալք եղիցին մինչև յաւիտեան» (Եսայի ԼԲ 17):





ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

ԽԱԹՈՒՆ

Ապրել է 13-րդ դարի սկզբներին Անի մայրաքաղաքում: Դուստրն է Անիի մեծ հեջուբ Վահրամի, ամուսինն է Նոր բերդի իշխան Վասակը:

Խաթունը և Վասակը վավակ չեն ունեցել: Հոգեկան հանգստության և հիշատակի համար Խաթունը իր ծախսով նորոգել է Հոռոմոսի եկեղեցին[191]:

Կատարված շինարարական աշխատանքների մասին եկեղեցու պատերին մի շարք արձանագրություններ են փորագրվել 1231—1235 թվականներին:

ԼԱԼԽԱԹՈՒՆ

Ապրել է 15-րդ դարի կեսերին Եկեղյաց գավառում, ամուսինն է Ֆռանգը:

1439 թվականին Լալխաթունը Եկեղյաց գավառի Լուսավորչի վանքի կրոնավոր Սիմեոն գրչին պատվիրում է Հայսմավուրք ընդօրինակել:

Սիմեոն գրիչը կատարել է բարեսեր կնոջ պատվերը և իր կատարած աշխատանքի դիմաց ստացել 150 դրամ: Ձեռագրի 606բ էջին գրված գլխավոր հիշատակարանում Սիմեոն գրիչը գրել է. «Յիշեցէք վպարոն Ֆռանկին, խաթուն վԼալխաթունին, որ ՃԾ (150) դրամ երետ Յայսմաւուրացս ի գրելէն»[192]:

Հայսմավուրքը մի ստվար հատոր է, կազմված է ավելի քան 610 էջերից: Գրված է գեղեցիկ բոլորգրով:

Հիշատակարանի շարունակությունից երևում է, որ Հայսմավուրքի ընդօրինակման ընթացքում երկու անգամ թշնամու բանակները մտել են Եկեղյաց գավառ և ամենուր ավեր, ավար սփռել, մարդկանց քշել գերության: Այդ ծանր օրերին Սիմեոն գրիչը թողնում է Լուսավորչի եկեղեցին և տեղափոխվում Ավագ գյուղի վանքը: Այստեղ էլ նա 1439 թվականի ապրիլի 20-ին ավարտում է ձեռագրի արտագրությունը:

Գրիչը հետագա սերունդներին տեղեկացնում է, որ Հայսմավուրքի ընդօրինակությունից երկու տարի առաջ կորցրել է տեսողությունը և համեստորեն խնդրում է. «Անմեղադիր լերուք աղալանաց և խոշորութեան սորա, վի կար մեր այս չափ էր»:

Լալխաթունի պատվիրած Հայսմավուրքն այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյանների մոտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսում Խարբերդում, ամուսինն է Վարդը:

1469 թվականին Խարբերդի Սուրբ Սարգիս վորավարի եկեղեցու քահանա Հակոբ գրիչը Հովհաննես քահանայի, նրա ծնողների՝ Շահպարոնի և Լուսխաթունի հիշատակին Ավետարան է ընդօրինակում: Ձեռագրի 240բ էջի հիշատակարանից իմացվում է, որ Ավետարանը քրտնաջան աշխատանքով ընդօրինակել, մանրանկարել ու կազմել է ինքը՝ Հակոբ գրիչը, և սերունդներից խնդրել է բարի հիշել իր ծնողներին՝ Գրիգորին և Թանսուխին (տես հաջորդը):

Հակոբ գրչի հիշատակարանի տակ նոտրգրով ավելացված հիշատակագրությունից

---

[191] Ստորագրութիւն կաթուղիկէ, էջ 269:

[192] Յա. Տաշեան, Ցուցակ, էջ 49:

երևում է, որ Ավետարանը Հովհաննես քահանայի փոխարեն գնել է Մարգարիտ տիկինը: Նրա անունից գրված է. «Յիշեցէք ի Քրիստոս կիաւատարիմ տանտիկինն կՄարգարիտն, և կիւր որդին կԷմին պէկն, և կաղջիկն իւր կԳոհարն, և կՍիմաւոնն, և կՎարդն, և կԽասն, և կիամօրէն ննջեցեալքն, որ ստացաւ կՍուրբ Աւետարանս»[193]: Մարգարիտ տիկինը Ավետարանը նվիրում է սուրբ Սարգիս կորավարի եկեղեցուն:

Մեկ տարի անց մեծ դժբախտություն է պատահում Մարգարիտ տիկնոջ ընտանիքին: Դժբախտ խորշակի կոհ են դառնում որդին, դուստրը, թոռները: Եվ դժբախտ կինը, ի հիշատակ վավակների, նույն Հակոբ գրչին նոր Ավետարան ընդօրինակելու պատվեր է տալիս: Հակոբը կատարում է տարաբախտ կնոջ խնդրանքը: Նա իր հիշատակարանում միաժամանակ հայտնում է, որ ընդօրինակությունը կատարել է խիստ ծանր պայմաններում, քանի որ մահտարաժամը շուրջ մեկ տարի իջել էր Խարբերդ քաղաքի վրա «եւ շատ դրունք փակեցան, և շատ հայր անորդի արար, եւ շատ քոյր՝ անեղբայր, շատ քահանայ անորդի մնաց, եւ շատ ծընծկան տղայ անհայր, անմայր մնաց»:

Հենց այս մահտարաժամին էլ կոհ են գընացել Մարգարիտ տիկնոջ վավակները: Այդ մասին Հակոբ գրիչը գրում է. «Արդ, յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս որդին և դուստրն և թոռներն այս հաւատարիմ կնոջս Մարգարտիս; և ինքն միայն մնաց՝ լալի և ողորմելի, վասն որոյ ետ գրել կՍուրբ Աւետարանս յիշատակ իւր, և ծնաւղացն, և որդւոյն, և դստերացն, և ամենայն արեան մերձաւորացն»[194]:

Մարգարիտ տիկինը երկրորդ Ավետարանը ևս նվիրում է Սուրբ Սարգիս կորավարի եկեղեցուն:

Անցնում են տարիներ, դարեր: Անօրեն թշնամու ձեռքով տեղահան ու տարաշխարհիկ դարձած հայերի նման աշխարհե-աշխարհ են ընկնում ու գաղթական դառնում նաև նրա հոգևոր գանձերը: Գաղթականի դառը ճակատագիրը բաժին է ընկել նաև Մարգարիտ տիկնոջ 1469 թվականին գնած և 1470 թվականին պատվիրած Ավետարաններին: Այս ձեռագրերը հասել են Լոնդոն և հանգրվանել Բոդլեյան գրատանը, որտեղ գտնվում են մինչև օրս անհատական արխիվների 120-րդ թղթապանակում, 61 և 62 թվահամարների տակ:

[193] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ, էջ 292—293:

[194] Նույնը, էջ 297—298:

ԹԱՆՍՈՒԽ

15-րդ դարի կեսերին ապրել է Խարբերդում, ամուսինն է Գրիգորը, որդին՝ գրիչ, մանրանկարիչ Հակոբը:

Թանսուխի անունը ժամանակին հիշատակել ու մեջ է թողել Հակոբը: Նա 1469 և 1470 թվականներին ընդօրինակած երկու Ավետարանների հիշատակարաններում էլ սերունդներից խնդրել է հիշել նաև իր մորը՝ Թանսուխին:

Հակոբ գրչի, մանրանկարչի արտագրած Ավետարանները եպակի ճակատագրով գնվել ու Խարբերդ քաղաքի Սուրբ Սարգիս կորավարի եկեղեցուն են նվիրվել քաղաքի բնակիչ Մարգարիտ տիկնոջ ձեռքով և հետո, դարեր անց, առանց իրարից բաժանվելու ու իրար կորցնելու հանգրվանել են Լոնդոնի Բոդլեյան գրատանը:

Հակոբ գրիչը 1466 թվականին Խարբերդի Սինամուտ թաղում գրիչ Պողոս սարկավագի հետ ընդօրինակել է նաև Ճաշոց: Ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Գրեալ ի թվ(իս) ՉԺԵ (1466), ձեռամբ Բ (2) գրչաց՝ Յակոբ քահանայի և Պաւղոս սարկաւագի ի Խարբերդ քաղաքի, ի թաղն Սինամուտ, ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի և յեպիսկոպոսութեան տեառն Յոհաննիսի, և ի ամիրայութեան Հասան խանի, ի խնդրոյ տէր Յոհաննէս եպիսկոպոսի, ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի վարավարին... ի յիշատակ իւր ծնողացն՝ Լիպարիտին և Մանանային»[195]:

Այս ձեռագիրը 19-րդ դարի երկրորդ կեսին Չինքուշի Սիրահայաց Սուրբ Աստվածածին վանքում տեսել ու հիշատակարանն արտագրել է Գարեգին եպիսկոպոս Սըրվանձտյանցը[196]:

Թանսուխի որդի, գրիչ, մանրանկարիչ Հակոբի ընդօրինակած այս ձեռագրին բախտ չի վիճակվել հասնելու մեր օրերը:

ՄԱՐԻԱՄ

Մարիամ ապաշխարողն ապրել է Քաջաթաղի Խանածախ գյուղում: 1647 թվականին նա իր հորեղբոր՝ Մարկոս եպիսկոպոսի խնդրանքով ընդօրինակել է Ներսես Շնորհալու «Բանք չափաւ» երկը:

Ձեռագրի համար օգտագործվել է միջին մեծության 261 թղթե թերթ, գրված է միասյուն, բոլորգրով:

[195] Նույնը, էջ 250—251:

[196] Թորոս Աղբար, Բ, էջ 479:

Մարիամ գրչուհու երախայրիքն անցել է դարերի միջով, կիսել իրեն ստեղծած ժողովրդի բախտը և ի վերջո թավրիկաբնակ Սողոմոն Մելիք-Աբրահամյանին պատկանած ուրիշ 13 ձեռագրերի հետ 1910-ական թվականներին մուտք գործել Էջմիածնի Մայր տաճարի Մատենադարանը, իսկ այժմ մընում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ֆոնդը, 4281 թվահամարի տակ[197]:

ԵՂԻՍԱԲԵԹ

Ապրել և գործել է Հալիձորում:

1654 թվականին Եղիսաբեթն ընդօրինակել է Շարակնոց: Ձեռագրի համար օգտագործված են 363 մագաղաթյա փոքր չափի թերթեր: Շարակնոցը պարդարված է տերունական մեկ պատկերով, պարզ կիսախորաններով, լուսանցապարդերով, գրված է բոլորգրով: Ձեռագիրը պատվիրել ու ստացել է Միքայել Միայնակեցը:

Շարակնոցն այժմ գտնվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[198]:

ՀԵՂԻՆԵ

Ապրել է 17-րդ դարի կեսերին:

1656 թվականին Հեղինե կույսը եղբոր՝ Մարինոս վարդապետի հետ ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու Քարոզգիրքը:

Ձեռագրի համար օգտագործվել է միջին մեծության 530 թղթե թերթ, գրված է երկսյուն, բոլորգրով, ունի մանրանկար կիսախորաններ և լուսանցապարդեր: Քարոզգիրքը ստացել է Մեսրոպ վարդապետը:

1900-ական թվականներին Քարոզգիրքը գտել է Խաչիկ վարդապետ Դադյանը և մտցրել իր հավաքածուի մեջ, որտեղից էլ այն մտել է Էջմիածնի Մայր տաճարի Մատենադարան:

Երջանիկ պատահականության շնորհիվ ժամանակի ամենակալ երախից ու թշնամիների հրից ու սրից փրկվել է Հեղինե գրչուհու ձեռքով ընդօրինակված Քարոզգրքի ևս մեկ օրինակ: Այս ձեռագիրը նախորդի նման մեծ չէ, գրված է միջին մեծության ընդամենը 21 թղթե թերթերի վրա, երկսյուն, բոլորգրով: Ձեռագրի հիշատակարանից իմացվում է, որ Հեղինեն այն մենակ է արտագրել:

Այս ձեռագիրը Էջմիածնի Մայր տաճարի Մատենադարան է մուտք գործել 1910-ական թվականներին:

Այժմ Հեղինե կույսի ընդօրինակած երկու ձեռագրերը պահվում են Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, 3879 և 4043 թվահամարների տակ[199]:

ԳՈՀԱՐԱԶԻԶ

Ապրել է 17-րդ դարի կեսերին, ամուսինն է պարոն Թորոսը, որդին՝ Ոսկան վարդապետ Երևանցին:

Գոհարապիկ տիկնոջ որդին՝ Ոսկան Երևանցին, հայ տպագրության երախտավորներից է, և նրա երախայրիքը՝ 1666—1668 թվականներին հոլանդական Ամստերդամ քաղաքում տպագրած Աստվածաշունչը՝ հայկական տպագրության թագուհի, ինչպես Աստվածաշնչի Սահակ-Մեսրոպյան թարգմանությունը՝ թարգմանությունների թագուհի:

Այդ ամենը սկսվել է այսպես: 1656 թվականին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հրամանով Էջմիածնի միաբանության դպիր Մատթեոս Ծարեցին տպագրական գործերով մեկնում է Եվրոպա: Նրա նպատակը Աստվածաշնչի տպագրությունն էր: Հռոմում հենարան և օգնություն չգտնելով Ծարեցին գընում է Հոլանդիա՝ Ամստերդամ: Մեծ դժվարություններով Ծարեցին 1660 թվականին ստեղծում է տպարան, բայց չի ապրում անգամ այնքան, որ տեսնի իր սկսած առաջին գրքի՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» երկի տպագրված օրինակը: Թվում էր, որ մեծ դժվարությամբ ստեղծված տպարանը կբընդունագրավվի պարտքատերերի կողմից, բայց այդ ժամանակ առևտրական գործերով Ամստերդամում գտնվող Նորջուղայեցի վաճառական Ավետիս Ղլիճենցը վճարում է պարտքատերերին, գնում է տպարանը և ավարտին հասցնում «Յիսուս Որդու» տպագրությունը:

Ահա այս Ավետիսն էլ Եվրոպա՝ Ամստերդամ է կանչում իր եղբորը՝ Ուշիի Սուրբ Սարգիս վորավարի վանքի վանահայր, կըրթված, վարգացած մտավորական Ոսկան վարդապետ Երևանցուն, որը երպում էր Աստվածաշնչի հայերեն տպագրության մասին և տարիներ շարունակ աշխատել էր Աստվածաշնչի հայերեն բնագրի պատրաստման ուղղությամբ: Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը հավանություն է տալիս այդ ընտրությանը:

Ոսկան Երևանցին Ամստերդամ է հասնում 1664 թվականին: Մինչ այդ Ամստերդամ էր հասել նրա աշակերտ Կարապետ Անդիանացին և տպել չորս գիրք՝ երկու ժամագիրք, երկու սաղմոսարան: Հինգերորդը՝ Շարակ-

[197] Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, էջ 1184:

[198] Նույնը, հ. Բ, էջ 463:

[199] Նույնը, հ. Ա, էջ 1102, 1136:

նոցը, Կարապետ Անդիանացին և Ոսկան Երևանցին տպագրում են միասին: Աստվածաշնչի տպագրությունը սկսելուց առաջ Ոսկան Երևանցին, որպես վերջին փորձ, տըպագրում է մի այբբենարան և իր հեղինակած «Քերականությունը»:

1666 թվականի մարտի 11-ին սկսվում է Աստվածաշնչի տպագրությունը: Ոսկան Երևանցին և իր օգնականները՝ Կարապետ Անդիանացին և Օհան Երևանցին, գրքի տըպագրությունն ավարտում են 1668 թվականի վերջին: Հայ գրքի մեծ գիտակ, բանասիրական գիտությունների դոկտոր Ռաֆայել Իշխանյանը վերջերս հրատարակած «Հայ գիրքը» արժեքավոր աշխատության մեջ գրել է. «Մեծածավալ (1462 էջ կամ 2924 սյունակ, 159 պատկեր) և բարդ բնագիր ունեցող այս գիրքը հայ տպագրիչ վարդապետները լույս են ընծայել օրինակելի, բարձր արվեստով: Կարևոր էին Ոսկան Երևանցու և Կարապետ Անդիանացու անձնական արժանիքները՝ գըրքի բնագիրը մանրակրկիտ նախապատրաստելու, սրբագրելու և տպագրությունը մաքուր ու որակով անելու գործում»[200]:

Հայ մարդու, որդու երախտագիտությամբ, իր արածի հարկը իմացողի արժանապատվությամբ Աստվածաշնչի 834 էջի «Յիշատակարանում» Ոսկան Երևանցին սերունդներից խնդրել է հիշել նաև «պիայրն իմ պպարոն Թորոսն. և պմայրն իմ պԳոհարապիկն, և պեղբայրն իմ պՅոհաննէսն պփոխեցեալն առ ՔՍ., որոյ ընչիւքն մտի ես ի գործս յայս, այլ և պմիւս եղբայրն իմ պԱւետիսն, որոյ գրովն սկսաւ գիրքս»:

Մինչև այժմ ընդունված էր ասել, որ Ոսկան Երևանցու Աստվածաշունչը Եվրոպայից Հայաստան չի հասել, որ ճանապարհին տըպաքանակը բերող նավը ենթարկվել է նավաբեկության և խորտակվել՝ իր հետ ծովի հատակը տանելով անգնահատելի բեռը: Սակայն վերջերս Ապարան ավանի բնակիչ Ղ. Հակոբյանի տանը պահվող ոսկանյան Աստվածաշնչի վերջին՝ 834 էջում հայտնաբերվել է խիստ մաշված, կողքերից կտրտված հիշատակագրություն, որ նոր լույս է սփռում այդ առեղծվածի վրա: Ահա այն. «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յոհան վարդապետ և ըսպասաւոր Մեծի Աթոռոյ Սրբոյն Էջմիածնի, որ հրամանաւ տեառն Հակոբայ սրբազան կաթողիկոսի տուայ պԱ[ստուա]ծաշունչ գրեանսն վաճառելոյ: Էկի աւրինեալ գնողն (2 բառ ջնջված) Ա[ստուա]ծաշունչս Մկրտիչ, Ասատուր, Տօղլութգար, Սարգիս հանգուցեալ առ անվանիկ եղբարք: Ստացան պԱ[ստուա]ծաշունչս պայս յիշատակ հաւիտեանց...: Գրեցաւ իմով ձեռամբ թվին ՌՃԻԸ (1679)»[201]: Հետևում է, որ Աստվածաշնչի միայն որոշ քանակությունն է տարերքի պոհ դարձել, որ մի մասը հասել է հայրենիք և Հակոբ կաթողիկոսի բարեհաճ թույլտվությամբ վաճառվել հավատացյալներին:

Ամստերդամում Ոսկան Երևանցին ևս տասը անուն գիրք տպագրեց: Այնուհետև նա տպարանը փոխադրում է Իտալիա՝ Լիվոռնո: Այստեղ տպագրվում է երեք գիրք: Այստեղից ևս տպարանը տեղահանվում է և 1673 թվականին հաստատվում Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Մարսելում էլ հաջորդ տարվա՝ 1674-ի փետրվարի 4-ին իր մահկանացուն է կնքում Գոհարապիկ տիկնոջ որդին՝ հայ տպագրության երախտավոր Ոսկան Երևանցին: Նրա աճյունը թաղվում է Մարսելի գերեզմանոցում:

Ոսկան Երևանցու մահվանից հետո անցել է ավելի քան երեք դար: Բայց ո՛չ նրա և ո՛չ էլ նրան ծնող մոր՝ Գոհարապիկի անունները չեն խունացել: Նրանց՝ մորը և որդուն միշտ կհիշեն, քանի որ երկուսի անուններն էլ հավերժորեն դաջված են անմահ Աստվածաշնչի էջին:

ՄԱՐԻԱՄ

1673 թվականին Մարիամ գրչուհին Ղափանի Շնհեր գյուղում արտագրել է Գրիգոր Տաթևացու Ոսկեփորիկը և Քարոզները:

Ձեռագրի համար օգտագործվել է միջին չափի 509 թղթե թերթ, գրված է միասյուն, բոլորգրով, ունի մանրանկար կիսախորաններ: Գրքի պահպանակի համար օգտագործված են մագաղաթյա չորս թերթեր, որոնց վրա բոլորագիծ երկաթագրով վերեղված են Պողոսի թղթերը:

Մարիամ գրչուհու ընդօրինակած ձեռագիրը պահվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[202]:

ԳԱՐԻԱՆԵ

Գարիանե ապաշխարողը 1679 թվականին կապմել է Բարսեղ եպիսկոպոսի ընդօրինակած Ավետարանը:

Ավետարանի ընդօրինակությունը դեռևս ԺԱ դարում սկսել է Հովհաննես գրիչը: Սակայն նա չի ավարտել արտագրությունը և միայն

---

[200] *Ռ. Իշխանյան*, Հայ գիրքը, 1512—1920: Ե., 1981, էջ 63:

[201] *Վ. Պետրոսյանց*, Ապարանի շրջանի ձեռագրերը, էջ 164:

[202] Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, էջ 555:

17-րդ դարում Բարսեղ եպիսկոպոսը ավարտին է հասցնում նրա սկսած գործը:

Ավետարանի համար օգտագործվել են 383 բավականին մեծ (42×32,5 սմ) թղթե թերթեր: Ձեռագիրը նկարկեն է, ունի տերունական 12 և ավետարանիչների 4 մանրանկարներ, 10 խորան և կիսախորաններ:

Գարիանեն վարպետորեն է կազմել գիրքը, կազմի համար օգտագործել է թավիշ: Հավանաբար նրա ձեռքով են կազմերին փակցվել նաև արծաթե քանդակները, որոնց վրա կան տերունական բարձրաքանդակներ:

Գարիանեի կազմած ձեռագիրը գտնվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[203]:

ՍԱՆԴՈՒԽՏ

Սանդուխտ կրոնավորը գործել է 17-րդ դարի վերջերին: 1690 թվականին նա ընդօրինակել է Խորհրդատետր: Ձեռագիրը կազմված է միջին մեծության 24 թղթե թերթերից, գրված է երկսյուն, բոլորգրով, ունի մանրանկար կիսախորաններ և լուսանցապարդեր: Ձեռագիրը ստացել է մի ուրիշ կրոնավորուհի՝ Հռիփսիմեն, որի հիշատակարանը գրված է 22բ էջում:

Այժմ Խորհրդատետրը պահվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[204]:

ԳՈՀԱՐ

Հայ գրչության համեստ մշակներից մեկը՝ Գոհարը, 1719 թվականին Սուրբ Աստվածածին եկեղեցում ընդօրինակել է աղոթագիրք: Ձեռագիրը բաղկացած է 159 մագաղաթյա թերթերից և ունի փոքր չափ (10,8×8,5), գրված է միասյուն, բոլորգրով:

Ձեռագրում տեղ են գտել Եփրեմ Ասորու, Վարդան վարդապետի և այլոց աղոթքները:

Գոհար գրչուհին աղոթագիրքն արտագրել է Մարթա կույսի պատվերով:

Այս ձեռագիրն այժմ պահվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[205]:

ԹԵԿՂԻ

Թեկղի Ջիջոյանցն ապրել է 19-րդ դարի սկզբներին Ղալարում:

1809 թվականին Թեկղի կույսն Ավետարան է ընդօրինակել· Ձեռագրի համար նա օգտագործել է միջին մեծության 198 թղթե թերթեր, գրել է երկսյուն, նոտրգրով: Ձեռագրի մեջ գտնվող չորս ավետարանիչների մանրանկարները ևս հավանաբար Թեկղին է նկարել:

Ավետարանը գտնվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում[206]:

---

[203] Նույնը, հ. Բ, էջ 600:
[204] Նույնը, հ. Բ, էջ 614:
[205] Նույնը, հ. Բ, էջ 473:
[206] Նույնը, հ. Բ, էջ 904:





ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց պրոֆ. Մ. Մկրյանի «Գրականության պատմության հարցեր» ժողովածուն, որն ընդգրկում է շուրջ երկու տասնյակ հոդվածներ և ուսումնասիրություններ՝ նվիրված հայ գրականության դասականներին, գրականության պատմության և տեսության խնդիրներին:

Ժողովածուն բացվում է Մովսես Խորենացուն նվիրված ուշագրավ ուսումնասիրությամբ, որտեղ հանգամանորեն լուսաբանված են մեր պատմահոր կյանքն ու ստեղծագործությունը: Մ. Մկրյանն այստեղ տալիս է պատմա-գեղարվեստական գրականության ծագման նախադրյալները, բացահայտում Խորենացու մեծությունն իբրև «պատմագետի և մտածողի, իբրև ժամանակի հասարակական մտքի ու գիտակցության և էսթետիկական ճաշակի ամենախոր կրողի»:

Խորենացին շատ բարձր է կանգնած եղել ժամանակի մտածողությունից իր աշխարհըմբռնումներով: Այս մասին հեղինակը գրում է. «Խորենացու հումանիզմի ամենացայտուն արտահայտություններից մեկը, որով նա վեր է բարձրանում ֆեոդալական մտածողության շրջանակներից, մարդու նկատմամբ դասակարգային խտրականության մերժումն է: Նա մարդուն գնահատում է որպես մարդու՝ իր արժանիքների համապատասխան»:

Իր ուսումնասիրությունների շարքում Մ. Մկրյանը առանձնակի վերաբերմունք է ցուցաբերել դեպի Գրիգոր Նարեկացին՝ նրան ներկայացնելով որպես մեծ մտածողի, գեղագետի և հումանիստի:

Լուրջ ներդրում է «13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականությունը» ծավալուն հոդվածը, որտեղ վեր են հանված մեր միջնադարյան տաղերգուների ստեղծագործությունների համամարդկային արժեքը, հումանիստական էությունը: Առանձնակի շեշտված են երկու խոշոր քերթողների՝ Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի ստեղծագործությունները:

Ժողովածուում հատուկ լրջությամբ շարադրված է «Հայ գրականությունը 1870—1920 թվականներին» ծավալուն հոդվածը, որտեղ առանձնակի շեշտված է մեր դասական գրականության հարուստ ժառանգությունը և նրա բարերար նշանակությունը հայ գրականության հետագա շրջանի կարգացման համար:

Անվանի գրականագետը խոր և համոզչականորեն է վերլուծել և ներկայացրել Մ. Նալբանդյանին, Հ. Պարոնյանին, Գ. Սունդուկյանին, Դ. Դեմիրճյանին, հատկապես՝ Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին:

Մ. Մկրյանի սույն աշխատությունը լուրջ ներդրում է հայ գրականության պատմության հետազոտության բնագավառում:

ԱՆԱՆՈՒՆ ԵԴԵՍԱՑՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարով վերջերս լույս ընծայեց Անանուն Եդեսացու «Քաղաքական ժամանակագրություն» շուրջ 200-ամյա ժամանակաշրջան ընդգրկող աշխատության վերջին մասը՝ Լևոն Տեր-Պետրոսյանի թարգմանությամբ, որը նվիրված է սելջուկ թուրքերի տիրապետությանը և խաչակրաց արշավանքներին: Գրքի հավելվածում ամփոփված են հայերին վերաբերող այն տեղեկությունները, որոնք տեղ են գտել «Քաղաքական ժամանակագրության» նախորդ գլուխներում և եկեղեցական ժամանակագրության պահպանված հատվածներում:

Հայերի մասին տեղեկությունները ցրված են գրքի տարբեր գլուխներում և ընդգրկում են հնագույն ժամանակներից մինչև Եդեսացու ապրած ժամանակները: Այստեղ կան մի շարք տեղեկություններ, որոնք հայտնի են դառնում բացառապես շնորհիվ Եդեսացու

աշխատության, որ մեծապես բարձրացնում է գիտական այդ երկի արժեքը:

Ուշագրավ են հեղինակի վկայությունները Եդեսիայի թագավորների հայկական ծագման, բյուզանդա-արաբական պատերազմների ընթացքում աչքի ընկած հայ զորավարներ Մանվելի, Գրիգորի և Դավթի գործունեության, ինչպես նաև խալիֆաթի շրջանի Հայաստանի հայտնի անցուդարձերի մասին:

Աշխատությունը մանրամասն տեղեկություններ է պարունակում Հարավային Կապադովկիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանությունների՝ Անտիոքի, Եդեսիայի, Մարաշի, Քեսունի, Կարկառի և Մելիտենեի մասին, իշխանություններ, որոնք ԺԱ—ԺԲ դարերի սահմանագլխին մեկը մյուսի ետևից վոհ գնացին խաչակիրների դավերին ու բռնություններին:

Շատ արժեքավոր են Անանուն Եդեսացու տվյալները Սասունի հայկական իշխանության մասին, քանի որ, ինչպես հայտնի է, վերջինիս վերաբերյալ քիչ տեղեկություններ է պահպանվել հայկական սկզբնաղբյուրներում:

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԹՈԼՈԳԻԱ ՌՈՒՄԻՆԵՐԵՆ

Վերջերս Ռումինիայում լույս է տեսել «Հայ դասական և ժամանակակից բանաստեղծության անթոլոգիա» գիրքը, որտեղ ընդգրկվել են 91 հայ բանաստեղծներ՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև մեր օրերը: Գրքի թարգմանիչներն են ռումին բանաստեղծ Դումիտրու Մ. Իոնը, նրա կինը՝ Կարոլինա Իլիկան, և բանաստեղծ, թարգմանիչ Հարալամբիե Գրեմեսկուն: Ռումինահայ Սարգիս Սելյանը գրել է ժողովածուի ընդարձակ առաջաբանը, կազմել ծանոթագրությունները և յուրաքանչյուր բանաստեղծությունների շարքից առաջ կետեղել տվյալ հեղինակի համառոտ կենսագրությունը: Գրքի հրատարակությանն իր գործոն մասնակցությունն է բերել նաև Ռումինիայում հայտնի «Միներվա» հրատարակչության «Գրադարան՝ բոլորի համար» մատենաշարի խմբագիր Նիկոլաե Թեյկան:

Ըստ ժողովածուի կառուցվածքի, բանաստեղծները ներկայացված են ժամանակագրական կարգով: Առաջինը, բնականաբար, ներկայացված է Մեսրոպ Մաշտոցը: Այնուհետև հաջորդաբար ներկայացված են մեր մյուս բանաստեղծները, մինչև մեր ժամանակակից երիտասարդ հեղինակները:

Գրքում տեղ են գտել մեր գրականության նշանավոր դեմքերը՝ Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Ֆրիկ, Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա, Ղևոնդ Ալիշան, Ռավայել Պատկանյան, Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Սիամանթո, Դանիել Վարուժան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, Պարույր Սևակ և ուրիշներ:

Թարգմանիչ Դումիտրու Մ. Իոնը ժողովածուի հրատարակության մասին ասել է.

«Կարծում եմ, բուն թարգմանական առումով այս ժողովածուն հիմնականում հաջողվել է, իսկ դա առաջին հերթին արդյունք է այն մտերմիկ ու թանկ հարգանության, որ մենք՝ այս գրքի թարգմանիչներս, տածել ենք հայ ժողովրդի կենսասեր ու ազատատենչ ոգու և նրա սքանչելի արտահայտության՝ հինավուրց ու նոր հայ բանաստեղծության հանդեպ»:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ԺՈՂՈՎԱԾՈՒ
№. 550
(Հայերեն և հայատառ տաճկերեն)

Թերթերը՝ 47:—*Պրակները*՝ Ա և Գ՝ 12, Բ՝ 10, Դ՝ 13 թերթից են:—*Մեծությունը*՝ 21×11×0.8 սմ.:—*Նյութը*՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—*Կազմը*՝ կաշի, երկու երեսի վրա գծեր քաշված են ճնշումով:—*Պահպանակները*՝ սկզբում և վերջում մեկական հասարակ թուղթ:—*Վիճակը*՝ բավարար, սակայն մի քանի թերթ կտրված է:—*Գրությունը*՝ միասյուն:—*Դատարկ թղթերը*՝ 1ա, 10ա, 10բ, 17ա, 17բ, 22բ, 25բ, 31բ, 38ա, 39բ, 41բ, 47ա և 47բ:—*Տողերը*՝ անհամաչափ:—*Գծումները*՝ ճնշումով:—*Գիրը*՝ նոտրգիր:—*Զարդագրություն*՝ չկա:—*Գրիչը*՝ անհայտ:—*Պատվիրատուն*՝ անհայտ:—*Ժամանակը*՝ 19-րդ դար:—*Վայրը*՝ անհայտ, սակայն շատ հավանաբար Թուրքիա:—*Ծանոթագրություն*՝ սույն ձեռագիր մատյանը Մայր Աթոռի Ձեռագրատան նվեր է ուղարկած Բուենոս Այրեսից Տ. Մատթեոս քահանա Գույումճյանը: Այս ստացված է 7 հունիսի 1982 թ. ձեռամբ Արգենտինայի Հայրապետական Պատվիրակի փոխանորդ Տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիր մատյանը հոգևոր երգերի մի ժողովածու է, մեկ մասը գրված հայերենով, մյուսը՝ հայատառ տաճկերենով: Հայարենով կան քիչ քանակությամբ մեղեդիներ և տաղեր, իսկ տաճկերենով՝ բազմաթիվ շարքիներ, բեյաթիներ և գազելներ: Այստեղ կան նաև վանական այլ ոտանավորներ:

(Ստորև տրվում է ինքնագիր ոտանավորներից մեկը որպես նմուշ):

Թ. 45ա.—*Գովեստ առ ինքնակալ թագուն Օսմանեան*

Երկնի և երկրի թագաւոր անճառ.
Կացո՛ մշտայաղթ զարքայն մեր արդար.
Արքայից արքայս տիեզերակալ.
Ոպ բիբ ական պահե՛ա բարերար:
Զխոսրով շահնշահ ի վեհից կաճառ.
Փայլեցո՛ փառօք արև մշտափայլ:
Զնոր Աղէկսանդրու քաջ աշխարհակալ.
Պահպանեա՛ հպօր աջով քով բարձրել:
Սողոմօն երկրդ զմերս թագակալ.
Գերապանծ շքով կացո՛ զարդարել:
Զարծիւս կորովի սրաթև սաւառնել.
Բարձրացո՛ կարօղ ճախրել գեղապար:
Զառիւծս արի ահընկեց յաշխարհ.
Ցաւեժ յաղթուբ զօրացո՛ իսպառ:
Եօթնեկի բաժնից լիցի պարսաքար.
Ցանուն քո օրհնել ի մարտից պայքար:

Թ. 45բ.—Եղջուր դիմակալ սուսեր յեսանել.
Տիրօղ ատելեաց արա անդադար:
Ժողովք թշնամեաց գումար վայրապար.
Ի հպօր բակէ պարտեսցին հերքեալ:
Թռչունք փքացել ի վեր ամբարձեալ.
Ի ճանք բաղէիս անկցին կորացեալ:
Տիեզերեօք ողջոյն ը ձկանց գումար.
Ցանցեսցին յուռկան յորսողիս ճարտար:
Ահեղ զօրուր տերամբ յաջողել.
Ծովու ցամաքի տիրեսցէ իսպառ:
Փող յաղթանակի՝ բարեբաղդ բարբառ
Ի լուր աշխարհի հնչեսցէ յամայր:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի №№ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի №№ Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի №№ Գ—Ժ-ից, 1978 թվականի №№ Ա-ից, Դ-ից, 1979 թվականի №№ Բ-ից, Ի-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի №№ Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի №№ Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի №№ Ա-ից և Գ-ից:

Արասցես սիրով կմի օրն հապար.
Քեզ առողջ կենօք միշտ բարգաւաճել:
Եւ մեք մատուցուք կփառս անդադար
Միոյդ Այ յերկիր խոնարհեալ:

ՆՔՐՏ

Սուլթան Մահմուտ խան կմեծ ինքնակալ.
Բակմամեայ աւուրքք պարգևե՛ա մեզ կե(ա)լ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ.1բ.—Հատընտիր գումարք եղանակաց:
(51 անգամ էջի կամ երգի վերջում կրկնվում են ՆՔՐՏ չորս տառերը, որոնք շատ հավանաբար ներկայացնում են ձեռագիրը գրողի անվան և ազգանվան սկզբնատառերը):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 47ա.—Սոյն մատեանը
Նուիրում է Մ. Աթոռ Ս. Էջմիածնին
Բ. Այրէսից Տ. Մատթէոս քինյ.
Գույումճեանը (բնիկ Պոլսեցի):
Գրիգորիս վրդ. Բունիաթեան
6.6.1982 թ.
Ս. Էջմիածին:

№. 551
ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1:—*Մեծությունը՝* 198.2×7.3 սմ.:—*Նյութը՝* դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—*Պահպանակներ* չունի:—*Վիճակը՝* անբավարար, սկզբից թերի է:—*Գրությունը՝* միասյուն:—*Դատարկ թղթերը՝* 1բ:—*Տողերը՝* 260:—*Գծումներ՝* չունի:—*Գիրը՝* նոտրգիր:—*Զարդագրություն՝* համայիլում կա երկու սրբապատկեր, որոնք շատ նախնական ձևով են նկարված: Առաջինը իբր թե Ս. Գրիգոր Նարեկացին է: Ապա կա 7 սմ. տրամագիծ ունեցող 10 շրջանակներ, որոնց յուրաքանչյուրի մեջ 7—8 տողանոց գրություն կա:—*Գրիչը՝* անհայտ:—*Պատվիրատուն՝* անհայտ:—*Ծաղկողը՝* անհայտ:—*Ժամանակը՝* 1722 թ.:—*Վայրը՝* անհայտ:—*Ծանոթագրություն՝* համայիլը պատկանել է Ապարան շրջկենտրոնի (Ս. Հայաստան) բնակիչ Վիկտոր Մնացականի Պետրոսյանցին, որ մշեցի ծընողների կավակ է: Նա ձեռագիրը նվիրել է Մայր Աթոռի Ձեռագրատան 12 հունիսի 1982 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

... Եղիցի պայպան ծռս Այ Մարիամին. ամէն:
(Երկու անգամ կրկնվում է):
... դիմաց ծառայիս Այ Մարիամի. ամէն:
... դիմաց ծռս Այ (երկու անգամ):
... և ամ բանի աջդե լինիցի ի ծառայիս Այ:
... կծառս Այ Մարիամս:
Ծոյիս Այ Մարիամէս. ամէն:
... ծառայիս Այ Մարիամ. ամէն:
... ծառս Այ Մարիամին այսորիկ. պայպան ամի Քս աջ քո յօվանի լիցի վրյ ի մի տէ և գիշերի:
... ծառայս Այ:
... եղիցի պայապն ծռս Այ (երկու անգամ):
... լեր օգնական և պայապն ծռս Այ:
Փառաւորեալ Տր ընկալ կաղաչանս ծռս Այ և կատարեայ ի բարի վխնդրվածս իմ բարեխօսութք սբյու Աածածնին և Հօվանանու Կարպտին և սրբյն Ստեփանոսի Նախայվկային և ամ սբ քոց Տր Յս Քս Աձ եղիցիս պայապան ծռս Այ (երկու սմ. բաց տեղ է թողնըված) գրեցաւ համայիլս ի թվականիս ՌՃՀԱ (1722) ամէն: Հայր (մեր):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Համայիլի կռնակի վերջի ծայրում գրված է)
Մեծագույն սիրով այս համայիլը նվիրում եմ Մայր Աթոռի ձեռագրատանը:
Վիկտոր Մնացականի Պետրոսյանց
Ապարան
12 հունիսի 1982 թ.:

№ 552
ԽԱՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 143:—*Պրակները՝* 14, յուրաքանչյուրը 10-ական թերթից է, բացի Ա և ԺԴ՝ 4, ԺԱ՝ 6:—*Մեծությունը՝* 30.5×20.6×1.6 սմ.:—*Նյութը՝* գծավոր, միջակ բարակությամբ թուղթ:—*Կազմը՝* սև լաթակազմ ստվարաթուղթ: Երեսին քնարի մի նկար կա կպած (14×10 սմ.), իսկ դրա ներքևում մի պիտակի վրա ձեռագիր գրված է «Տեսր Ցարութեան հարցերու»:—*Պահպանակները՝* սկզբում և վերջում կա մեկական բաց կանաչավուն բարակ մի թուղթ:—*Վիճակը՝* լավ:—*Գրությունը՝* միասյուն:—*Դատարկ թղթերը* 1ա—3բ, 4բ, 100ա—104բ, 107բ—110բ, 130բ—134բ:—*Տողերը՝* 21—22:—*Գծումները՝* թուղթն ինքնին գծավոր է:—*Գիրը՝* շղագիր և հայկական նոր խաչեր:—*Զարդագրություն՝* չունի:—*Գրիչը՝* Հակոբ քահանա Մխձյան (1889—1954):—*Ժամանակը՝* 10 մայիսի 1931 թ.:—*Վայրը՝* Մարսել (Ֆրանսիա):—*Ծանոթագրություն՝* ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիրը բովանդակում է Հարության 113 հարցերի հայկական նոր խաչերով նոթագրությունն և տեքստը):
Թթ. 5ա—99բ.—Հարության հարցերի խաչերն ու տեքստը:
Թթ. 105ա—107ա.—Ցանկ գրուածոց:
Թթ. 111ա—130ա.—Եռաձայն Ս. Պատարագ (ըստ Լևոն Չիլինկիրեանի):

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ОКТЯБРЬ 1982)

1. Проповедь Верховного Патриарха в Кафедральном соборе 10 октября 1982 г. (стр. 3—5).

2. Слово Католикоса Всех Армян Вазгена I, произнесенное 11 октября 1982 г., по случаю открытии «Сокровищницы Алек и Мари Манукян» (стр. 6—9).

3. Слово Верховного Патриарха, произнесенное по случаю открытии памятник-родника, посвященный памяти Хримяна Айрика 12 октября 1982 г. (стр. 10—11).

4. Прием в Совете Министров Армянской ССР 4 октября 1982 г. (стр. 12).

5. Торжества в первопрестольном св. Эчмиадзина, посвященные открытиям здании «Сокровищница Алек и Мари Манукян» и памятник-родника, увековечивающий память Хримяна Айрика 2—13 октября 1982 г. (стр. 16—28).

6. Сообщение из армянской патриархии Иерусалима. О посещении армянского Высокопреосвященного Патриарха Иерусалимского Егишэ в Ватикан по приглашению Святейшего Папы Римского Иоанна—Павла II с 30 сентября по 7 октября 1982 г. (стр. 29).

7. Завершающее годовое торжество Духовной семинарии армянской патриархии Иерусалима и 50-летнее священническое юбилейное торжество Его Высокопреосвященного Патриарха Егишэ 19 июня 1982 г. (стр. 30—31).

8. Церковная жизнь. Сведения о совершенных литургиях, проповедей, церковных мероприятиях в Эчмиадзинском Кафедральном Соборе за октябрь месяц (стр. 32—33).

9. Представители ВСЦ в первопрестольном св. Эчмиадзине 12—15 октября 1982 г. (стр. 34—35).

10. **Архимандрит Акоп Глнджян.** Наследственное грехопадение Адамово. (Исследование) (стр. 36—39).

11. **Священник Карен Ктанян.** Краткие проповеди (стр. 40—42).

12. Епархиальная жизнь. а) Вести из армянской епархии Румынии. б) Священническое рукоположение в армянской западной епархии в США (стр. 43—44).

13. Отрывок из лекции архиепископа Шагэ Аджемяна, произнесенный в Экуменическом центре св. Иринея в Лионе в мае 1982 г. (стр. 45—49).

14. Совещательная встреча «Карловы Вары—5» в г. Принстоне 5—8 октября 1982 г. (стр. 50—51).

15. **Виктор Петросянц.** Армянские женщины—защитницы отечественной культуры в 13—19 вв. (Исследование) (стр. 52—56).

16. **Володя Абрамян.** Арменоведческие издания в Армении и за рубежом (стр. 57—58).

17. **Нубар Микаэлян.** Список новых рукописей, полученные в первопрестольном св. Эчмиадзине (№№ 550—552). (стр. 59—60).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(OCTOBER 1982)

1. The sermon of His Holiness in the Holy Cathedral, 10th october 1982 (pages 3—5).

2. The speech of His Holiness spoken on the occasion of the inauguration of „Alex and Mary Manoogian" museum, 11th october 1982 (pages 6—9).

3. The speech of His Holiness spoken on the occasion of the inauguration of monument-fountain devoted to the memory of deceased Catholicos Mekertich Khrimian, 12th october 1982 (pages 10—11).

4. Reception given by the Armenian SSR's government on the 4th october 1982 (page 12).

5. Festivities in the Holy See devoted to the 27th anniversary of the enthronement of His Holiness, to the inauguration of the new building of „Alex and Mary Manoogian" museum and of the monument-fountain which perpetuates the memory of the deceased Catholicos Mekertitch Khrimian, 2—13th october 1982 (pages 16—28).

6. Communiqué of Jerusalem Armenian Patriarchate, concerning the invitation of His Holiness Pope John Paul II to His Beatitude Yeghishe, the Armenian Patriarch of Jerusalem, from 30th september to 7th october 1982 (page 29).

7. The feast at the end of the school year of the Theological Academy of Jerusalem Armenian Patriarchate and jubilary festivity devoted to the 50th anniversary of His Beatitude Patriarch Yeghishe's priesthood, 19th june 1982 (pages 30—31).

8. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of Church festivities in the Holy See during the month of october (pages 32—33).

9. The representatives of the World Council of Churches in the Holy See, 12—15th october 1982 (pages 34—35).

10. **Reverend Hagop Kelendjian**—About the problem of trasmission of the original sin (study) —(pages 36—39),

11. **Father Garen Gedanian**—Short sermons (pages 40—42).

12. Diocesan life.

(A) News from the Armenian diocese of Roumania.
(B) Ordination of priest in the western diocese of the Armenians in the United States of America (pages 43—44).

13. An extract from Archbishop Shahe Ajamian's lecture delivered in the st. Irenius Ecumenical Center on may 1982 (pages 45—49).

14. "Karlovy Vary V" consultative meeting in Princeton, 5—8th october 1982 (pages 50—51).

15. **Victor Petrossiantz**—Armenian ladies who have been defenders of the Armenian culture, XIII—XIX centuries (pages 52—56).

16. **Volodya Abrahamian**—Armenological publications in Armenia and abroad (pages 57—58).

17. **Nubar Mikaelian**—The list of the newly received manuscripts of the Mother See of Holy Etchmiadzin under the numbers of 550—552 (pages 59—60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(OCTOBRE 1982)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 10 octobre 1982 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pages 3--5).

2. Allocution de Sa Sainteté prononcée le 11 octobre 1982 à l'occasion de l'inauguration du Musée „Alex et Marie Manoukian" (pages 6—9).

3. Allocution de Sa Sainteté prononcée le 12 octobre 1982 à l'occasion de l'inauguration du monument-fontaine érigé dans l'enceinte de Saint-Etchmiadzine à la mémoire du bienheureux catholicos Mekertitch Khrimian (pages 10—11).

4. Le 4 octobre, réception au Conseil des Ministres de la R.S.S. d'Arménie (page 12).

5. Festivités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées au 27e anniversaire de l'intronisation de Sa Sainteté et à l'inauguration du Musée „Alex et Marie Manoukian" et du monument-fontaine érigé à la mémoire du feu catholicos Mekertitch Khrimian. Les festivités ont eu lieu du 2 au 13 octobre 1982 (pages 16—28).

6. Communiqué du patriarcat arménien de Jérusalem concernant la visite officielle au Vatican de Sa Béatitude Yéghiché Tertérian, patriarche des Arméniens de Jérusalem, du 30 septembre au 7 octobre 1982 (page 29).

7. Le 19 juin 1982, festivités au patriarcat arménien de Jérusalem consacrées à la clôture de l'année scolaire 1981—1982 de l'Académie de théologie dudit patriarcat et au 50e anniversaire de l'activité sacerdotale de Sa Béatitude le patriarche Yéghiché Tertérian (pages 30—31).

8. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'octobre 1982 (pages 32—33).

9. Visite au Saint-Siège d'Etchmiadzine des représentants du Conseil Oecuménique des Eglises du 12 au 15 octobre 1982 (pages 34—35).

10. **Père Hakob Kelendjian**—„Sur le problème de la transmission du péché originel„ (étude)—(pages 36—39).

11. **Père Karen Kelendjian**—„Brefs sermons" (pages 40—42).

12. Vie diocésaine:

a) Nouvelles du diocèse des Arméniens de Roumanie.

b) Ordination de prêtre dans le diocèse des Arméniens des U.S.A. (région occidentale) —(pages 43—44).

13 Extrait d'une conférence de l'archevêque Chahé Ajamian faite en mai 1982 à Lyon, dans le Centre Oecuménique Saint-Irénée (pages 45—49).

14. Réunion consultative „Karlovy Vary V" tenue à Princeton du 5 au 8 octobre 1982 (pages 50—51).

15. **Victor Pétrossiants**—„Les femmes arméniennes connues en Arménie aux XIIIe—XIXe siècles sous le nom de „défenseurs du patrimoine culturel des Arméniens„ (étude)—(pages 52—56)

16. **Volodia Abrahamian**—„Publication des études arménologiques en Arménie et dans la Diaspora" (pages 57—58).

17. **Noubar Mikaélian**—Index des manuscrits reçus à Saint-Etchmiadzine et placés sous les numéros 550—552 (pages 59—60).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում 3
Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը՝ արտասանված «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» բացման առթիվ 6
Վեհափառ Հայրապետի խոսքը՝ արտասանված Խրիմյան Հայրիկի աղբյուր-հուշարձանի բացման առիթով 10
Ընդունելություն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդում 12
Հանդիսություններ Մայր Աթոռում՝ նվիրված «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» նորակառույց շենքի և Խրիմյան Հայրիկի հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշարձանի բացմանը 16
Հաղորդագրություն Երուսաղեմի հայոց Պատրիարքարանի 29
Ամավերջի հանդես Երուսաղեմի հայոց Պատրիարքության Ալեքս և Մարի Մանուկյան Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի և 50-ամյա քահանայական հոբելինական հանդիսություն Նորին Ամենապատվություն Տ. Եղիշե Սրբազան Պատրիարք Հոր 30
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 32
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ներկայացուցիչները Մայր Աթոռում . . 34
ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԼԸԸՆՃՅԱՆ—Ադամական ժառանգական մեղքը 36
ԿԱՐԵՆ ՔԱՀԱՆԱ ԿՏԱՆՅԱՆ—Կարճ քարոզներ 40
Թեմական կյանք 43
Էկումենիկ դասախոսություն Լիոնում 45
«Կարլովի Վարի Ե» խորհրդակցական հանդիպումը Պրինստոնում 50
ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ—Հայրենական մշակույթի պաշտպան հայ կանայք . . . 52
Հայագիտական հրատարակություններ 57
Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 59
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է տպագրության 22.11.1982 թ.: Ստորագրված է տպագրության 11.01.1983 թ.
Տպագրական 4 մամուլ+13 ներդիր, թուղթ 60×84 1/8 պատվեր 892:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1982 թ.